ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

# ԱԿՈՒՆՔ

## ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

### ԹԻՎ 1 (22)

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հիմնադրման 25-ամյակին նվիրված
«**Անկախության առաջնեկը**» խորագրով հանրապետական
ուսանողական գիտաժողովի զեկույցներ

ԵՐԵՎԱՆ 2020
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Դերձյան Հայկ, Զաքարյան Սեյրան, Ճուղուրյան Արմեն,
Մանուչարյան Հենզել, Մովսիսյան Արտակ, Միքայելյան Միքայել,
Միքայելյան Վլադիմիր, Մուրադյան Սամվել, Սարգսյան Սուրիկ,
Քեռյան Գարիկ

© ԵՊՀ հրատարակչություն, 2020 թ.
© Հեղ. խումբ, 2020 թ.

YEREVAN STATE UNIVERSITY
IJEVAN BRANCH

# A K U N Q

## SCIENTIFIC-METHODOLOGICAL JOURNAL

NUMBER 1 (22)

YEREVAN 2020
YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF ASHOT NERSISYAN

EDITORIAL COUNCIL

Derdyan Hayk, Jughuryan Armen, Manucharyan Henzel, Movsisyan Artak, Mikaelyan Mikael, Mikaelyan Vladimir, Muradyan Samvel, Qeryan Garik, Sargsyan Surik, Zakaryan Seyran,

© YSU Publishing House 2020
© Author group, 2020

# ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ՝ ՕՏԱՐ ԶԱՎԹԻՉՆԵՐԻ ԴԵՄ ՄՂԱԾ ԱԶԳԱՅԻՆ - ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**ԶԱՐՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
ՎՊՀ պատմության ամբիոնի մագիստրանտ
E-mail: khachatryan.zaruhi@mail.ru

Հայաստանն իր պատմության ընթացքում շարունակ ենթարկվել է հարևան ժողովուրդների՝ հռոմեացիների, պարսիկների, թուրքերի, արաբների, մոնղոլների, թուրքմենական և այլ ցեղերի նվաճումներին, ինչպես նաև՝ թատերաբեմ է հանդիսացել հարևան երկրների միջև մղված պատերազմներում: Այդ նվաճումների հետևանքները՝ ավերածություններ, հարստահարումներ, հարկահանություն, թալան, աղջկահավաք, զաղթ, պանդխտություն, արտացոլվել են հայ գեղջուկ երաժշտության մեջ: Հայկական ժողովրդական երգերում իրենց արտացոլումն են գտել, սակայն, ոչ միայն հայ ժողովրդին պատուհասած աղետները, այլև՝ օտար զավթիչներին դիմակայող հերոսների պայքարը, նրանց փառաբանումը, հավատը հաղթանակի նկատմամբ: Դրանցում իրենց պարզ արտացոլումն են գտել նաև երկրում տիրող սոցիալական անհավասարությունը, տնտեսական վիճակը, հասարակական և իրավական հարաբերությունները:

Հայ գեղջուկ երգաստեղծության բոլոր ժանրերի երգերում նահապետական գյուղի կյանքը բովանդակ ընդգրկումով և ամենայն բազմազանությամբ է արտացոլված. չկա մի երևույթ, մի իրադարձություն՝ սոցիալական, պատմական, քաղաքական, կենցաղային և այլն, որին ժողովուրդը չարձագանքի:

Օտար զավթիչների դեմ մղված ազգային-ազատագրական պայքարի ընթացքը, հետևանքները, հերոսների փառաբանումը, ժողովրդի կրած զրկանքները իրենց ճշմարիտ արտացոլումն են գտել ժողովրդական երգաստեղծության, հատկապես, երկու ժանրերում՝ էպիկական երգերում և դյուցազներգերում, որոնք կառուցվածքային և բովանդակային որոշ նմանությունների համար միասնաբար կոչվում են վիպերգեր:

Վիպերգերի հնագույն շերտերը կապված են հեթանոսական Հայաստանի դիցաբանության հետ: Առաջին տեղեկությունները վիպերգերի մասին գտնում ենք Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի աշխատություններում և այլ աղբյուրներում. դրանք Հայկի ու Բելի, Արամի, Տորքի, Արայի ու Շամիրամի մասին առասպելներն են, որոնք հայ ժողովրդի՝ օտար զավթիչների դեմ մղած ազգային-ազատագրական պայքարի առաջին գեղարվեստական արտացոլումներն են:

Վիպերգերի բազմազան տեսակներ գոյություն ունեն՝ դյուցազնական, հեքիաթային-ֆանտաստիկ, կենցաղային-արկածային և այլն. սակայն, անկախ վիպերգի տեսակից, նրա բովանդակությունը հայրենիքի անկախության ու ազատության գաղափարն է: Վիպերգերի բովանդակությունը ժողովրդի քաղաքական կյանքի ու պատմության արտացոլումն է, և դրանց գոյությունը ժողովրդի երգաստեղծության մեջ նրա մշակույթի հնագույն լինելու, բարձր մակարդակ ունենալու վկայությունն է[1]:

Վիպերգերին պատկանող էպիկական երգերի ու դյուցազներգերի օրինակներ ժողովրդական երգաստեղծության մեջ քիչ են պահպանվել. «Իմացողներին մատով են ցույց տալիս»[2], - գրում է Կոմիտասը:

Վիպերգեր կատարել են թե՛ գեղջուկները և թե՛ գուսանները, սակայն կարելի է վստահորեն ասել, որ այդ ժանրը գեղջկական ծագում ունի, քանի որ վիպերգերի բովանդակությունը ժողովրդի քաղաքական կյանքի և պատմության արտացոլումն է՝ դեպի սեփական ճակատագիրն ունեցած վերաբերմունքով:

Վիպերգերից մեզ են հասել «Կարոս խաչը», «Մոկաց Միրզան» և «Սասունցի Դավիթ» էպոսից երաժշտականացված հատվածներ:

«Սասունցի Դավիթ» էպոսի ձայնագրյալ հատվածները և «Կարոս խաչը» էպիկական երգեր են, իսկ «Մոկաց Միրզան»՝ դյուցազներգ. դրանք մեկը մյուսից տարբերվում են իրենց թեմատիկայով:

«Սասունցի Դավիթ» էպոսից մեզ են հասել հետևյալ ձայնագրյալ հատվածները. «Տո խրոխպեր» (գրառումը Սպ. Մելիքյանի), «Մսրա Մելիքի երգը» (գրառումը Կոմիտասի), իսկ մյուս հատվածները «Զողորմին»-եր են և «Ափսոսանք»- ներ, որոնց մեջ երախտագիտությամբ հիշատակվում են Դավթի նախնիները:

Նշված երգերում վառ արտահայտված է ժողովրդի վերաբերմունքը իր ազատության համար կռվի գնացող հերոսների նկատմամբ. դրանցում ի հայտ է գալիս, մի կողմից, ժողովրդի վախը՝ բազմաքանակ զորքի դեմ միայնակ կռվի գնացող հերոսի կյանքի համար («Ափսո՛ս, հազա՛ր ափսոս, գնաց էն տղեն…»), մյուս կողմից՝ հավատը հաղթանակի նկատմամբ:

Եթե ազգային-ազատագրական պայքարը ուղիղ իմաստով է արտացոլված էպոսի ձայնագրյալ հատվածներում, ապա «Կարոս խաչ» էպիկական երգում այն արտացոլված է այլաբանորեն: Այստեղ այլազգի բռնակալներին դիմակայող ժողովրդի ուժը մարմնավորում է կարոս խաչը՝ նույն խորագիրը կրող վիպերգի հերոսը: Երգի բովանդակությունը, որ տրված է այլաբանորեն, հետևյալն է. քառասուն հոտաղներ հավաքվում են խորհրդի, թե ինչպես ազատվեն բռնակալների հալածանքներից: Որոշում են մի խաչ սարքել, չորս գլուխները խնձորել (խնձորի ձև տալ, գնդել): Խաչը դնում են հովտում և խնդրում Աստծուն շնորհ պարգևել

[1] **Բրուտյան Մ.,** *Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն*, Երևան, 1982, էջ 184:
[2] **Կոմիտաս,** *Հոդվածներ և ուսումնասիրություններ*, Երևան, 1941, էջ 27:

նրան: Աստծո զորությամբ խաչը դառնում է արծաթ, իսկ խնձորները՝ ոսկի: Խաչը թռչում, գնում է կարոսի (նեխուրի, քարավուզի) ածուի մեջ, որից և իր անունն է ստանում: Նա գիշերները լուսավորում է շուրջը, իսկ ցերեկները՝ հով անում գյուղի վրա: Քահանայի առաջարկությամբ խաչը տանում են տաճար: Այնուհետև գյուղի զզիրը խաչի զորության մասին հայտնում է Քուրդ Պարոնին՝ ասելով, թե խաչը վայել է Պարոնի դիվանին, բայց ոչ հայոց ազգին: Հայերին առաջարկում են խաչը տալ Պարոնին, իսկ փոխարենը խոստանում մեծ քանակությամբ ոսկի ու արծաթ. հայերը մերժում են առաջարկը: Բռնի ուժով խաչը գրավելու համար Պարոնի ուղարկած զորքերը հենց խաչի զորությամբ անխնա կոտորվում են[1]:

«Կարոս խաչ» երգը, ըստ Մ. Աբեղյանի, շատ հին է և ունի կրոնական ծագում: Նա գրում է. «Թե որքան հին է այդ երգը, կարելի չէ որոշել: Բայց դրա բովանդակության առաջին մասն իբրև կրոնական զրույց գտնում ենք արդեն Ստեփանոս Օրբելյանի պատմության մեջ (13-րդ դարում)»[2]:

Հնարավոր է, որ երգը հորինել է ժողովուրդը ավելի վաղ, իսկ հետո այն օգտագործել է եկեղեցին. պնդել այս մասին դժվար է ՝ պատմական տվյալներ չլինելու պատճառով: Կասկածից դուրս է, որ երգը հետագայում տարածվել է ժողովրդի մեջ, ստացել գյուղական-ժողովրդական երանգ ու մեկնաբանություն. այսպես, հոգևորականությունը խաչի մեջ մարմնավորել է իր հզորությունը և քարոզել այն միտքը, թե եկեղեցուն դիպչողը ինքը կվնասվի, իսկ ժողովուրդը խաչի մեջ տեսել է իր ուժը և անպարտելիությունը և դրա համար էլ ընդունել է երգը, դարձրել իր սեփականությունը և երկար դարեր պահել հիշողության մեջ[3]:

Դյուցազներգերի բովանդակությունը պատմական դեպքերին մասնակից հերոսների կյանքի ու սխրանքների նկարագրությունն է, նրանց գովքն ու փառաբանումը: Ի դեպ, գովերգվող հերոսի սոցիալական ծագումն այստեղ ոչ մի դեր չի խաղում: Ժողովուրդն ամենայն ակնածանքով մեծարում է թե՛ ազնվական, թե՛ ոչ ազնվականական ծագում ունեցող ռազմիկներին ու սպարապետներին, որոնք հայրենիքն օտար լծից ազատագրելու գործին են նվիրաբերել իրենց կյանքը:

Հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ դյուցազներգի վառ օրինակ է «Մոկաց Միրզան»: Պատմական ավանդությունների վրա հիմնված այս գովքում պատմվում է, թե ինչպես պարսիկ Կոլոտ փաշեն, իր մոտ հրավիրելով Մոկաց Միրզային, սպանում է նրան թունավոր դանակով: Երգի կրկնակը՝ «հազար ափսոս…» ներկայացնում է ժողովրդի սրտացավ վերաբերմունքը եղելության նկատմամբ[4]:

«Մոկաց Միրզա» և «Կարոս խաչ» երգերը, ըստ Սպ. Մելիքյանի, հորինվել են պատմական նույն ժամանակաշրջանում: Նա այդ մասին հետևյալն է գրում.

---

[1] **Բրուտյան Մ.,** նշվ. աշխ., էջ 187-188:

[2] **Աբեղյան Մ.,** Երկեր, հատոր Ա, Երևան, 1966, էջ 502:

[3] **Բրուտյան Մ.,** նշվ. աշխ., էջ 189:

[4] Նույն տեղում:

«Միջնադարյան հայկական իշխանությունների անկումից հետո Հայաստանը գտնվում է պարսկական և օսմանյան տիրապետությունների ներքո: Ահա այդ շրջանում առաջ է գալիս կես-վիպական, կես-պատմական պոեմը, որը իր մեջ արտացոլում է ստեղծված այդ նոր հարաբերությունները. այդ պայմաններում մի կողմից հրապարակ են գալիս միրզան, քյոխվան, մելիքը, զգիրը, հայ գյուղը իր քահանաներով և սրբատեղիներով, մյուս կողմից՝ Կոլոտ Փաշեն, Քյուրդ Պարոնը, նրանց հրոսակները»[1]: Այդ շրջանին են պատկանում «Մոկաց Միրզա»-ն և «Կարոս խաչ»-ը, որոնց մեջ վառ կերպով արտացոլված են այս հարաբերությունները:

Թե՛ էպիկական երգերը և թե՛ դյուցազներգերը, գեղարվեստական ընդհաքացմամբ, քաղաքական-պատմական դեպքեր ու անցքեր արտացոլող երգեր են, չնայած որ զուրկ են պատմական կոնկրետությունից: «Այս երգի մեջ, - գրում է Մ Աբեղյանը «Մոկաց Միրզա» երգի մասին,- պատմված դիպվածը չենք կարող համեմատել ոչ մի իրապես պատահած եղելության հետ միայն այն պատճառով, որ պատմական հիշատակություններ չունենք: Մոկացիների մեջ պահված է մի ավանդություն, որ այդ Միրզան եղել է Մոկաց աշխարհի իշխաններից, գուցե և վերջինը: Նա նստել է Մալաքավայում, որի ավերակներն էին ցույց տալիս 19-րդ դարում, և տեր էր եղել բերդին»[2]:

Այսպիսով, ժողովրդական առասպելների ու էպոսի հիմքով ստեղծված էպիկական երգերի բովանդակությունը ազգային-ազատագրական պայքարն է, իսկ դյուցազներգերինը՝ այդ պայքարին զինվորագրված հերոսների գովերգումն ու փառաբանումը:

Ժողովրդական երգաստեղծության մյուս ժանրը, որտեղ արտացոլված են ազազային-ազատագրական պայքարի դրվագներ, պատմական երգերի ժանրն է: Այստեղ խմբավորված են ժողովրդական երգաստեղծության այն բոլոր նմուշները, որոնք արտացոլում են պատմական դեպքեր ու իրադարձություններ: Դրանք մեզ ծանոթացնում են ամենատարբեր ժամանակների որոշակի սոցիալ-պատմական երևույթների հետ, գաղափար տալիս ժողովրդական զանգվածների՝ դեպի այդ երևույթներն ունեցած վերաբերմունքի մասին: Այս իմաստով պատմական երգերի ճանաչողական արժեքը չափազանց մեծ է[3]:

Ի տարբերություն էպիկական երգերի ու դյուցազներգերի, պատմական երգերում նկարագրվում են իրական դեպքեր:

Պատմական երգերի հիմնական թեման բողոքն է օտար զավթիչների դեմ, հայրենիքը ազատագրելու երազանքը: Դրանցում նկարագրվում են պատերազմների արհավիրքներն ու դրանց հետևանքները, ժողովրդի հույզերն ու ապրումները («Սասուն նստեր, անտեր կուլար», «Ալաշկերտցիք բարձան գացին» «Հասան Ղալեն բարձր սար է»):

---

[1] **Մելիքյան Սպ.,** Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Երևան, 1935, էջ 9:

[2] **Աբեղյան Մ.,** նշվ. աշխ., էջ 501:

[3] **Բրուտյան Մ.,** նշվ. աշխ., էջ 201:

Պատմական թեմատիկա ունեցող երգ-զովքերը ծնունդ են պատմական իրադարձությունների հաջող ելքի.

Հաղթությունով առաջ անցավ, քանի շահարներ անց կացավ,

Կայսեր պալատն ուրախացավ, դրախտական Տեր-Ղուկասով:

(Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, **«Գովեստ զեներալ Տեր-Ղուկասյանին»**)

Օտար զավթիչների արշավանքների հետևանքով ժողովրդին պատուհասած ամենամեծ աղետներից մեկը՝ ջահել հարսներին ու աղջիկներին առևանգելու, թուրքական ու պարսկական հարեմները տանելու երևույթը մեծ հուզականությամբ է արտացոլված պատմական երգերում, որի վառ օրինակը Խնուս գյուղում Կոմիտասի գրառած «Շոյխ Սաֆո» երգն է.

Խնուս գեղի մեջտեղը խրամայեց մեծ շեյխը.

Թորկեց զիս լաց ու շիվան, խարսը տարավ մեծ բեխը:

Տարան, տարան իմ յարը, տարան իմ մեկ ու ճարը,

Խաբար արեք Սարոյին՝ տարան խորոտ Մարոյին:

(Կոմիտաս, Ազգ. ժող. 1, N83, **«Շեյխ Սաֆո»**)

Պատմական երգերի մոտիվները տարբեր են. դրանցում օտար լծի դեմ բողոքից, հերոսների փառաբանումից զատ արտացոլված են նաև սոցիալական մոտիվներ:

«Խղճուկի լացը» երգում դրսևորվել են երկրի ներսում գոյություն ունեցող հակամարտ դասակարգերի հարաբերությունները, ներքին ճնշողների դեմ ուղղված պայքարը՝

Ծանտրցուցեր է մեր վրեն խարճ-խարաջ,

Խեղդերին պարտքընտեր, քյաֆիր խարկախան:

(Ա. Բրուտյան, Ռամկական մրմունջներ, **«Խղճուկի լացը»**)

Ընդհանրապես, սոցիալական անհավասարության թեման, ժամանակի ընթացքում խորանալով, դառնում է բնորոշ գիծ ժողովրդական երգաստեղծության՝ գրեթե բոլոր ժանրերի համար: Այն դրսևորվել է, հատկապես, աշխատանքային երգերի ժանրում: Սոցիալական անհավասարության մոտիվներ պարունակող տղամարդկանց աշխատանքային երգերից (հոռովելներ) է Վալդաբլուր գյուղում Կոմիտասի գրառած «Լոռվա գութաներգում»՝ որպես ենթատեքստ (Վարենք, արտ անենք, շեկլիկ ջան, չարին դարդ անենք:) Սակայն ոչ միշտ են սոցիալական անհավասարության մոտիվները հանդես գալիս բուն բովանդակության ենթաթեմայի դերում: Նրանք երբեմն պարզապես կազմում են աշխատանքային երգի բուն բովանդակությունը.

Չութ ջան, իմ բեռը շատ ա,

Աչքս երգեն բոյիդ զգած ա.

Վարի, ցե՛լ արա, հացը բո՛լ արա.

Ումուդս դուն ես, բանըս դժար ա…

Քյոխվեն էկավ, տե՛ս, իմ օրը սև ա:

(Ալավերդու շրջանում գրի առած երգերից, 1963, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ)

Կանանց աշխատանքային երգերում նույնպես արտացոլվել են սոցիալական հարաբերությունները.

Խնոցի ջան, խնոցի, կարագ հանի, խնոցի,

Որ կարագ տանք էն զոռբին, թանը մնա մեր քյորփին.

Զոռբեն չգա մեզ նեղի, մարալ կովը չտանի:

(Ալավերդու շրջանում գրի առած երգերից, 1963, ՀՍՍՀ ԳԱ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ)

Պատմական երգերն արագորեն արձագանքում են ժամանակի հրատապ խնդիրներին, փոխում իրենց թեմատիկան՝ հասարակական հարաբերություններին ու պատմական իրադարձություններին համապատասխան (քաղաքացիական կռիվներ, դաշնակների փախուստ, Հոկտեմբերյան հեղափոխություն և այլն)[1].

Գնա, գնա հետիդ եմ,

Բալշնիկի պուճուր նորը նորել ա,

Ալ խնձոր եմ, գոտիդ եմ,

Դաշնակցական իզով-թոզով կորել ա:

(Սպ. Մելիքյան, Ազգ. ժող. 1, N100, **«Բալշնիկի պուճուր նորը»**)

Պատմական երգերի մեծ մասի կյանքը կարճ է. դա պայմանավորված է երգում արտացոլված իրադարձությունների տևականությամբ, այն ժամանակահատվածով, որի ընթացքում տեղի է ունեցել պատմական դեպքը, զարգացել իրադարձությունը, հասել ավարտի: Երգային այս ժանրի միջոցով սերունդներն արտահայտել են ժամանակի պատմական դեպքերն ու անցքերը, դրսևորել իրենց վերաբերմունքը դրանց նկատմամբ: Պատմական երգերից ամեն մեկն արտացոլում է քաղաքական մի իրադարձություն, իսկ ժանրն ամբողջությամբ՝ ողջ պատմությունը ընթացքի մեջ[2]:

Ազգային-ազատագրական պայքարը, բացի վիպերգերից ու պատմական երգերից, իր արտացոլումն է գտել նաև օրորների ժանրում: Օրորների մեջ կան այնպիսի երգեր, որոնց բովանդակությունը անմիջական կապ չունի երեխային քնեցնելու հետ. դրանց մեծ մասի թեմատիկան պատմական է.

Նանա բալիկս, նանա, չուր քնես, չեմ խանա,

Փախեր, եկեր ենք Վանա, տաճկու ձեռքեն դիվանա:

Թուրք թորգեց մեզ յան բուրիկ, կտրեց հայուն բյուր-բյուրիկ,

Թոփ արավ քո քաջ խերիկ, հեսիր գնաց քո քուրիկ:

(Սպ. Մելիքյան և Ա. Տեր-Ղևոնդյան, Շիրակի երգեր, N97, **«Նանա բալիկ»**)

---

[1] **Բրուտյան Մ.,** նշվ. աշխ., էջ 206:

[2] Նույն տեղում:

Հատկանալի է, որ նման երգերը երգվել են տղա երեխաներին քնեցնելիս, որոնց հետ են կապել թե՛ ընտանիքի և թե՛ երկրի ու ժողովրդի ծանր ու լուրջ հոգսերի լուծումը[1]:

Ստորև բերվող երգի մեջ տղա երեխային քնեցնող մայրը պատմում է թշնամու ձեռքով սպանված հոր մասին՝ երեխայի մեջ մանուկ հասակից վրեժ սերմանելով.

Դա շապիկն է այն մարդու քաջ, բալա ջան,
Որ քեզի հայր նա կոչվում էր, օրո՛ր, օրո՛ր, բալա ջան:
Արյունոտ էր, կարմիր ներկված, բալա ջան,
Արտասուքով ես լվացի, օրո՛ր, օրո՛ր, բալա ջան:
Դե՛հ, մեծացիր, շուտ բոյ քաշիր, բալա ջան,
Չարի արյուր խմել սովրիր, օրո՛ր, օրո՛ր, բալա ջան:
(Ս. Դեմուրյան, Քնար, N18, **«Քրդուհու երգը»**)

Այսպիսով, օտար տիրապետության դեմ ազգային-ազատագրական պայքարն իր վառ արտացոլումն է գտել հայկական ժողովրդական երգաստեղծության մեջ, որի՝ մեզ հասած նմուշների միջոցով կարելի է հայ ժողովրդի պատմաքաղաքական կյանքի իրադարձությունների ժողովրդական մեկնաբանություններին ծանոթանալ, ինչպես նաև, ժամանակակցին, տվյալ դեպքում, ժողովրդին դիտելով որպես ականատեսի՝ ուսումնասիրել տարբեր պատմական ժամանակաշրջանների սոցիալ-տնտեսական և հասարակական-իրավական հարաբերությունները:

**Բանալի բառեր** - գեղջուկ, վիպերգեր, էպոս, դյուցազներգեր, պատմական երգեր, սոցիալական հարաբերություններ:


## РЕЗЮМЕ

В этой статье мы изучили древние образцы армянского народного песнеписания, отражающие исторические события, социально-экономические, социально- правовые отношения, большинство из которых забыты. Мы изучили эпические песни, эпопеи, исторические песни, колыбельные и рабочие песни, в которых мы можем рассматривать исторические и политические события с точки зрения армянского народа, поскольку приведенные примеры здесь рассказываются самим армянским народом, и главный герой в них- армянский народ.



## SUMMARY

In this article, we studied ancient samples of Armenian folk songwriting, reflecting historical events, socio- economic, social and legal relations, most of which are forgotten. We studied epic songs, epopees, historical songs, lullabies and working songs in which we can consider historical and political events from the point of view of


[1] **Բրուտյան Մ.**, նշվ. աշխ., էջ 240:

the Armenian people, since the examples presented here are told by the Armenian people themselves, and the main characters in them are the Armenian people.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աբեղյան Մ., Երկեր, հատոր Ա, Երևան, 1966:
2. Բրուտյան Մ., Հայ ժողովրդական երաժշտական ստեղծագործություն, Երևան, 1982:
3. Կոմիտաս, Հոդվածներ և ուսումնասիրություններ, Երևան, 1941:
4. Մելիքյան Սպ., Ուրվագիծ հայ երաժշտության պատմության, Երևան, 1935:

# ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1920-1930ԹԹ.

**ՄԵՐԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
պատմության բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
E-mail: mery.karapetyan.88@mail.ru

1920թ. Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատումով նոր փուլ էր սկսվում դարավոր հայ մշակույթի զարգացման համար: Խորհրդայնացումից անմիջապես հետո իշխանությունները երկրում իրականացրին մշակութայնին շինարարություն, մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին կրթական համակարգը բարեփոխելու և այն արմատապես վերակառուցելու ուղղությամբ: Կրթական համակարգը վերակառուցելով և այն ավելի կատարյալ դարձնելով իշխանությունները հետապնդում էին երեք նպատակ. առաջինը ՝մեծահասակ բնակչության մեջ վերացնել անգրագիտությունը, երկրորդը ՝ կրթել նոր սերնդին , երրորդ ՝ հասարակությանը դաստիարակել կոմունիստական գաղափարներով: [1]

1920 թ. դեկտեմբերի 17-ին Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի և լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի հավանությամբ ընդունվում է մի դեկրետ, ըստ որի՝ պետականացվում էին կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները), որոնք մինչ այդ պատկանում էին հոգևոր հաստատություններին, երկրում պետական լեզու էր ճանաչվելու հայերենը, արգելվելու էր հոգևոր առարկաների դասավանդումը , կրոնական բնույթի ծեսեր անցկացնելը, վերացվելու էին մասնավոր դպրոցները և դպրոցական հին պաշտոնների փոխարենն ստեղծվելու էին ժողկրթբաժիններին ենթակա դպրոցական մշտական խորհուրդներ: [2]

Հանրապետությունում դպրոցական աշխատանքները կազմակերպելու և վերահսկելու նպատակով 1920թ. դեկտեմբերի 12-ին ստեղծվում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը: Հայհեղկոմը 1921թ. փետրվարին ընդունում է <<Միանական աշխատանքային դպրոցի կանոնադրության>> մասին որոշումը, որի համաձայն ՝վերացվում է դպրոցների բաժանումը տարականի ու միջնակարգի, փոխարենը ստեղծվում են <<Ա>> և <<Բ>> աստիճանի դպրոցներ: [3]

1920-ական թվականներին Նոր Բայազետի գավառը կրթական ցածր մակարդակի վրա էր գտնվում: Գավառում կրթական մակարդակը բարձրացնելու

[1] Տե՛ս **Հարությունյան Հ.** <<Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.>> 2015. էջ 211:
[2] Տե՛ս <<ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու>>, (1920թ.նոյեմբերի թչ-1921թ. Փետրվարի 18), Էջմիածին 1921 էջ 7, 16-17, 43:
[3] Տե՛ս <<Հայոց պատմություն>>, Հ. IV, Գիրք Առաջին , էջ 659:

նպատակով ձեռնարկվեցին միջոցառումներ՝ 1921թ. հունվարին ստեղծվեց հեղկոմի լուսավորության բաժանմունքը, որի կառավարիչ նշանակվեց Սարգիս Բոշնաղյանը: 1921թ. փետրվարին Նոր Բայազետի գավառում գործում էին 40 դպրոցներ, որոնցից 39-ը <<Ա>> աստիճանի, իսկ 1-ը ՝<<Բ>> աստիճանի (դպրոցը համալրված էր շուրջ 3453 աշակերտներով ):

1921թ. փետրվարի 13-ին սկիզբ առած հակախորհրդային շարժումը ՝ Փետրվարյան ապստամբությունը, ճնշվեց իշխանությունների կողմից և երկրում Խորհրդային իշխանությաունը վերահաստատվեց: Այդ ժամանակամիջոցում դպրոցների մեծ մասը վերածվել էր զորանոցների, իսկ դպրոցական գույքը համփշտակվել էր կամ օգտագործվել էր որպես վառելափայտ: [1] Երկրում իրավիճակը վերահսկելու նպատակով անհրաժեշտ էր որոշակի միջոցառումներ ձեռք առնել, քանի որ իշխանությունները հասկանում էին, որ նման պայմաններում կրթությունը զարգանալ չի կարող և անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական ու գործնական մի շարք բարելավումներ: 1921թ. հոկտեմբերին ՀԽՍՀ ժողկոմխորհը , ընդունեց մի դեկրետ, ըստ որի <<Քաղաքացիական և զինվորական կազմակերպություններից պահանջվում էր ազատել զբաղեցրած դպրոցական շենքերը՝ դրանք հանձնելով լուսժողկոմատի տնօրինությանը>>:[2]

Տեղին է նշել, որ երկիրը գտնվում էր շատ ծանր սոցիալ-տնտեսական վիճակում և չունենալով համապատասխան միջոցներ իշխանությունները չէին կարող ֆինանսավորել մշակութային օջախները, ինչի արդյունքում գյուղական համայնքներում գյուղացիները ինքնահոժար կերպով միջոցներ էին տրամադրում դպրոցներին, որպեսզի համայնքում զարգանա կրթամշակութային կյանքը, կարելի է ասել նույն պատկերներ և քաղաքային դպրոցներում քանի որ դպրոցականները պարտավոր էին ուսման վարձ վճարել:

Հանրապետությունում և նաև Նոր Բայազետի գավառում առաջընթաց է նկատվում կրթության ոլորտում: Կրթամշակութային կյանքի զարգացմանը կային նպաստող մի շարք պայմաններ ՝երկրում մեծ թափ ստացավ դպրոցաշինությունը, ինչը, որպես այդպիսին, առաջնահերթ լուծում պահանջող հարցերից մեկն էր, մեծ նշանակություն ունեցան նաև, դպրոցներում որակյալ մասնագետների առկայությունը, դպրոցական ուսումնական ծրագրերի ու առարկաների վերափոխումը և համապատասխանեցումը նոր ժամանակների ոգուն և այլն:

Երկրում կրթամշակութային կյանքի առաջնթացի մասին է վկայում այն փաստը, որ 1924թ. օգոստոսի 26-ին Կ. Ստեփանյանը Նոր Բայազետի գավառի գործադիր կոմիտեի նիսում նշում է, որ 1923-1924 թթ. ուսումնական տարվա ըն-

---

[1] Նույն տեղում, էջ 659:

[2] Նույն տեղում, էջ 659-660:

թացքում գավառում գործել է 50 դպրոց , նախորդ ուսումնական տարվա 41-ի համեմատությամբ:[1]

Սակայն, մշակույթի զարգացումը ուղեկցվում էր նաև անդառնալի կորուստներով: Հայ ժողովուրդը , տվյալ ժամանակահատվածում բազմաբնույթ արհավիրքների բախվեց, ինչի արդյունքնել եղավ ժողովրդի ծանր սոցիալական վիճակը, նման պակմաններում բոլոր երեխաները չէ, որ կարող էին օգտվել կրթություն ստանալու իրավունքից, քանի որ ծնողները չունեին համապատասխան միջոցներ երեխային ուսման տալու համար:

1923-1924 թթ. Նոր Բայազետի գավառում բնակվող մոտ 15936 երեխաներից դպրոց հաճապում էին 3863-ը (պետք է նշել , որ դպրոց չհաճախող երեխաների թիվը իրականում ավելի մեծ էր):[2]

1924-1925թթ. Նոր Բայազետի գավառի կրթամշակութային կյանքում որոշակի տեղաշարժեր արձանագրվեցին: Հանրապետության տարածքում ընդլայնվեց դպրոցական ցանցը և ստեղծվեց կրթության լայն համակարգ (Նոր Բայազետում դպրոցները ավելացան ևս 6-ով): Ըստ վիճակագրակն տվյալների գավառում գործում էր 62 դպրոց, որից 56-ը առաջին աստիճանի, 1 երկաստիճանի, 1 գյուղատնտեսական, 2 մանկապարտեզ:[3] Տեղին է նշել,որ գավառում գործում էին երկու տիպի դպրոցներ ՝ պետական և մասնավոր: Վերջինիս դեպքում դպրոցները բոլորովին պիտանի չէին օգտագործման համար, զրեթե նույն պատկերն էր նաև պետական դպրոցներում: Այսինքն, անհրաժեշտություն էր դարձել դպրոցների վերանորոգումը:

Հանրապետությունում կրթամշակութային կյանքի զարգացամնը կային խոչնդոտող, մի շարք, հանգամանքներ դրանցից էին ՝ դպրոցականների անապահովվածությունը և զրենական պիտույքների բացակայությունը, դպրոցի ներսում նյութատեխնիկական կահավորանքի բացակայությունը: Գավառում դպրոցների նման անմխիթար վիճակը, բացասական ազդեցություն էիր ունենում կրթության որակի վրա:

Սակայն, կրթական համակարգի զարգացման ճանապարհին ամենից լուրջ խնդիրներից մեկը դա դպրոցում որակյալ մասնագետների բացակայությունն էր: 1924-1925 թթ. ուսումնական տարում դպրոցները համալրված էին հին ու ցածրորակ մասնագետներով, 141 ուսուցիչներից միայն 5-ը ուներ բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն, 60-ը միջնակարգ, 76-ը միջնակարգից ցածր:[4] Կրթության որակը, որոշ չափով, բարձրացնելու նպատակով ՝իշխանությունները ձեռնարկեցին որոշակի միջոցառումներ, կազմակերպվելու էին դասընթացներ դպրոցում աշխատող մանակվարժական կադրերի համար:

---

[1] Տե՛ս **Հարությունյան Հ.** <<Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.>> 2015. էջ 216:
[2] Նույն տեղում, էջ 216:
[3] Նույն տեղում, էջ 217-218:
[4] Տե՛ս **Հարությունյան Հ.** <<Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.>> 2015. էջ 220-221:

Հատկանշական է,  որ 1927-1929 թթ. ուսունական տարիների ընթացքում Հանրապետության ողջ տարածքում և նաև Նոր Բայազետի գավառում կրթամշակության կյանքում արձանագրվեցին դրական տեղաշարժեր ինչի արդյունքում էլ՝ կրթական համակարգը որակական առումով նոր  աստիճանի վրա բարձրացավ: Երկրում ընդլայնվեցին դպրոցական ցանցերը և նաև վերանորոգվեցին հները: Տեղին է նշել, որ դպրոցաշինության գործում իրենց ավանդն են ունեցել գյուղական համայնքները և նաև անհատ բարերերները:  Դպրոցները համալրվում են հիմնականում միջին որակավորում ունեցող մասնագետներով, նյութատեխնիկական միջոցներվ, մեծ քանակներով տպագրվում են դպրոցականների համար նախատեսված դասգրքերը , այս ամենը, ի վերջո հանգեցնում է նրան, որ 1928 թ. ՀԽՍՀ ժողկոմի համաձայնությամբ  լուսժողկոմատը մշակում է Հայաստանում ընդհանուր պարտադիր ուսուցման անցնելու հեռանկարային ծրագիրը , որը պետք է կենսագործվեր 1930-1931 թթ. ուսւոմնական տարվանից:[1] Չնայաց իրենց լուծումը ստացան դպրոցի զարգացմանը խոչնդոտող մի շարք հարցեր , սակայն դեռ կային բազմաբնույթ խնդիրներ , որոնք հրատապ լուծում էին պահանջում: Այդպիսի  խնդիրներից էին՝ դպրոցում բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասը, դպրոցում անհրաժեշտ քանակությամբ դասագրքերի պակասը, դպրոցական շենքերը, որոնք չէին համապատասխանում տվյալ ժամանակաշրջանի օր օրի աճող պահանջներին:

Խորհրդային իշխանությունները գիտակցում էին, որ կրթամշակութային կըանքը բարելավելու և նոր մակարդակի վրա բարձրացնելու համար առաջին հերթին անհարաժեշտ է մեծահասակ բնակչության մեջ վերացնել անգրագիտությունը: Ըստ 1922թ. ժողովրդական վիճակագրության ՝ կատարած ուսումնասիրությունների արդյունքում  պարզ դարձավ, որ ՀԽՍՀ բնակչության կազմում անգրագետների տեսակարար կշիռը 83,1 %  էր[2]:  Նոր Բայազետի գավառում այս ցուցանիշը հասնում էր մինչև 85% -ի[3]:

1921 թ. սեպտեմբերի 21-ին Հանրապետության ժողկոմխորը ընդունեց դեկրետ՝ ՀԽՍՀ-ում անգրագիտությունը վերացնելու մասին[4]:  Դեկրետը բաղկացած էր մի շարք կետերց, առաջին հերթին՝ բնակչության մեջ 15-50 տարեկան հասկան ունեցող բոլոր անգրագետ ու կիսագրագետ քաղաքացիները պետք է հատուկ դպրոցում գրագիտություն սովորեին, երկրորդ ՝քաղլուսվարը և նրա տեղական մարմինները իրավունք էին ստանում հրավիրել հանձնաժողով, որի անմիջական ղեկավարության ներքո պետք է ստեղծվեին հատուկ կենտրոններ (լիկկայաններ), որոնց նպատակը պետք է լիներ հատուկ դասընթացներ կազմակերպել հասարակության

---

[1] Տե՛ս <<Հայոց պատմություն>>, Հ. IV, Գիրք Առաջին , էջ 662:

[2] Տե՛ս **Ղազախեցյան Վ.** <<Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը>>, էջ 325, <<Հայոց պատմություն >>, Հ.IV Գիրք Առաջին էջ. 663:

[3] Տե՛ս **Հարությունյան Հ.** <<Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.>> 2015. էջ 234:

[4] Տե՛ս <<ՀԽՍՀ դեկրետների և որոշումների հավաքածու>>, Էջմիածին, 1921, էջ 63:

մեջ՝ անգրագիտությունը վերացնելու նպատակով[1]: Անգրագիտության վերացման նպատակով իշխանությունների կողմից իրագործված միջոցառումերը, ունեցան դրական ազդեցություն երկրում կրթական համակարգի զարգացման վրա:

1926 թ. մարդահամարների տվյալներով Նոր Բայազետի գավառում մեծահասակ բնակչության մեջ գրագետների թիվը հասնում էր 14141-ի, այսինքն ընդհանուր բնակչության 13,92%-ը[2]:

Հանրապետությունում 1929թ. ամռանը, ստեղծվում է արտակարգ հանձնաժողով, որը պետք է լուրջ քայլեր ձեռնարկեր՝ բնակչության մեջ անգրագիտության վերացման և գրագիտության բարձրացման ուղղությամբ[3]:

Չնայաց գործադրված ջանքերին, պետք է նշել, որ Նոր Բայազետի գավառում 1920-1930 թթ.անգրագիտության վերացման հարցը ամբողջությամբ չլուծվեց:

Նոր Բայազետի գավառում 1920-1930 թթ. ընթացքում զարգացում ապրեց և նոր հունի մեջ մտավ թատերական կյանքը: Հատկանշական է, որ թատերական արվեստի զարգացման գործում մեծ ավանդ ունեցան տեղական իշխանությունները և անհատ բարերարները: Նոր Բայազետի գավառում զարգացման առումով իրար համընթաց քայլում էին թատերական արվեստը և կինոն: 1929թ. Նոր Բայազետի գավառում գործում էր երեք շրջիկ և մեկ ստացիոնար կինո[4]: Խորհրդային իշխանությունները վարում էին իրենց շահերից բխող քաղաքականույուն, ինչնել, բնականաբար, իր ազդեցությունն էր ունենում թատրոնի և կինոյի վրա:

Այսպիսով, Նոր Բայազետի գավառում գործում էր 6 գրադարան, յուրաքանչյուր շրջանում մեկը, սակայն այս ամենով հանդերձ բնակչության մեջ գրագիտությունը ցածր մակարդակի վրա էր գտնվում:

**Բանալի բառեր** - Սարգիս Կասյան, Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ, Նոր Բայազետ, Փետրվարյան ապստամբություն, Սարգիս Բոշնաղյան, Խորհրդային իշխանություններ, ժողովրդական վիճակագրություն, սոցիալական վիճակ, Կրթամշակութային կյանք. Հայհեղկոմ:

## РЕЗЮМЕ

В настоящей статье представлена позитивная и негативная динамика в культурно-образовательной жизни провинции Нор Баязет в период с 1920 по 1930 гг.

В 1920-е годы провинция Нор Баязет находилась в крайне низком образовательном уровне.

[1] Տե՛ս նույն տեղում:
[2] Տե՛ս **Հարությունյան Հ.** <<Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.>> 2015. էջ 239:
[3] <<Հայոց պատմություն >>, Հ. IV Գիրք Առաջին էջ. 664:
[4] Տե՛ս **Հարությունյան Հ.** <<Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.>> 2015. էջ 248:

С целью повышения уровня образования провинции были приняты меры, в результате которого в Республике Армения и в провинции Нор Баязет был достигнут определенный рост в области образования.

В провинции Нор Баязет с 1920-1930 гг. пережила развитие и вошла в новую колею театральная жизнь. В соответствии с последним переживало свое развитие также кино.

**SUMMARY**

This article covers the period 1920-1930 in the province of New Bayazet. Positive and negative developments in educational and cultural life. In the 1920s the province of New Bayazet was at a low educational level. Measures have been taken to raise the level of education in the province as a result of which progress is being made in the Republic of Armenia and in the province of New Bayazet in the field of education. In the province of New Bayazet, the 1920s and 1930s saw the development and theatrical life entered a new direction. The cinema was also developing in line with the latter.

# ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1918Թ. ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ

**ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ**
ԵՊՀ ԻՄ Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ ԻՄ
E-mail: natella.gri@gmail.com
**ԼԱՐԻԴԱ ՂԱԶՈՒՄՅԱՆ**
ԵՊՀ ԻՄ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետ, Պատմություն կրթական
ծրագրի 4-րդ կուրսի ուսանողուհի
E-mail: laridaghazumyan@gmail.com

20-րդ դարի առաջին կեսն Անդրկովկասի ժողովուրդների, առավելապես հայ ժողովրդի պատմության բեկումնային ժամանակաշրջաններից մեկն է: 1918 թ. մայիսը ճակատագրական դարձավ հայի համար. օրակարգում հայ ժողովրդի լինել-չլինելու հարցն էր դրված:

1918թ. Անդրկովկասում տեղի ունեցած իրադարձությունների արմատները պետք է փնտրել հոկտեմբերյան հեղաշրջման մեջ: 1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջումը, կարող ենք ասել, որ դարակազմիկ իրադարձություն դարձավ նաև Հայաստանի համար: Հարյուրամյա հեռավորությունից անգամ հնարավոր չէ օբյեկտիվ գնահատական տալ, բայց հեղաշրջման հետևանքներն իրենց նշանակությամբ երկակի էին մեզ համար:

Արևմտյան Հայաստանի հարցը, որը կարծես թե լուծման ճանապարհով էր գնում, Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո մտավ փակուղի: Ռուսական զորքերն Արևմտյան Հայաստանի տարածքում էին արդեն, բայց հեղաշրջումից անմիջապես հետո ընդունվեց հաշտության մասին դեկրետը: Դա իրենից ենթադրում էր խաղաղություն առանց անեքսիաների, առանց կոնտրիբուցիաների: Սրա արդյունքում ռուսական զորքերը դուրս եկան Արևմտյան Հայաստանի տարածքից, և, ընդհանրապես, ռազմաճակատը քայքայվեց: Սա բացասական հետևանքներ ունեցավ: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ թուրքական զորքերն առանց ջանք թափելու վերանվաճեցին Արևմտյան Հայաստանը և պատրաստվեցին ներխուժել Արևելյան Հայաստան: Գլխավոր նպատակը Մեծ Թուրանի պետության ստեղծումն էր և 1915թ. իրենց կիսատ թողած «սև գործը» շարունակելը: Ծրագրված վերջնարդյունքը Բաքվի գրավումն ու այնտեղ խորհրդային իշխանությունը տապալելն էր լինելու: Բարեբախտաբար, բազմադարյա պատմություն ունեցող հայ ժողովուրդը, որ մշտապես պայքարել է անկախ պետականության վերականգնման կամ պահպանման համար, իսկ այժմ իր առջև ֆիզիկական գոյության հարցն

ուներ դրված, ավելի ուժեղ գտնվեց և 1915թ. այս կողմ արմատավորված զոհի հոգեբանությունը տեղի տվեց: Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումը ռուսական հեղաշրջման հետևանքով առաջացած քաղաքական տատանումների հետևանք էր: Բայց Հանրապետության հռչակման համար միայն քաղաքական իրադարձությունները հիմք չծառայեցին: Քաղաքականից զատ կար նաև ռազմական գործոնը: Քաղաքական գործընթացներին զուգահեռ տեղի էին ունենում նաև ռազմական գործընթացներ, ինչի մասին կխոսենք:

Այժմ անդրադառնանք 1918թ. Անդրկովկասում հաստատված աշխարհաքաղաքական իրավիճակին: Անդրկովկասի, ինչպես նաև Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում մեծ տեղաշարժեր առաջացրին Առաջին աշխարհամարտը և ողջ Անդրկովկասը ցնցած Հոկտեմբերյան հեղաշրջումը:

1917թ. Հոկտեմբերյան հեղաշրջման ազդեցությունը չսահմանափակվեց միայն Ռուսաստանի տարածքով: Դրա ազդեցությունը կրեց նաև միջազգային իրադրությունը: Առաջին աշխարհամարտը դեռ ընթացքի մեջ էր, երբ խորհրդային իշխանությունը հաշտության կոչեր հղեց, պատրաստակամություն հայտնեց կնքել հաշտության պայմանագիր՝ մասնավորապես Թուրքիայի հետ: Թուրքիան օգտվեց ստեղծված իրադրությունից:

Կովկասյան ռազմաճակատի լուծարումը, որը սկսվել էր տակավին Փետրվարյան հեղափոխության ժամանակ, իր շարունակությունը ստացավ և մեծ չափերի հասավ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: 1917թ. նոյեմբերին սկսվել էր Կովկասյան ճակատից ռուսական բանակի հեռացումը, ինչն էլ հանգեցրեց Անդրկովկասում պայթունավտանգ իրավիճակի հասունացմանը, որն առաջին հերթին դեպի Անդրկովկաս թուրքական արշավանքով էր արտահայտվելու: Ռուս զինվորները շտապում էին օր առաջ հասնել Ռուսաստան:

Դժվարին կացության մեջ կրկին հայ ժողովուրդն էր հայտնվել: Անհրաժեշտություն էր առաջացել նոր զինված ուժեր կազմել՝ երկրամասը պաշտպանելու համար, առաջին հերթին հենց թուրքական ներխուժման վտանգից: Երիտթուրքերի ղեկավարող շրջանակները պահը հարմար համարեցին իրենց նպատակներին հասնելու համար, ինչի մեջ մտնում էր Կովկասի, Ղրիմի, Միջին Ասիայի նվաճումը: Ադրբեջանցիները թուրքերի միակ հենարանն էին Անդրկովկասում: Նրանց կուսակցությունը՝ «Մուսաֆաթը», 1918թ. սկզբին Անդրկովկասում քաղաքական մեծ կշիռ ունեցող կուսակցություններից էր[1]:

Օրակարգի հարց դարձավ ազգային զորամասերի կազմակերպումը Անդրկովկասում: Դրա արդյունքում ձևավորվեց Հայկական կորպուսը: 1917թ. նոյեմբերի 16-ի Մոգիլյովյան զորակայանի կարգադրությամբ ի կատար ածվեց Հայկական կորպուսի ձևավորումը[2]: Կորպուսի հրամանատարությունը հանձնվեց նշա-

[1] Տե՛ս **Սիմոնյան Հր.,** Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, էջ 292-293:
[2] Տե՛ս **Կարապետյան Մ.,** Հայաստանը 1912-1920 թվականներին, Երևան, 2003, էջ 191:

նավոր զինվորական գործիչ, գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանին: Հայկական բոլոր զորամասերի ընդհանուր կոմիսար դարձավ Դրոն: Մեկ այլ հրամանով՝ Կովկասյան ռազմաճակատի զորքերի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար գեներալ Լեբեդինսկու կարգադրությամբ կազմվում է արևմտահայերից բաղկացած մի խոշոր զորամիավորում: Ստեղծված Հատուկ հայկական հավաքական ջոկատի հրամանատար նշանակվեց Անդրանիկ Օզանյանը, ում շնորհվեց գեներալ-մայորի աստիճան: Հատուկ հավաքական ջոկատի կազմում էին նաև Սեպուհի, Պանդուխտի և այլոց գլխավորած կամավորական ջոկատներն ու այլ զորամիավորումներ:

Թովմաս Նազարբեկյանին Անդրանիկի ենթարկվելը ձևական բնույթ էր կրում[1]: 1917թ. նոյեմբերի 15-ից Անդրկովկասում գործում էր Անդրկովկասյան կոմիսարիատը՝ երկրամասի գործադիր իշխանությունը, որին 1918թ. փետրվարի 10-ից փոխարինեց Անդրկովկասյան Սեյմը (օրենսդիր մարմին, պառլամենտ): Կազմվեց ժամանակավոր կառավարություն վրաց մենշևիկ Ե. Գեգեչկորու գլխավորությամբ: Թուրքական բանակը, որն ամբողջ Արևմտյան Հայաստանն էր վերագրավել, ավելի հարմար պահ չէր կարող ունենալ, ինչպիսին Անդրկովկասի անջատումը կարող էր լինել:

Թուրքերի համար, միանշանակ, առաջնահերթը պանթուրքիստական ծրագրի իրականացումն էր: Բայց Թուրքիան բավական ուժեր չուներ Անդրկովկասը գրավելու համար: Նրա դաշնակից Գերմանիան էլ ուներ իր շահերը և չէր խրախուսում Թուրքիային: Առաջին համաշխարհային պատերազմը դեռ չէր ավարտվել: Գերմանիայի համար հիմնական թշնամիներ մնում էին Անգլիան ու Ֆրանսիան: Ինչպես գերմանական բանակի հրամանատար Լյուդենդորֆն էր նշում, Էնվերի խնդիրն էր Անգլիայի դեմ պայքարելը ամենից առաջ Պաղեստինի ճակատում: Բայց Էնվերը առաջնահերթ մտածում էր Կովկասի մասին: Դրա համար էլ Գերմանիայի ու Թուրքիայի շահերը բախվեցին[2]:

Առաջին համաշխարհային պատերազմն ավարտվեց 1918թ. կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով: Այդ պայմանագրով Անդրկովկասը դուրս էր մնացել դաշնագրի սահմաններից: Բայց այն շարունակում էր մնալ թուրքական հետաքրքրության կենտրոնում: Թուրքական նոր հարձակման վտանգը իրականությունից հեռու չէր, ինչը իր հետ բերելու էր մի նոր ցեղասպանություն, այս անգամ Արևելյան Հայաստանում: Թուրքիան դեռ չէր հրաժարվել իր որդեգրած քաղաքականությունից՝ Պանթուրքիստական ծրագրից: Այդ ծրագիրը իրագործելու ճանապարհին Անդրկովկասն էր կանգնած, որը գրավելուց հետո Թուրքիան կներթափանցեր Միջին Ասիա: Բրեստ-Լիտովսկի պայմանագրի չընդունումը անդրկովկասյան երկրների կողմից Թուրքիայի ու նրա դաշնակից Գեր-

---

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 194:

[2] Տե՛ս **Թուրշյան Հ.,** նշվ. աշխ., էջ 72:

մանիայի ջրաղացին  ջուր էր լցնում: Այժմ Թուրքիան ազատորեն կարող էր մուտք գործել Անդրկովկաս:

Անդրկովկաս բարեհաջող մտնելու դեպքում երիտթուրքական կառավարությունը հույս ուներ երկրի ներսում խուսափել պոռթկումներից  և վերականգնել կորսված հեղինակությունը: Էնվեր փաշան պարծենում էր, որ Ասիայում Թուրքիան այն դերը կունենա,  ինչ որ  Գերմանիան Եվրոպայում[1]:

Անդրկովկասի՝ Ռուսաստանի անբաժան մաս կազմելը կարող էր թուրքերի առջև ծառացած լուրջ խոչընդոտ լինել: Տվյալ պահին նրանց առաջնային նպատակը Անդրկովկասը անկախ և Ռուսաստանից վերջնականապես բաժանված տեսնելն էր: Սեյմն էլ իր հերթին ցանկանում էր վերջ դնել պատերազմին և խաղաղության դաշն կնքել թուրքերի հետ, իսկ դրա համար Թուրքիան պահանջում էր, որ Անդրկովկասը հայտարարի իր անկախությունը Ռուսաստանից[2]: Դա արվեց, ինչը հնարավորություն տվեց Թուրքիային տարածքային նվաճումների նոր ճանապարհ բացել:

Տարածաշրջանում իշխող 3 քաղաքական ուժերը՝ վրաց-մենշևիկները, հայ-դաշնակցականները և կովկասյան թուրքերը (ադրբեջանցիներ), բացահայտ շահերի ներհակություններ ունեին, ինչը ցայտուն կերպով սկսեց դրսևորվել հատկապես ռազմական գործողությունների վերսկսման պայմաններում: Ադրբեջանցիները, ոգեշնչված թուրքերի հաջողություններից, բացահայտ կերպով ցույց էին տալիս իրենց դաշնակցի՝ Թուրքիայի կողմ լինելը և կողմ էին Անդրկովկասի՝ Ռուսաստանից անջատմանը: Նույնը մի փոքր վերապահումով կարող ենք ասել վրաց-մենշևիկների մասին, մասնավորապես այն առումով, որ սկզբնական շրջանում նրանք տատանվում էին[3]:

ՀՅԴ-ն աննպատակահարմար և չափազանց վտանգավոր էր համարում Անդրկովկասի բաժանումը Ռուսաստանից և պնդում էր Ռուսաստանի անբաժան մաս մնալու անհրաժեշտությունը[4]:

1918թ. ապրիլի 9(22) - ին Անդրկովկասյան Սեյմը հռչակեց իր անկախությունը և ազդարարեց Անդրկովկասի Դաշնային Դեմոկրատական Հանրապետության ստեղծումը: Իրավիճակի նման լուծումը ամենից առաջ անընդունելի էր հենց ՀՅԴ-ի համար, բայց Անդրկովկասի անկախությունը կատարված փաստ էր:

Դեռ հունվար ամսին Կովկասում թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան  նամակով մի քանի անգամ դիմել էր Կովկասյան բանակի կոմիսար Օդիշելիձեին: Այդ նամակներում հայերը մեղադրվում էին մուսուլման բնակչության նկատմամբ իրականացրած բռնությունների մեջ: Ի պատասխան դրա քայլեր

---

[1] Տե՛ս **Սարգսյան Ե.,** Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, Երևան, 1964, էջ 343:

[2] Տե՛ս **Քաջազնունի Հ.,** նշվ. աշխ., էջ 20:

[3] Տե՛ս **Քաջազնունի Հ.,** նշվ. աշխ., էջ 21:

[4] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ 4, Երևան, 2010,  էջ 12:

իրականացվեցին, որպեսզի բռնությունները դադարեցվեն: Չնայած դրան՝ հունվարի 30-ին Վեհիբ փաշայից ստացվեց հեռագիր՝ թուրքական զորքերի հարձակման անցնելու մասին, որում ասվում էր, որ այդ քայլը ոչ թե ռուսական կողմի դեմ ուղղված թշնամանք է, այլ մուսուլման բնակչությանը բռնություններից զերծ պահելու նպատակ ունի: Միաժամանակ Վեհիբ փաշան հայտարարել էր, որ նրանք առաջ կշարժվեին այնքան, մինչև հանդիպեն ռուսական զորքերին: Իրականում բռնությունները սոսկ առիթ էին լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու համար, որի համար հարմար պահի էին սպասում: Կովկասյան ճակատից ռուսների հեռացումը եղավ այդ հարմար պահը: Թուրքերը շատ լավ գիտակցում էին, որ ռուսական զորքերի Կովկասից հեռանալուց հետո Անդրկովկասում նոր ձևավորված զորամասերը դեռ ամրապնդված չեն և ուժեղ դիմադրություն ցույց տալ չեն կարող: Դրան գումարած նաև այն անմիաբանությունը, որ կար Անդրկովկասյան ժողովուրդների միջև: Ճանապարհն, ըստ էության, բաց էր թուրքերի համար, որովհետև Կովկասյան ճակատը անխնամ, լքված վիճակում էր. ռուսական զորքերը հեռացել էին: Թուրքերն առանց դժվարության իրար հետևից գրավեցին Երզնկան, Բաբերդը, Էրզրումը, Սարիղամիշը:

Ապրիլի 9-ին թուրքերը սկսեցին հարձակումը Կարսի ուղղությամբ: Կարսի բերդում կար 6000 զինվոր: Կարսը կարող էր պաշտպանվել, բայց թե ինչքան կտևեր այդ պաշտպանությունը, չենք կարող ասել: Խնդիրն այն է, որ Կարսի ճակատագիրը ոչ թե Կարսի պաշտպանների, այլ անդրկովկասյան կառավարության լիդերների ձեռքում էր: Բացի այդ, Բրեստում Կարսի գրավման մասին կետ չկար: Ինչպես Կարսի, այնպես էլ Բաթումի ու Արդահանի հարցը պետք է հանրաքվեով անցկացվեր: Կարսի անկումը անմիջականորեն վտանգում էր Ալեքսանդրապոլը: Ալեքսանդրապոլը գրավվեց մայիսի 15-ին, որն առնչվում էր Ալեքսանդրապոլ--Ջուլֆա երկաթուղուն, և որին տիրելը կարող էր դառնալ Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի գրավման բանալին:

Տարածաշրջանը, սակայն, միայն Թուրքիայի ուշադրության կենտրոնում չէր: Այդտեղ բախվում էին Գերմանիայի ու Թուրքիայի ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական շահերը: Շահերի բախումն ավարտվեց նրանով, որ 1918թ. ապրիլի 27-ին Կ. Պոլսում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր: Դրանով Անդրկովկասը բաժանվեց Թուրքիայի ու Գերմանիայի միջև ազդեցության գոտիների: Թուրքիային անցան գրաված հայկական բոլոր տարածքները, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Վրաստանն ու Ադրբեջանը հայտնվեցին Գերմանիայի հովանավորության ներքո[1]:

Ամենը տանում էր դեպի Անդրկովկասի քայքայում: Վրացիների թիկունքում գերմանացիներն էին, թաթարներն էլ չէին ուզում պատերազմել թուրքերի

[1] **Պետրոսյան Գ.,** Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. Հայոց անկախ պետականության կերտումը (1917թ. փետրվար-1918թ. հունիս), Երևան, 2018, էջ 95:

դեմ ու հաշտություն էին պահանջում: Բոլորի համար էլ պարզ էր, որ թուրքերի դեմ միայն հայերն էին կռվելու և ստիպված էին ամրագրել իրենց գոյության իրավունքը:

1918թ. ապրիլի 15(28)-ին Թուրքիան ճանաչեց Անդրկովկասի անկախությունը: Կողմերը համաձայնվեցին Տրապիզոնում ընդհատված բանակցությունները շարունակել Բաթումում: Բանակցությունները վերսկսվեցին մայիսի 11-ին: Թուրքական պատվիրակությունը գլխավորում էր Հալիլ բեյը, Անդրկովկասյանը՝ կառավարության նախագահ Չխենկելին: Հայաստանը ներկայացնում էին խնամատարության նախարար Հովի. Քաջազնունին և ֆինանսների նախարար Ալ. Խատիսյանը: Թուրքիան հանդես եկավ նոր անզիջում դիրքով և չէր պատրաստվում բավարարվել միայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Բացի Բաթումից, Կարսից ու Արդահանից, նրանք պահանջում էին նաև Ախալքալաքը, Ախալցխան, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Այդ պահանջները թուրքերը հիմնավորում էին մուսուլմանների անվտանգության ապահովման, դեպի Իրան զորք տեղափոխելու ու անգլիացիների դեմ պատերազմը շարունակելու պատրվակով[1]:

Մի կողմից Թուրքիան շարունակում էր բանակցությունները, մյուս կողմից՝ ռազմական գործողությունները: Դա միջոց էր Անդրկովկասին սեփական պայմանները թելադրելու համար, որն էլ իր դրական արդյունքն ունեցավ թուրքերի համար: Մայիսի 15-ին Վեհիբ փաշան վերջնագիր ներկայացրեց հանձնել Ալեքսանդրապոլն ու երկաթուղին: Դրան հետևեցին մայիսյան հերոսամարտերը:

Ալեքսանդրապոլ-Երևան-Սարդարապատ ուղղությամբ գործող թուրքական զորամիավորման մեջ մտնող ուժերի թիվը, որոշ տվյալների համաձայն, չէր անցնում 4000-5000 հոգին: Թուրքերի վերջնանպատակը Թիֆլիսն ու Բաքուն էին, առաջին հերթին Բաքուն:

Մայիսի 19-ին սկսվեց թուրքական առաջխաղացումը դեպի Սարդարապատ-Երևան: Նույն օրը նրանք մտան Արարատյան դաշտ: Թուրքական հարձակման հետևանքով փախստականների հոսքը դեպի Երևան շատացել էր: Արաքս կայարանը, որը Սարդարապատից մի քանի կմ էր հեռու, մայիսի 20-ին գրավվեց: Վիճակը հատկապես տագնապալից էր մայիսի 21-ին: Թուրքերը արդեն մոտեցել էին Սարդարապատ գյուղին, ինչն էլ Երևանում ու մերձակա գյուղերում խառնաշփոթ էր առաջացրել: Այդ օրը մարտեր սկսվեցին Սարդարապատի մոտ, գյուղն ու կայարանը հանձնվեցին թուրքերին: Գևորգ Ե Սուրենյանցը վճռականորեն տրամադրված էր չլքելու Մայր տաճարը: Հենց սա էլ ստիպեց Երևանյան ջոկատին Մովսես Սիլիկյանի գլխավորությամբ մայիսի 21-ին դիմադրություն ցույց տալ հակառակորդին: Թուրքերը հետ քաշվեցին: Դա ոգևորեց զորքին ու բնակչությանը: Սկսեցին նոր խմբեր ներկայանալ զենքով ճակատ մեկնելու համար: Մայիսի 22-ին սկսվեց Սարդարապատի հերոսամարտը: Սարդարապատի զո-

[1] Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ 4, էջ 19:

րախմբավորման հրամանատարը գնդապետ Դանիել Բեկ Փիրումյանն էր: Հակահարձակման անցած, հիմնականում ղարաբաղցիներից բաղկացած գնդի հրամանատարն էր Պողոս Բեկ-Փիրումյանը: Այդ գնդին արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը «Մահապարտների գունդ» անունն էր տվել: Մայիսի 22-26-ը ընթացած մարտերում թուրքերը փորձեցին հետ գրավել կորցրած դիրքերը, սակայն չստացվեց և նահանջեցին դեպի Գյումրի: Ընդհանուր առմամբ, Սարդարապատի մոտ թուրքերը կորցրին 3500 մարդ: Երևանին կրկնակի վտանգ էր սպառնում Բաշ-Ապարանի ճակատից: Մարտերը տևեցին մինչև ամսի 29-ը և ավարտվեցին հայկական ուժերի հաղթանակով:

Բաշ-Ապարանից հետո ծանր իրավիճակ էր տիրում Ղարաքիլիսայում: Հայկական ուժերը Դիլիջան էին նահանջել. այնտեղ էին գտնվում Նազարբեկյանն ու Գլխավոր շտաբը: Թուրքերը դեպի Ղարաքիլիսա էին շարժվում, որոնց համար այն ուներ չափազանց կարևոր նշանակություն: Սարդարապատի հաղթանակը ոգեշնչեց բոլորին և Ղարաքիլիսան որոշեց դիմադրություն ցույց տալ: Մայիսի 25-ին սկսվեցին մարտերը, տևեցին մինչև մայիսի 28-ը: Մայիսի 26-27-ը դարձան կռիվների գագաթնակետը: Մայիսի 28-ի երեկոյան Ղարաքիլիսան ընկավ:

Անդրանիկի օգնության չհասնելը Ղարաքիլիսայի հայկական ուժերին համարվեց հայերի պարտության պատճառ: 1918թ. «Մշակ» թերթում տպվում է մի ակնարկ, որտեղ ասվում էր, թե ինչու Անդրանիկը Լոռու կողմից օգնության չհասավ: Ղարաքիլիսայի պարտությունից հետո մինչև այսօր էլ գտնվում են մարդիկ, ովքեր այդ պարտության համար Անդրանիկին են մեղադրում՝ նշելով, որ եթե նա Լոռու կողմից օգնության հասներ, պատերազմն այլ ելք կունենար: Բայց սրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնենք նաև այն փաստը, որ Անդրանիկը ստացել էր հրաման Դսեղում մնալու և երկաթգիծը պաշտպանելու: Սա մեղմացուցիչ հանգամանք է, եթե հաշվի առնենք, որ ուժային կառույցներում զինվորական բարձր հրամանատարության հրահանգները կատարվում են և ոչ քննարկվում: Այս պարագայում չենք ընդունում այն դատողությունը, թե Անդրանիկը ձևական էր ենթարկվում Թովմաս Նազարբեկյանին: Հակառակ դեպքում նա Լոռու կողմից օգնության կհասներ:

Պատմագիտական գրականության մեջ հիշատակելի են Վեհիբ փաշայի Ղարաքիլիսայի մասին ասված հետևյալ խոսքերը. «Դա ամենալուրջ ճակատամարտն էր, որին ես մասնակցեցի Դարդանելից հետո: Դուք ունեք այն բոլոր հատկանիշները, որոնք ձեզ կարող են դարձնել մի երկրորդ բուլղարացիներ: Ձեր գյուղացիները նույնքան ազնիվ են, խստաբարո և քաջ, քան այս վերջինները»[1]:

Թերևս Ղարաքիլիսայի նշանակությունն այն եղավ, որ բազմաթիվ հայորդիների թափած արյունով Թիֆլիսը փրկվեց:

---

[1] Տե՛ս **Կարապետյան Մ.,** նշվ. աշխ., էջ 230:

Դեռևս Սարդարապատից հետո թուրքերն անհանգիստ էին. ճակատամարտը տանուլ էր տրված: Անհրաժեշտ էր ռազմական անհաջողությունը չեզոքացնել դիվանագիտական հաջողությամբ: Դրա համար էլ արագացվեց բաթումյան գործընթացը: 1918թ. մայիսի 11-ին Բաթումում վերսկսվեցին ընդհատված բանակցություններն Անդրկովկասյան կառավարության և Թուրքիայի միջև: Հալիլ բեյի գլխավորած թուրքական պատվիրակությունն այժմ չէր բավարվելու միայն Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Պահանջվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանը, Կարսն, Արդահանն ու Բաթումը, այլև Ախալցխայի, Ախալքալաքի գավառները, Երևանի նահանգի արևմտյան մասը, Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթուղին: Թուրքերը սա բացատրում էին նրանով, որ Տրապիզոնի բանակցություններից հետո արյուն էր թափվել[1]: Ռազմական հաջողություններից ոգևորվելով՝ մայիսի 26-ին թուրքերը վերջնագիր ներկայացրին: Եռօրյա ժամկետում Անդրկովկասի կառավարությունը պետք է ընդուներ վերջնագիրը կամ մերժեր[2]:

1918թ. մայիսի 26-ը Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստի գումարման օրն էր: Նիստում որոշվեց. «Նկատի ունենալով, որ պատերազմի և խաղաղության հարցում ի հայտ են եկել արմատական տարաձայնություններ Անդրկովկասի անկախ Հանրապետությունը կազմող ժողովուրդների միջև, և դրանով իսկ անհնար է դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմը հաստատում է Անդրկովկասի(դաշնության) կազմալուծումը և վայր է դնում իր լիազորությունները»[3]: Նույն օրը հռչակվեց Վրաստանի անկախությունը, իսկ մայիսի 27-ին՝ Արևելակովկասյան Մուսուլմանական Հանրապետության (Ադրբեջան) անկախությունը: Սրանով իրավական ձևակերպում ստացավ Անդրկովկասի քայքայումը: Վրացիները կարողացան ճիշտ կողմնորոշվել և ընտրեցին Գերմանիայի հովանավորությունը: Կարելի է ասել, որ վրացիները փրկվեցին, իսկ Գերմանիան հաջողության հասավ շահադիտական տեսանկյունից: Հայերը նորից մենակ մնացին: Ստեղծված պայմաններում միակ ելքն անկախության հռչակումն էր:

Անկախության հռչակման որոշումն ընդունվեց մայիսի 28-ին[4]: Բաթումում հաշտության պայմանագրի կնքմանը Հայաստանը որոշեց մասնակցել անկախ կարգավիճակով:

1918թ. մայիսի 30-ին Ազգային խորհուրդը հայտարարեց. «Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր դրության հանդեպ՝ հայոց ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները հայ-

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** Հայաստանի Հանրապետություն, հատ. 1, էջ 29:
[2] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 30:
[3] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., հ 4, Երևան, 2010, էջ 14:
[4] Տե՛ս **Հովհաննիսյան Ռ.,** նշվ. աշխ., էջ 34:

կական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»[1]: Ինչպես տեսնում ենք, այս հայտարարությամբ հռչակվեց Հայաստանի անկախությունը, բայց հայտարարության մեջ անկախություն բառն անգամ չկար: Հանճարեղ երևույթ էր սա, որովհետև այդ ժամանակաշրջանում հստակ չէր, թե Հայոց Ազգային խորհուրդը որ գավառների նկատմամբ է տարածելու իր իշխանությունը: Պատահական չէ, որ հենց սրանից հետո էլ բռնկվեցին տարածքային վեճերը մեր անմիջական հարևանների հետ:

Նման ծայրահեղ ծանր պայմաններում ծնվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Անպատեհ, բայց շատ սպասված անկախություն…

1918թ. մեր պատմության ամենաբարդ ու հակասական ժամանակաշրջաններից մեկն է: Մայիսի 28-ի անկախությունն ինչ-որ տեղ նաև պարտադրված էր, որովհետև անկախության հռչակումը մեր անմիջական հարևանների դավադիր դիվանագիտության հետևանքն էր: Անդրկովկասյան կոմիսարիատը 1918թ. փոխարինվեց Անդրկովկասյան Սեյմով, որոնք ներկայացնում էին անդրկովկասյան երեք ժողովուրդներին: Բրեստ-Լիտովսկից հետո, որը կնքվեց 1918թ. մարտի 3-ին բոլշևիկների ու գերմանացիների միջև, բանակցություններ էին ընթանում նախ Տրապիզոնում, ապա Բաթումում՝ թուրքերի, անդրկովկասյան երեք ժողովուրդների ու գերմանացիների միջև: Սա բարդ քաղաքական պրոցես էր: Վրացիները չէին հաշտվում Բաթումը թուրքերին հանձնելու փաստի հետ: Տրապիզոնի բանակցությունները որևէ արդյունք չտվեցին: Բաթումում վրացիները հայերից գաղտնի պայմանագիր կնքեցին գերմանացիների հետ ու իրենց  հնարավորինս ապահովեցին: Մայիսի 26-ին հռչակեցին Վրաստանի անկախությունը: Հաջորդ օրը հռչակվեց Արևալակովկասյան մուսուլմանական հանրապետության ծնունդը:

Այս Հանրապետությունը մեր ժողովրդի պատմության մեջ կարևորագույն դեր է ունեցել: «Պարտադրված» բառը նախընտրում ենք փոխարինել «չնախատեսված» բառով, որովհետև, ճիշտ է, մեր քաղաքական գործիչները պատրաստ չէին անկախության, և անկախության հռչակումն էլ քաղաքական տարբեր դիրքորոշումների ու տեսակետների  բախման պայմաններում տեղի ունեցավ, այնուամենայնիվ, դարավոր կորստից հետո պետականության վերածննդի գաղափարը բոլորին էր համակել: Ի պատիվ այդ գործիչների՝ մեր պետությունը կանգնեց կայացման ճանապարհին: Այն ձեռքբերումները, որոնք ունեցանք առաջին Հանրապետության տարիներին, հետագայում շարունակվեցին խորհրդային տարիներին:

Մենք փոքր պետություն ենք, ուստի նման մարտահրավերներ մշտապես սպառնալու են մեզ, ինչպես նախկինում: Հետևաբար, մեր գլխավոր զենքը պետք է լինի համախմբվածությունը, միասնականությունը: Ինչպես մայիսյան  հերոսամարտերում, այնպես էլ ապագայում վճռական նշանակություն պետք է ունենա հայ ժողովրդի անկոտրուն կամքի դրսևորումը, կենաց-մահու պայքար մղելու

[1] Տե՛ս Հայոց պատմություն, ԳԱԱ հրատ., h 4, էջ 16:

ժամանակ համախմբվելու ունակությունը: Պետք է համախմբվել մի գաղափարի շուրջ, որովհետև առանց գաղափարի, առանց տեսլականի պետություն չի լինում: Դրա բացակայության դեպքում բավարար չի լինի նույնիսկ հակառակորդից ավելի լավ սպառազինված լինելը: Մայիսյան հաղթանակներն ազգային միասնության արգասիք էին. սիա այն պատմական դասը, որ պետք է քաղեն հայ քաղաքական միտքն ու հայ ժողովուրդը:

**Բանալի բառեր** - Փետրվարյան հեղափոխություն, Հոկտեմբերյան հեղաշրջում, Անդրկովկասյան կոմիսարիատ, Անդրկովկասյան Սեյմ, Առաջին աշխարհամարտ, Սարդարապատ, Բաշ-Ապարան, Ղարաքիլիսա, մայիսյան հերոսամարտեր:

**Нателла Григорян, Ларида Казумян, Геополитическая ситуация в Закавказье и майские героические сражения армянского народа** – Рассматриваемый период является одним из решающих этапов в истории армянского народа.

В 1918г. майские героические сражения, предшествовавшие этому события – Февральская революция, Октябрьский переворот, турецкий очередной поход в Закавказье, будут решать судьбу целого народа. Майские героические сражения обеспечили для армянского народа новую жизнь. Радость наличия государственности, которую мы попробовали в 1918г., нам была данна только и только благодаря конгрегации между различными слоями общества.

**Natella Grigoryan, Larida Ghazumyan, Geopolitical situation in Transcaucasus and Armenian people`s heroic battles of May** - The period under study is one of the decisive stages in the history of Armenians.

Heroic battles of May, 1918, and preceding events such as The February Revolution, the October revolution, another Turkish invasion to Transcaucasia, would determine the fate of a whole nation. Heroic battles of May provided new opportunities for the Armenians. The joy of having a statehood that we tasted in 1918 was given to us solely through the unity of the various segments and classes of society.

# ՄՏԱՎՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ


**ՋՈՒԼԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի պատմություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

E-mail: julya.margaryan1999@mail.ru


Դպրոցում պատմության դասավանդման գործընթացի ճիշտ կազմակերպումը խիստ կարևոր է այժմյան հարափոփոխ քաղաքական իրավիճակում, քանի որ պատմության դասավանդման կարևոր ու գլխավոր խնդիրներից մեկը, հայրենասիրության դաստիարակումն ու սերմանումն է մատաղ սերնդի մոտ: Հետևաբար կարևոր է նաև, թե ինչ մեթոդներով ու հնարներով կկիրառվի պատմության դասավանդման ընթացքը: Ճիշտ մեթոդի ընտրությունն առաջին ուղենիշն է դեպի նոր գիտելիքի ուսումնասիրումը, յուրացումը: Նախ տանք մեթոդի սահմանումը.

Մեթոդ (հուն. Metodos բառացի՝ «դեպի որևէ բան տանող ուղի») - ամենաընդհանուր նշանակությամբ՝ նպատակին հասնելու եղանակ: Մեթոդը հանդիսանում է կապող օղակ նախատեսված նպատակների և վերջնական արդյունքների միջև: Մեթոդը ուսուցչի և սովորողների փոխհամաձայնեցված գործունեությունն է ուսուցման գործընթացում, որը ուղղված է սահմանված նպատակներին հասնելու համար[1]:

Ժամանակակից հայկական դպրոցում կարևորվում է արդի գիտատեխնիկական առաջընթացի հետ մեկտեղ պատմության դասավանդման ընթացքում ժամանակակից մեթոդների կիրառումը: Ժամանակակից մեթոդները դժվար է պատկերացնել և կիրառել առանց մտավոր գործունեության եղանակների համադրման:

Պատմությունը որպես մարդկային հասարակության անցյալի ուսումնասիրում կարիք ունի վերլուծման, համեմատման և համադրման: Հետևաբար մտավոր գործունեության եղանակների կիրառումը, շատ կարևոր է պատմության դասավանդման ընթացքում:

Մտավոր գործունեության եղանակները պատասխանում են ո՞վ, ե՞րբ, ինչու՞, ինչպե՞ս, որտե՞ղ հարցերին: Մտավոր գործունեության եղանակների մեջ մտնում են վերլուծությունը, համեմատումը, համադրումը, ապացուցումը:

***Վերլուծում, համադրում և համեմատում:***

[1] **Յուրի Ա. Ամիրջանյան,** Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ,Եր. 2005թ էջ. 157-158:

Պատմական նյութի ամբողջական մասերի բաժանումը կոչվում է վերլուծություն, իսկ հակառակ երևույթը՝ համադրում[1]:

**Վերլուծության օրինակ 1՝** «Անտանտի ստեղծումը»

| **Մեծ տերությունները** | **Նրանց պլանները** | **Նշանակությունը** | **Արդյունքները** |
|---|---|---|---|
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

**Օրինակ 2՝**

| **Երկրորդային փաստեր** | **Փաստի էությունը** | **Առաջնային փաստ** | **Փաստի էությունը** |
|---|---|---|---|
| Կուրսկի ճակատամարտ | | Երկրորդ համաշխարհայի ն պարերազմը | |
| Ստալինգրադի ճակատամարտ | | | |

Այսինքն՝ վերլուծությունն օբյեկտի տրոհումն է մասերի, դրանց ուսումնասիրման նպատակով: Այն երևույթի յուրաքանչյուր տարրի կամ կողմի ուսումնասիրումն է՝ որպես ամբողջի մաս, ուսումնասիրվող առարկայի կամ երևույթի տարրաբաժանումն բաղադրիչների, նրանում առանձին կողմերի բացատրումը: Վերլուծության էությունը այն է, որ առանձին փաստերն ու երևույթները արտա-

[1] **Հ. Պապոյան,** Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Եր. 2013թ էջ 110 :

ցոլող առանձին տվյալներից կազմվում է գործընթացի ամբողջական, ընդհանուր պատկերը, բացահայտում դրանց բնորոշ օրինաչափությունները:

Իսկ համադրումը, մտածողության տարբեր մասերի միավորումն է միասնական ամբողջության մեջ, այսինքն նրանց միջև եղած կապերի բացահայտումը:

Վերլուծությունը շատ պարզ երևում է տրամաբանորեն միմյանց կապված երևույթներում.

**Օրինակ**՝ 1921 թվականի մարտի 16-ի Մոսկվայի պայմանագիրը

| <u>**Թվականը**</u> | <u>**Պայմանագիրը**</u> | <u>**Իրավական կողմը**</u> | <u>**Բարոյական կողմը**</u> |
|---|---|---|---|
| | | | |

Օրինակ՝ ***Միասնական աշխատանքը, ընդհանուր սեփականությունը, տոտեմիզմը, էքսոգամիան և հետերիզմը բնորոշ են վաղ նախնադարյան հասարակությանը:***

Վերլուծության և համադրման եղանակները կարելի է կիրառել գիտելիքների ամրապնդման և միջառարկայական կապերի միջոցով: Այդ դասերի ընթացքում ոչ միայն կրկնվում են ուսումնասիրված թեմաները, այլև համակարգվում, ընդհանրացվում և ընդլայնվում են սովորողների գիտելիքները[1]:

Այսպիսով՝ վերլուծությունը և համադրումը հանդես են գալիս որպես մտածողության տրամաբանական հնարներ, որոնք կատարվում են տրամաբանական հասկացությունների միջոցով, և սերտորեն կապված են վերացական ընդհանրացման հետ:

Մտավոր գործունեության հաջորդ եղենակը դա համեմատումն է: Համեմատումը ընդհանուրի և առանձնահատուկի բացահայտումն է:

Համեմատման ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալը.

- Վերլուծել նյութը և գտնել համեմատման ենթակա նյութերը
- Համեմատել միաբնույթ և բազմաբնույթ երևույթների հատկանիշները
- Համեմատել արդյունքները և կատարել եզրահանգումներ:

Համեմատումը շատ ավելի հեշտ է, երբ տրվում է աղյուսակով:

***Օրինակ*** 1՝ Արտաշեսյան և Արշակունյաց թագավորությունների համեմատում:

---

[1] Նույն տեղում էջ 112:

| *Թիվ* | *Արտաշեսյան դինաստիա* | *Արշակունիների դինաստիա* | *Ընդհանրություն-ները* | *Արդյունքում* |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |

***Օրինակ* 2.**




Հաջորդը դա ապացուցման եղանակն է, որը կիրառվում է հասկացություն-ների, երևույթների էությունը հասկանալու ժամանակ: Ցանկացած հարցի և խնդ-րի քննարկման, ապացուցման ընթացքում անհրաժեշտ է հիմք և հստակ հիմնա-վորում: Ինչ-որ մտքի, իրավիճակի ապացուցման համար ընտրվում են որոշակի փաստարկներ: Դրանցից յուրաքանչյուրը հնարավորինս պետք է հիմնավորի ար-տահայտած մտքի ճշմարտացիությունը:

Ապացուցման համար նյութ են հանդիսանում՝ փաստաթղթերն ու վիճա-կագրական տվյալները, որի համար սովորողներին պետք է հետևյալը.

- Պարզել և ձևակերպել մտքերը և ապացուցել ճշմարտությունը,
- Հիմնավորել փաստերով,
- Կատարել եզրահանգումներ ապացույցներով:

Հետևաբար պատմության դասավանդման ընթացքում, ցանկացած կիրառ-վող եղանակ օգտակար է մտավոր գործունեության համար:

Այսպիսով, աշակերտը դասագրքով աշխատելիս ոչ միայն պետք է կարո-ղանա վերարտադրել կամ սերտել ուսուցվող թեման, այլև ցանկալի է, որ նա վեր-լուծի և համադրի դեպքերն ու փաստերը, իրադարձությունները, գործընթացնե-րը, երևույթները, ստեղծի կապ անցյալի ու ներկայի հետ:

Դասարանից դասարան բարդանում են սովորողներին ներկայացվող պահանջները: Մտավոր գործունեության եղանակների կիրառումը պետք է սկսել աստիճանաբար.

• 6-րդ դասարանցին պետք է արդեն աշակերտը կարողանա տալ փաստերի նկարագրումը, բացատրի պատմության եզրերը:




• 7-րդ դասարանում պետք է վերլուծի և համեմատի պատմական փաստերը, կատարի ոչ բարդ եզրահանգումներ:

• 8-րդ դասարանում պետք է տարբերակի գործընթացը, երևույթը, իրադարձությունը:

• 9-10-րդ դասարանում պետք է կարողանա գնահատել իրադարձությունը, պարզել դրանց պատճառները և հետևանքները:

• Ավագ դպրոցում պետք է կարողանան կարճ ժամանակաշրջանում կազմել ռեֆերատներ, զեկուցումներ, ազատ կերպով օգտվել քարտեզներից:

Պատմության դասաժամերի ընթացքում մտավոր գործունեության եղանակների կիրառումը պետք է միտված լինի հայրենասիրության, ազգային դաստիարակության, պատմության համամարդկային հարցերի վերաբերյալ պատկերացումների ուսուցմանը և սերմանմանը:

Ամփոփելով հոդվածը կարող ենք ասել, որ մտավոր գործունեության եղանակների բացահայտումը, կիրառումը պատմության դասավանդման ընթացքում կարող են դառնալ այն ճիշտ գործիքներն ուսուցչի համար, որոնք նա կարող է փոխներգործուն, համակցված մեթոդների համադրման միջոցով կիրառել աշակերտակենտրոն դաս անցկացնելու համար՝ խթանելով ուսուցանվողների ինքնուրույն աշխատանքը, պրպտուն միտքը:

**Բանալի բառեր** - մտավոր գործունեության եղանակներ, պատմություն, դասավանդում, մեթոդ, վերլուծում, համեմատում, համադրում, կիրառում, երևույթ, փաստ, եզրահանգում:

**Джулиета Маргарян, Применение разных приемов мыслительной деятельноцти на уроках истории** - Целью статьи является представление применяемых на уроках истории таких приемов мыслительной деятельности, как сравнение, сопоставление, анализ и методика преподавания.

**Julieta Margaryan, Us eof mental activity forms in teaching history** - The aim of the article is to present the forms of mental activity /combinning, comparing, analyzing / in teaching history methodology to teach them .

# ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԳՈՀԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի
Պատմություն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
E-mail: gohar-petrosyan-1999@mail.ru

Պատմության դասավանդման ընթացքում կարևորվում է պատմական քարտեզների դերը: Քարտեզը հնարավորություն է տալիս սովորողներին տալ աշխարհագրական հեռանկարի պատկերացում, կոնկրետացնել պատմական դեպքերի մասին նրանց պատկերացումները, այն նպաստում է պատմական իրողությունների պարզաբանմանը: Պատմական քարտեզները փաստերն ու իրադարձությունները տարածության մեջ տեղայնացնելու հնարավորություն են ստեղծում:

Պատմության դասավանդման ընթացքում շատ կարևոր է ժամանակակից մեթոդների հիման վրա իրականացնել պատմական նյութի ուսումնասիրումը և դասավանդումը: Ժամանակակից մեթոդների անբաժանելի մասն են կազմում զննականության մեթոդները: Պատմական նյութի դասավանդման ընթացքում կերպարային պատկերացումներն ու հասկացությունները պատմական անցյալի վերաբերյալ սովորողների մոտ ձևավորվում է զննականության մեթոդի կիրառման միջոցով, որից անբաժան են պատմության դասընթացի ընթացքում քարտեզների կիրառումը:

Ժամանակակից հայկական դպրոցում պատմության կրթության դասավանդման և զարգացման գործում մեծ դեր են կատարում պատմական քարտեզները, քարտեզ-սխեմաները, ատլասները, ուրվագծային քարտեզները, որոնց հիմնական նպատակն է բացահայտել պատմական փաստերի, իրադարձությունների, երևույթների, գործընթացների աշխարհագրական միջավայրը և տեղը:

Առանց քարտեզների դժվար է պատկերացնել, ըմբռնել այն պատմական միջավայրը, տարածքը, որտեղ տեղի է ունեցել պատմական իրադարձությունը:

Պատմական քարտեզները ստեղծվում են աշխարհագրականի հիմքի վրա և իրենցից ներկայացնում են պատմական ժամանակաշրջանի կամ իրադարձությունների փոքրացված պատկերը թղթի վրա:

Ամենահին քարտեզները ստեղծվել են Բաբելոնում, Եգիպտոսում, Չինաստանում Ք.ա. I-III հազարամյակներում և ծառայել են ռազմական նպատակներով: Առաջին ուսումնական հատուկ քարտեզները եվրոպական երկրներում կազմվել են XIV-XV, Ռուսաստանում՝ XVIII, հայ իրականության մեջ՝ XIX դարում[1]:

[1] **Հ. Պապոյան,** Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում, Եր. 2013, էջ 138:

Պատմական քարտեզները տարբերվում են աշխարհագրականից նրանով, որ ամբողջությամբ վերականգնում են տվյալ ժամանակաշրջանի պատմական իրողությունը, հասարակական-քաղաքական իրադարձությունները:

Քարտեզը այն իրավազննական պիտույքն է, որը ամենաշատն է օգնում պատմական նյութի ընկալմանը, պատմական իրադարձությունների ընթացքի հասկացմանը: Պատմական քարտեզը ծառայում է պատմական իրադարձությունների բացատրմանը:

Խոսքային և կերպարային միջոցներց բացի, պատմական քարտեզների ուսումնասիրության համար կարևոր դեր են կատարում պայմանական նշանները: Պայմանական նշաններ են գծերը, եռանկյունիները, սլաքները, ուսուցչի կողմից կատարված գծապատկերները, դիագրամները և այլ պատկերներ: [1]

*Օրինակ*՝

**Ռազմական ներխուժումները կարմ ընդհատվող սլաքներով**



**Մարդկանց տեղաշարժը ներկայացված է երկար ընդհատվող սլաքներով**



**Ճակատամարտի վայրերը խաչվող սրերով, կամ հրանոթներով**



**Ապստամբության վայրերը խոշոր կետերով**



**Արդյունաբերական վայրերը՝ ծխնելույզներով[2]**

Պատմական քարտեզները բաժանում ենք երեք տիպի.

1. Ընդհանրացնող
2. Թեմատիկ
3. Քարտեզագծանկարային

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 138-139

[2] ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Ք.Հայրապետյան, Պատմական նյութի կառուցվածքը և նրա դասավանդման մեթոդիկան, 2015 №2, էջ 199-200



**Ընդհանրացնող կամ ընդհանուր** քարտեզները պատկերում են պատմական որոշակի ժամանակաշրջան և տարածքներ:

*Օրինակ՝ «Հելլենիզմ-հունականություն»*

*Օրինակ՝ «Ստալինգրադի շրջափակումը»*

**Թեմատիկ** քարտեզները պատկերում են պատմական իրադարձություններ և գործընթացներ: Այսպիսի քարտեզները թեթևացնում են այն ամենից, ինչը կապված չէ թեմայի հետ:

**Օրինակ՝** «Շուշիի ազատագրումը»




**Քարտեզագծանկարային կամ սխեմատիկ** քարտեզները դրանք պատկե-րում են կոնկրետ փաստ, երևույթ կամ իրադարձություն:

Քարտեզագծանկարային քարտեզները իրենցից ներկայացնում են թեմատիկ քարտեզների յուրատեսակ տարբերակներ: Տեղային սխեման, ինչպես ամեն մի սխեմա ընդհանրապես, պետք է զտված լինի այն բոլոր ավելորդություններից ու մանրամասնություններից, որոնք կարող են ստվերում թողնել հիմնականը:

Բացի վերը նշված քարտեզներից ուսուցման ընթացքում բարձր արդյունավետություն ունեն նաև՝ ուսումնական նյութի պարզաբանման ընթացքում, ուսուցչի կողմից գունավոր կավիճներով գրատախտակին գծված ուրվագծային քարտեզները:

Այսպիսի քարտեզները անվանում են ուրվագծային բլից քարտեզներ: Ներկայումս շատ ուսուցիչներ գործնականում հաջողությամբ կիրառում են ուրվագծային բլից քարտեզներ՝ պատմության դասաժաների ընթացքում, ցանկացած դասարանում: Նմանատիպ աշխատանքները հաջողություններ են ունենում, երբ կատարվում են աշակերտների կողմից, գրատախտակի վրա կամ տետրի մեջ:



Քարտեզի բովանդակությունը հարստացնելուն և նրա վրա եղած պայմանական նշանները կենդանացնելու նապատակով, ժամանակակից ուսուցիչները քարտեզի վրա միաժամանակ օգտագործում են նաև ապլիկացիաներ: Թղթից կտրված և քարտեզի վրա տեղադրված շարժական սարքերը՝ նկարները, զանազան պայմանական նշանները և պատկերներ, որի արդյունքում նյութը հիանալիորեն տպագրում է աշակերտների հիշողության մեջ:

Առաջին պատկերացումները քարտեզների վերաբերյալ սովորողներ ստանում են V դասարանում «Հայրենագիտություն» առարկայից:

Միջին դպրոցում դեռևս առաջին ժամերից ուսուցիչը պետք է թարմացնի աշակերտների գիտելիքները մասշտաբի վերաբերյալ, ապա նոր անցում կատարի նոր հմտությունների ձևավորմանը՝ զարգացնի սովորողների քարտեզագիտական գիտելիքները ու ընդունակությունները:

Դպրոցում դասավանդվող նյութին համապատասխան քարտեզ չլինելու դեպքում, սխալ է այն փոխարինել պատմական այլ ժամանակաշրջանի վերաբերյալ քարտեզով, քանի որ աշակերտների մոտ ձևավորվում է սխալ պատկերացում տվյալ ժամանակաշրջանի տարածքների վերաբերյալ: Ճիշտ կլինի նման դեպքերում օգտագործել ֆիզիկական քարտեզ, որի վրա չկան սահմաններ, օգտվել պատմական ատլասից կամ դասագրքի քարտեզից[1]:

Պատմության ուսուցման ընթացքում ուսուցչի խնդիրներից մեկը դպրոցականներին ինքնուրույն քարտեզի հետ աշխատել սովորեցնելն է: Այդ նպատակով շատ կարևոր են քարտեզների վրա կատարվող զննական աշխատանքները:

Պատմության ուսուցման ժամանակ չպետք է թերագնահատել պատմական ատլասների դերը, որոնց բնորոշ են քարտեզների ներքին միասնությունը, համաձայնվածությունն և փոխլրացումը: Ամենախոշոր քարտեզներն անգամ անկարող են լրիվ «ցույց տալ» այն, ինչ կատարվել է ժողովուրդների և երկրների կյանքում: Այդ պատճառով էլ անգնահատելի է ատլասների դերը:

Պատմության դասի ընթացքում ուսուցիչը քարտեզների ուսուցման մեթոդների մասին խոսելիս պետք է նկատի ունենա, որ դրանք ռեալ օբյեկտների խորհրդանշական արտահայտությունն են:

Միայն համառ, մտածված հետևողական աշխատանքով կարելի է ապահովել քարտեզի ըմբռնումը:

Կարևոր նշանակություն ունի աշակերտներին նոր քարտեզներին ծանոթացնելը: Ուսուցիչը պետք է անպայման շեշտի, թե տվյալ քարտեզը ինչպիսի տարածքներ և պատմական ժամանակաշրջան է ընդգրկում՝ նշելով այնտեղ գտնվեղ կարևոր անուններն ու բացատրելով պայմանական նշանները:

Պատմության դասերի ընթացքում ուսուցչի խոսքը, պարտադիր, պետք է ուղեկցվի քարտեզի ցուցադրումով, որը նպաստում է՝ սովորողների մոտ ճանաչողության հմտությունների զարգացմանը: Մեկ դասի ընթացքում կարելի է կիրառել մի քանի քարտեզներ, բայց ոչ ավելի քան 3-ը, քանի որ այդ դեպքում սովորողները կարող են շփոթել աշխարհագրական տարբեր տարածքները, պատմական գործընթացները, իրադարձություններն ու երևույթները:

Պատմական քարտեզների հետ աշխատաեիս անհրաժեշտ է պահպանել մի քանի հիմնկան կանոններ: Ցուցադրումից առաջ ուսուցիչը կանգնելով քարտեզի կողքին պատմում է դասը և բանավոր ներկայացնում տվյալ աշխարհագրական վայրը և տալով այն աշխարհագրական վայրի անունը, որտեղ կատարվել է շարադրվող պատմական իրադարձությունը, ճշտորեն այն ցույց է տալիս քարտեզի վրա, շեշտում, որ այն գտնվում է այսինչ վայրից հյուսիս, հարավ արևելք կամ արևմուտք: Քարտեզների մոտ պետք է կանգնել այնպես, որ լույսը ընկնի ձախից,

[1] **Հ. Հ. Ղևոնդյան,** Պատմության քարտեզները ուսուցման ժամանակ, Եր. 1983թ.:

կամ այնպես, որ չխանգարի նրա հետ աշխատանքին: Քարտեզի վրա տվյալ վայրը ցուցադրվում է ցուցափայտով և այն ձեռքով, որը մոտ է քարտեզին:

Աշխատելով սեղանի քարտեզներով՝ սովորողները սկզբում միայն վերարտադրում են ուսուցչի գործողությունները: Այնուհետև բանավոր նկարագրությամբ սեղանի քարտեզի վրա գտնում են օբյեկտը կամ առարկան, ապա նոր այն գտնում են պատի քարտեզի վրա: Առանց նայելու քարտեզին սովորողների համար դժվար է ներկայացնել տվյալ պետության կամ քաղաքի գտնվելու վայրը:

Որպեսզի աշակերտները, իսկապես, տիրապետեն քարտեզի իմացությանը, այլ ոչ թե նրա վրա նշված այս կամ այն կետը գտնեն, այն էլ միայն մակագրությունները կարդալով՝ ցանկալի է դասարանում մշտապես աշխատել երկու տեսակի քարտեզներով՝ պատի և համր:

Պատմական քարտեզների հետ աշխատնքում սովորողները ձեռք են բերում հարուստ գիտելիքներ և հմտություններ.

Իմանալ՝

- քարտեզի անվանումը ցույց է տալիս ուսումնասիրվող թեման և նրա հիմնական բովանդակությունը,
- պատմական քարտեզը ընդգրկում է մարդկային անցյալի որոշակի ժամանակաշրջան,
- քարտեզի վրա կարող են պատկերված լինել տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ իրադարձություններ,
- իրար հաջորդող իրադարձությունները կարող են պատկերված լինել մեկ պատմական քարտեզի վրա, որոնք տարածության մեջ տրված են ըստ ժամանակագրական հաջորդականության,
- քարտեզները ունեն մասշտաբ,
- քարտեզները ունեն պայմանական նշաններ, որոնք ներկայացված են քարտեզների ներքևի մասում:

Կարողանալ՝

- ճանաչել և անվանել քարտեզի վրա ներկայացված աշխարհագրական տարածությունը,
- որոշել քարտեզների հաջորդականությունն ու ժամանակը,
- հասկամալ քարտեզի վրա պատկերված իրադարձությունը,
- ճիշտ կարդալ և բանավոր ներկայացնել քարտեզի վրա պատկերված իրականությունը,
- համեմատել քարտեզի վրա եղած տարբեր երևույթները,
- քարտեզի վրա գտնել և անվանել պայմանական նշանները,
- համեմատել և համակարգել տարբեր պատմական քարտեզներ,
- կարդալ քարտեզներն ու քարտեզ-սխեմաները:

Այսպիսով՝ քարտեզները շատ կարևոր են պատմության դասավանդման ընթացքում, դրանք կազմում են զննականության մեթոդի կարևոր բաղկացուցիչ մասը, առանց քարտեզների դժվար է պատկերացնել պատմական իրողությունը, տարածքը:

**Բանալի բառեր** - պատմական քարտեզ, պատմական ատլաս, պայմանական նշաններ, ընդհանրացնող քարտեզներ, թեմատիկ քարտեզներ, քարտեզագծանկարային քարտեզներ, ուրվագծային քարտեզ, զննական աշխատանքներ, պատի և համր քարտեզներ.

## РЕЗЮМЕ

Целью данной статьи является представление роли и значения исторической карты на уроках истории, его значимость как компонента наблюдательного метода.

## SUMMARY

The aim of the article is to present the role and significance of maps in teaching history, their importance as a visualization method component.

# ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**ՄԻՔԱՅԵԼ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ ԻՄ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ
E-mail: mmiqayelyan@mail.ru
**ՆՎԱՐԴ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ**
ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողուհի
E-mail: meliqsetyannvard@mail.ru

Ներկայումս տնտեսական աճը տնտեսագետներին հետաքրքրող կարևորագույն հարցերից է, քանի որ երկրի զարգացման մակրոտնտեսական ամենահիմնական բնութագրիչն է՝ մեկ տարում արտադրված ապրանքների ու ծառայությունների ավելացումը: Տնտեսական աճը մեր և ցանկացած երկրի համար արդիական թեմաներից մեկն է, քանի որ բնակչության մեկ շնչի հաշվով ազգային արդյունքի ավելացումը բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևորագույն պայման է: Ցանկացած երկրի կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն նպատակներից մեկն է հանդիսանում տնտեսական աճի խթանումը, ինչպես նաև դրա տեմպերի պահպանումը կայուն և արդյունավետ մակարդակի վրա: Տնտեսական աճ ապահովող տնտեսությունն ավելի մեծ հնարավորություններ ունի նոր սոցիալական ծրագրեր իրականացնելու, աղքատության և շրջակա միջավայրի խնդիրները լուծելու ուղղությամբ:

Տնտեսական աճը (economic growth) որոշակի ժամանակահատվածում (սովորաբար մեկ տարում) տնտեսության մեջ իրական եկամտի՝ ՀՆԱ-ի կամ ԱԵ-ի աճն է,կարող է դիտարկվել նաև որպես բնակչության մեկ շնչին ընկնող իրական արդյունքի աճ[1]: Բնակչության մեկ շնչին ընկնող իրական արդյունքի աճը նշանակում է կենսամակարդակի աճ: Տնտեսական աճը հասարակական արդյունքի քանակական մեծացումն ու որակական կատարելագործումն է, որը հնարավորություն է տալիս ընդլայնել երկրի տնտեսության հնարավորությունները հասարակության պահանջմունքներն առավելագույն չափով բավարարելու համար: Այն ընդհանուր առմամբ տեղի է ունենում տնտեսական շրջանառության մեջ ավելի շատ բնական ռեսուրսներ ընդգրկելու միջոցով. օգտակար հանածոներն արդյունահանվում են երկրի ավելի խորը ընդերքից, և դրանց վրա ավելի

[1] **Հ. Լ. Սարգսյան, Հ. Գ. Մարգարյան,** << Տնտեսագիտության տեսություն>>, ԵՊՀ հրատարակչություն 2017, էջ 263

շատ ծախսումներ են կատարվում: Այդ պատճառով տնտեսական աճի շատ գործընթացներ ռեսուրսներ կլանող են: Սակայն տեխնիկական առաջադիմության շնորհիվ տեղի է ունենում նաև նյութական ռեսուրսների զգալի տնտեսում: Տնտեսական աճը նպաստում է արտադրական ռեսուրսների սահմանափակության և հասարակության պահանջմունքների անսահմանափակության հիմնախնդրի լուծմանը:

Տնտեսական աճը գնահատվում է տնտեսության իրական ՀՆԱ-ի շարժով: Տնտեսական աճի չափումը կամ գնահատումն ընդունված է կատարել երկու եղանակով.

ա) համախառն ներքին (ազգային) արդյունքի իրական ծավալի մեծացումը որոշակի ժամանակահատվածում,

բ) համախառն ներքին (ազգային) արդյունքի իրական ծավալի աճը բնակչության մեկ շնչի հաշվով:

Տնտեսական աճը գնահատելու այս եղանակները փոխադարձաբար կապված են և կիրառվում են որոշակի հետազոտական ու վերլուծական խնդիրներից ելնելով: Եթե առաջին եղանակը բնութագրում է երկրի տնտեսական ներուժը, նրա արտադրական հնարավորությունները, ապա երկրորդ եղանակը կիրառվում է բնակչության կենսամակարդակն առանձին երկրներում գնահատելու և միմյանց հետ համեմատելու համար: Ներկայումս առավել բնութագրական է տնտեսական աճի գնահատման երկրորդ եղանակը: Տնտեսական աճի գնահատման երկու եղանակների դեպքում էլ այն չափվում է տարեկան աճի տեմպերով, որը որոշելու համար համախառն ներքին արդյունքի փաստացի ծավալը բաժանում ենք նախորդ կամ բազիսային ժամանակաշրջանի ծավալի վրա՝ արտահայտելով տոկոսներով:

Գործնականում տնտեսական աճի տեմպը գնահատվում է տարեկան հավելաճի տեմպով(Y), որը որոշելու համար համախառն ներքին արդյունքի հավելաճը բաժանում ենք բազիսային ժամանակաշրջանի ծավալի վրա՝ արտահայտած տոկոսներով՝

$$Y = \frac{Y_t - Y_{t-1}}{Y_{t-1}} \times 100\% = \frac{\Delta Y_t}{Y_{t-1}} \times 100\%$$ [1]

որտեղ՝

$Y_t$-ն իրական ՀՆԱ-ի ծավալն է դիտարկվող ժամանակահատվածում,

$Y_{t-1}$ -ը՝ ՀՆԱ-ի իրական ծավալը նախորդ ժամանակահատվածում:

Միջին տարեկան հավելաճի տեմպը ($\overline{Y}$) որոշվում է հետևյալ կերպ.

$$\overline{Y} = \sqrt[n]{\frac{Y_t}{Y_{t-1}}} - 1 \times 100\%,$$

որտեղ՝

[1]под ред. **Чепурина М.Н.М.**, “Курс экономической теории”, 2000г., ст. 558

$Y_t$-ն վերջին տարվա ՀՆԱ-ի ծավալն է,

$Y_{t-1}$ –ը՝ բազիսային տարվա ՀՆԱ-ն,

n-ը՝ տարիների թիվը:

Ըստ 2018 թվականի տվյալների՝ Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն, արտահայտված շուկայական գներով, կազմել է 6005058.1 մլն դրամ:




**Գծապատկեր 1.** Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով, մլն. դրամ [1]

Տնտեսական աճի ցուցանիշը միշտ չէ, որ դրական մեծությամբ է արտահայտվում. եթե փաստացի տարրում ՀՆԱ-ն վերարտադրվել է նախորդ տարվա նույն ծավալի չափով, ապա դա վկայում է զրոյական տնտեսական աճի մասին, իսկ եթե հասարակական արդյունքը վերարտադրվում է ոչ ամբողջովին, այլ մասնակիորեն, ապա առկա է բացասական աճ: Տնտեսական աճի բարձր տեմպերը ենթադրում են երկրի տնտեսական ներուժի մեծացում և բնակչության նյութական բարեկեցության բարձրացում:

Տնտեսական աճը խթանող կարևոր գործոններից է տեխնիկական առաջընթացը: Առավել կատարելագործված տեխնոլոգիայի ներդրումը հնարավորություն է տալիս ավելի փոքր ծավալի աշխատանք, կապիտալ և բնական ռեսուրսներ օգտագործել տնտեսական աճի անհրաժեշտ տեմպն ապահովելու համար: Իսկ գիտատեխնիկական առաջընթացը արտադրության գործոնների որակական կատարելագործումն է գիտության ու տեխնիկայի զարգացման և նորագույն նվաճումների կիրառման հիման վրա:

Տնտեսական աճի մոդելները իրական տնտեսական գործընթացների վերացական, պարզեցված արտացոլումն են՝ մաթեմատիկական հավասարումների կամ գրաֆիկների տեսքով: Ժամանակակից իրականության մեջ օգտագործվում են տնտեսական աճի 2 խումբ մոդելներ՝ քեյնսյան և դասական:

[1] https://www.armstat.am

Քեյնսյան մոդելները կառուցվում են ըստ հետևյալ հիմնադրույթների.

- գները ճկուն չեն (հաստատուն գներ)
- սուբյեկտների սպասումները ստատիկ են,
- արտադրության գործոնները փոխադարձ փոխարինելի չեն:

Աճի քեյնսյան մոդելներից ամենատարածվածը ամերիկացի տնտեսագետ Եվսեյ Դոմարի և անգլիացի տնտեսագետ Ռոյ Հարրոդի մշակած մոդելներն են:

Դասական մոդելները հիմնված էին հետևյալ տեսական նախադրյալների վրա.

1. Արտադրանքի արժեքն ստեղծվում է արտադրության բոլոր գործոններով, և յուրաքանչյուր գործոն իր ներդրումն ունի արժեքի կազմավորման մեջ:

2. Քանակական կախվածություն գոյություն ունի արտադրանքի թողարկման և արտադրության համար անհրաժեշտ ռեսուրսների միջև:

3. Գոյություն ունի արտադրության գործոնների հարաբերական անկախություն և դրանց փոխադարձ փոխարինելիություն:

Տնտեսական աճի նորդասական մոդելներից ամենատարածվածը Սոլոուի մոդելն է:

2000–2007 թվականներին հետխորհրդային երկրները համաշխարհային տնտեսության արագ զարգացող տարածաշրջանն էին: Այդ ժամանակաշրջանում Հայաստանի և ԱՊՀ երկրների ներքին պահանջարկի աճը տարեկան բնութագրվում էր երկնիշ մեծություններով մաքուր արտահանման բացասական ցուցանիշների պայմաններում: Սակայն, ըստ երկրների տնտեսական աճի տեմպերը խիստ տարբերվում էին: Ադրբեջանում և Թուրքմենստանում ՀՆԱ-ն ավելացել էր 4 անգամ, Տաջիկստանում՝ 2,3 անգամ: Ավելի քան երկու անգամ ՀՆԱ-ն աճեց Հայաստանում, 2 անգամ Ուզբեկստանում և Բելոռուսում, համարյա 2 անգամ Վրաստանում: Մնացած երկրներում աճը կազմում էր 1,5–1,7 անգամ:

2009 թվականին համաշխարհային տնտեսությունը վերջին շուրջ 60 տարիների ընթացքում առաջին անգամ անկում ապրեց: Համաշխարհային ՀՆԱ-ն նվազեց 0.6 տոկոսով, որը մեծապես պայմանավորված էր զարգացած երկրներում տնտեսական անկմամբ: Աշխարհի շուրջ 89 երկրներում գրանցվեց տնտեսական անկում: Տնտեսական անկումը խորն էր նաև ԱՊՀ-ում: Տնտեսական անկումն արձանագրվեց հատկապես հանքարդյունաբերության և մշակող արդյունաբերության ճյուղերում, որը պայմանավորված էր մի շարք գործոններով, որոնցից են՝ միջազգային շուկաներում ապրանքների և հումքի գների անկումը, վարկային միջոցների սղությունը, անկայուն ֆինանսական համակարգի առկայությունը, սպառողների վստահության նվազումը և ի վերջո ՝ ամբողջական պահանջարկի կրճատումը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում կրճատվեցին ներդրումները և համախառն ազգային խնայողությունները, ինչպես նաև զգալի անկում ապրեցին զբոսաշրջային ծառայությունների ծավալները: 2010 թվականի առաջին վեց

ամիսներին տեղի ունեցավ համաշխարհային տնտեսության աստիճանական վերականգնում, որը դրսևորվում էր դեռևս 2009 թվականի վերջից:

**Աղյուսակ 1.** ՀՆԱ դինամիկան ԱՊՀ երկրներում, Վրաստանում և Մերձբալթիկայում (հաստատուն գներով)[1]

| *Երկրներ* | *Աճի տեմպը, %* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | *Միջին տարեկան* | | *Նախորդ տարվա նկատմամբ* | | | |
| | *1990–2000* | *2000–2008* | *2009* | *2010* | *2011* | *2012* |
| Ուզբեկստան | –0.2 | 6.6 | 8.1 | 8.5 | 8.3 | |
| Բելառուսիա | –1.6 | 8.6 | 0.2 | 7.7 | 5.3 | |
| Ղրղզստան | –4.1 | 4.4 | 2.9 | –1.4 | 5.7 | |
| Ղազախստան | –4.1 | 9.5 | 1.2 | 7.3 | 7.5 | |
| Ռուսաստան | –4.7 | 6.7 | –7.8 | 4.0 | 4.3 | |
| Թուրքմենստան | –4.9 | 14.5 | 6.1 | 9.2 | 14.7 | |
| Ադրբեջան | –6.3 | 18.1 | 9.3 | 5.0 | 0.1 | |
| Տաջիկստան | –10.4 | 8.6 | 3.9 | 6.5 | 7.4 | |
| Հայաստան | –1.9 | 12.4 | –14.1 | 2.1 | 4.6 | |
| Ուկրաինա | –9.3 | 7.2 | –14.8 | 4.2 | 5.2 | |
| Վրաստան | –7.1 | 8.1 | –3.8 | 6.3 | 7.0 | |
| Մոլդովա | –9.6 | 6.3 | –6.0 | 6.9 | 6.4 | |
| Էստոնիա | 0.5 | 6.7 | –14.3 | 2.3 | 7.6 | |
| Լիտվա | –2.7 | 8.1 | –14.8 | 1.4 | 5.9 | |
| Լատվիա | –1.5 | 8.0 | –17.7 | –0.3 | 5.5 | |

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մեծ ազդեցություն ունեցավ նաև Հայաստանի տնտեսության վրա: Անկախության հռչակումից հետո Հայաստանը ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական բազմաթիվ խոչընդոտների հանդիպեց, պայմանավորված ոչ միայն նախկին պետությունների հետ առևտրային համաձայնագրերի խախտմամբ, շուկայական տնտեսություն վարելու զրոյական մակարդակով, այլ նաև 1988թ. երկրաշարժի հետևանքների վերացման աշխատանքներով, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ, որը սահմանափակելով հակամարտող երկրների միջև հարաբերությունները, հանգեցրեց երկարաժամկետ տնտեսական շրջափակման և տնտեսական անկման մեծ ծավալների: Վերջին 16 տարիների շարունակական բարձր աճի դիմաց 2009-ին առաջին անգամ Հայաստանում գրանցվեց տնտեսական անկում: Անկումը, ըստ էության, սկսվել էր դեռևս 2008-ի վերջին, որն առավել արագացավ 2009-ի սկզբին և մարեց տարեվերջին:

Արդյունքում, 2008-ին ակնկալվող բարձր տնտեսական աճի փոխարեն Հայաստանում գրանցվեց ընդամենը 6.9 տոկոս աճ, իսկ արդեն 2009 թվականին

[1] https://asue.am/upload/files/amberd-economic-policy/12_Tavadyan_nor_.pdf

գրանցվեց 14.2 տոկոս անկում: Տնտեսական անկման հետևանք հանդիսացավ մասսայական գործազրկությունը, որն ուղեկցվեց բնակչության մեծ արտագաղթով. ըստ որոշ գնահատականների մոտ 500 հազ. մարդ:




**Գծապատկեր 2.** ՀՆԱ-ի հավելաճի տեմպը Հայաստանում 2008-2010 թվականներին, ամսեկան ցուցանիշներ, տոկոս նախորդ տարվա համեմատ[1]

Կառավարությունը մշակեց և ներդրեց հակաճգնաժամային միջոցառումների ընդգրկուն փաթեթ, որը թույլ տվեց նվազեցնել սոցիալական ազդեցությունը և արդեն տարվա երկրորդ կեսից զսպել անկումը: Արդեն 2010-ի սկզբից նկատվեց տնտեսական վերականգնում: 2011-ին Հայաստանի տնտեսության վերականգնման տեմպը փոքր-ինչ արագացավ: 2010 թվականին գրանցված 2.2 տոկոս տնտեսական աճի դիմաց 2011-ին գրանցվեց 4.7 տոկոս աճ: 2012-ին Հայաստանում գրանցվել է իրական ՀՆԱ-ի բավականին մեծ աճ՝ 7.2 տոկոս, նախորդ տարվա 4.7-ի դիմաց: 2010-2012 թվականների ընթացքում տնտեսական աճը հիմնականում տեղի ուներ առևտրի և ծառայությունների ոլորտի հաշվին:

Հայաստանը, լինելով փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, շատ արագ է արձագանքում համաշխարհային տնտեսական զարգացումներին: Դրանով էլ պայմանավորված ենթադրվում է, որ ՀՀ տնտեսության զարգացումը պետք է լինի հիմնական գործընկեր երկրների տնտեսական զարգացումների ուղղվածությանը համահունչ՝ պահպանելով ՀՀ տնտեսության աճի միտումները նաև միջնաժամկետ հատվածում:

2018-2020 թվականներին կառավարությունը նախատեսում է միջինը 5,3 տոկոս տնտեսական աճ, որի հիմնական շարժիչ ուժերն են արդյունաբերությունը և ծառայությունների ոլորտը: Արտահանումը պետք է լինի Հայաստանի

[1] ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՙՀայաստանի տնտեսական զեկույց 2010. Տնտեսության դիվերսիֆիկացման և արտահանման խրախուսման պահանջը՚, էջ 10:

տնտեսության զարգացման հիմնական շարժիչը: Պետք է հասկանալ, թե ինչ կարող է արտադրվել Հայաստանում՝ ինտեգրվելու համաշխարհային արժեշղթաներում և պետական քաղաքականությունն ուղղել մշակող այնպիսի ճյուղերի խթանմանը, որոնք ունեն արտահանման ներուժ և դրսի շուկաներում հաստատված մրցունակություն:

**Աղյուսակ 2.** ՀՆԱ իրական աճի (կուտակային) կանխատեսման հավանականությունների բաշխում[1]

| ՀՆԱ իրական աճի (կուտակային) կանխատեսման հավանականությունների բաշխում | | |
|---|---|---|
| Ժամանակահատված | 30% հավանականության միջակայք | 90% հավանականության միջակայք |
| 2018 հունվար-դեկտեմբեր / 2017 հունվար-դեկտեմբեր | 4.6 - 5.1 | 3.8 - 5.8 |
| 2019 հունվար-դեկտեմբեր / 2018 հունվար-դեկտեմբեր | 4.4 - 5.5 | 2.3 - 7.0 |
| 2020 հունվար-դեկտեմբեր / 2019 հունվար-դեկտեմբեր | 3.9 - 5.4 | 1.2 - 7.3 |
| 2021 հունվար-սեպտեմբեր / 2020 հունվար-սեպտեմբեր | 3.7 - 5.3 | 0.6 – 7.5 |

Հիմնական կանխատեսումների ռիսկերը մեծապես կախված են համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներից: Եթե գործընկեր երկրների հետագա զարգացումները լինեն ավելի բարենպաստ, քան կանխատեսումներն են, ապա ՀՀ տնտեսական աճը կլինի ավելի բարձր: Նավթի միջազգային գների ակնկալվածից ավելի բարձր մակարդակը և հումքային այլ ապրանքների գների աճը կազդեն մեր երկրի ՀՆԱ-ի կանխատեսվածից ավելի բարձր աճի վրա՝ հումքի արտահանմամբ պայմանավորված արտադրության ծավալների աճի միջոցով (մետաղների գների ավելի բարձր մակարդակի դրսևորման դեպքերում): Կառավարության կողմից վարվող ներդրումների ներգրավման քաղաքականության ազդեցությամբ պայմանավորված և Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության արդյունքում սպասվածից ավելի օտարերկրյա

[1] https://www.cba.am/Storage/AM/downloads/press-release/Grafs%20gnach18-4.xls ,աղյուսակ 2

ներդրումների ներգրավման և արտահանման շուկաների ավելի արագ ընդլայնման արդյունքում տնտեսական աճի մակարդակը նույնպես կարող է կանխատեսվածից ավելի բարձր լինել:

Եթե ՀՀ կառավարության կողմից իրականացվող տնտեսական բարեփոխումների՝ հատկապես գործարար միջավայրի, ինչպես նաև արդյունաբերական ապրանքների արտահանման խթանման և ներդրումների ներգրավման ուղղությամբ իրականացվող քաղաքականության արդյունքները արտահայտվեն ավելի արագ, քան ակնկալվում էր, ապա տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր: Վարկավորման աճի արագացումը դրական ազդեցություն կարող է ունենալ տնտեսության ակտիվացման վրա և տնտեսական աճի մակարդակը կլինի կանխատեսվածից ավելի բարձր:

Տարածաշրջանային ռազմական հակամարտությունները, ներքաղաքական անկայունությունները, հարևան պետությունների հետ քաղաքական հակադրությունները էական ռիսկեր են առաջացնում տնտեսական աճի ապահովման համար: Բնակլիմայական անբարենպաստ պայմանների շարունակական դրսևորման հետևանքով գյուղատնտեսության ճյուղում հնարավոր ավելի ցածր աճի արձանագրումն է, որի պայմաններում տնտեսական աճի մակարդակը կարող է կանխատեսվածից ավելի ցածր լինել:

Այսպիսով՝ Հայաստանը տնտեսական աճի ապահովման նոր ուղիների ներդրման կարիք ունի, որը պետք է ուղղված լինի տնտեսության մրցունակ ճյուղերի բացահայտմանը և արտահանելի հատվածի զարգացմանը:

**Բանալի բառեր** - տնտեսական աճ, ՀՆԱ, հավելաճի տեմպ, տնտեսական անկում, ֆինանսատնտեսական ճգնաժամ, տնտեսական վերականգնում, արտահանման ներուժ:

**Микаел Микаелян, Нвард Меликсетян, Экономический рост и его проявление в Армени** - Экономический рост - наиболее важный фактор перспективного развития страны и ее экономического процветания, который имеет экономическое и политическое значение для государства, жизненное значение для населения страны. Оно характеризует рост реального дохода в экономике.

В статье представлены сущность и значение экономического роста для стран, способы оценки. Был проведен анализ динамики валового внутреннего продукта Армении для финансово-экономического кризиса 2009 года, докризисного и посткризисного периода. В результате были оценены тенденции экономического развития РА и ожидаемые риски.

**Mikayel Mikayelyan, Nvard Meliksetyan, The Economic Growth and its manifestasion in Armenia** - Economic growth is the most important factor in the long-

term development of the country and its economic prosperity, which has economic and political significance for the state, vital importance for the population of the country. It characterizes the growth of real income in the economy.

The article presents the essence and importance of economic growth for countries, methods of assessment. The analysis of the dynamics of the gross domestic product of Armenia for the financial and economic crisis of 2009, pre-crisis and post-crisis period was carried out. As a result, the economic development trends of the Republic of Armenia and the expected risks were assessed.

# ԱԶԱՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

**ԵՐԱՆՈՒՀԻ ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ**
ՎՊՀ տնտեսագիտության ֆակուլտետ
«Կառավարում» բաժնի 4-րդ կուրս ուսանողուհի
E-mail: termovsisyan99@gmail.com

Ժամանակակից պայմաններում, երբ տնտեսությունների տարբեր ենթակառուցվածքների զարգացումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումը և արտահանման ծավալների մեծացումը կարևոր հրամայական են դարձել ցանկացած երկրի համար և երկրի զարգացման ու բարեկեցության թիվ մեկ գրավականն են, նոր ազատ տնտեսական գոտիների ստեղծումը հնարավորություն է ընձեռում հասնել վերը թվարկված նպատակներին, ներդնել առաջադեմ տեխնոլոգիաներ և դրանց միջոցով նպաստել արտահանման ծավալների աճին և դիվերսիֆիկացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, արտարժութային եկամուտների ավելացմանը, կայուն տնտեսական աճի ապահովմանը, ինչպես նաև ազգային և համաշխարհային տնտեսությունների միջև ամուր կապերի, համագործակցությունների ստեղծմանը: *Ազատ տնտեսական գոտիները երկրի տնտեսական, արտաքին առևտրի, ինվեստիցիոն հատուկ արտոնյալ ռեժիմով տարածքներ են, որտեղ պայմաններ են ստեղծվում արտասահմանյան և ազգային ձեռնարկատիրության, ապրանքների ներմուծման և արտահանման համար* [1]:

**ՄԱԿ-ի փորձագետների բնորոշմամբ**՝ «ԱՏԳ-ները տարածություններ են, առանց մաքսատուրքերի և առևտրական ռեժիմի սահմանափակ արդյունաբերական շուկաներ, որտեղ արտահանման համար արտադրանք թողարկող ֆիրմաներն օգտվում են տարբեր հարկային և ֆինանսական արտոնություններից» [2]:

ԱՏԳ-ների ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է կազմակերպող երկրների սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով, նրանց ռազմավարական պլաններով: Դրա համար էլ ԱՏԳ-ների ստեղծման պատճառները և նպատակները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարող են տարբեր լինել: ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում ԱՏԳ-ներ ստեղծվել են արտաքին տնտեսական կապերի, տարածաշրջանային քաղաքականության ակտիվացման համար՝ նպատակ ունենալով աշխուժացնել տնտեսապես անկում ապրած շրջանների մանր ու միջին բիզնեսը, հավասարեցնել միջտարածքային տարբերությունները: Խնդիրներն իրականացնելու համար նման ձեռնարկություններին տրամադր-

[1] **Ա. Հովակիմյան** «Միջազգային տնտեսական հարաբերություններ», Երևան, 2007 թ. , էջ 150:
[2] https://en.wikipedia.org/wiki/Free_economic_zone

վել են ազատ գործունեության հնարավորություններ և զգալի ֆինանսական արտոնություններ: Այդ ծրագրերը չունեին արտասահմանյան կապիտալի ներգրավման հատուկ կողմնորոշում: Մեծ Բրիտանիային առավել բնորոշ են ձեռնարկատիրական գոտիները, Շվեյցարիային՝ ապահովագրական և բանկային:

Ի տարբերություն զարգացած երկրների, զարգացող երկրներում ԱՏԳ-ների ստեղծումը հիմնվում է արտասահմանյան կապիտալի ներգրավման, տեխնոլոգիաների, արդյունաբերության արդիականացման, աշխատուժի որակավորման բարձրացման վրա: Բացի նշված նպատակներից, ԱՏԳ-ների ստեղծումը կապվում է երեք հիմնական խնդիրների հետ: Դրանք են՝

• արդյունաբերական ապրանքների արտահանման խթանումը և դրա հիման վրա արժութային միջոցների ստեղծումը,

• զբաղվածությունը և տնտեսական աճը,

• տնտեսվարման նոր մեթոդների փորձարկումը [1]:

Ըստ տնտեսական հատկանիշների, տարբեր կազմակերպչական ձևերի և նպատակային նշանակության՝ ռուս մասնագետների կողմից մշակվել է ԱՏԳ մոտավոր դասակարգում, այն է՝ առևտրական, արդյունաբերական-արտադրական, տեխնիկաներդրումային, սերվիսային, կոմպլեքսային, միջազգային ԱՏԳ:

*Տեխնիկաներդրումային գոտիներում* կենտրոնացվում են ազգային և արտասահմանյան հետազոտական, նախագծային, գիտաարտադրական ֆիրմաները, որոնք օգտվում են հարկային և ֆինանսական արտոնությունների միասնական համակարգից: Ամենաշատ տեխնիկաներդրումային գոտիներ ունեն ԱՄՆ-ն, Ճապոնիան, Չինաստանը: Սրա մեջ մտնում են տեխնոպարկերը, տեխնոպոլիսները [2]: ՅՈՒՆԵՍԿՕ-ի տվյալներով տեխնոպարկերի թիվը դեռևս 2010 թ.-ին եղել է 400:

2013 թ.-ին Եվրոմիության կողմից իրականացված զեկույցի մեջ նշվում է, որ ԵՄ երկրներում գործում են ավելի քան 366 տեխնոպարկեր, որոնք զբաղեցնում են ավելի քան 28 միլիոն մ$^2$ տարածք և նրանցում գործում են 40 000 կազմակերպություններ՝ 750 000 աշխատակիցներով: Ըստ այդ հետազոտության, այդպիսի տեխնոպարկերի ստեղծման համար 2000-2012 թթ.-ների ընթացքում արվել են մոտավորապես 11.7 միլիարդ դոլարի ներդրումներ, որոնցից 4.8 միլիարդը՝ պետական ֆինանսավորմամբ:

Չինաստանում գործում են ամենաշատ քանակով տեխնոպարկերը. 2016 թ.-ին գործում էին ավելի քան 156 տեխնոպարկեր: Տեխնոպարկերի ընձեռած հնարավորություններից մեկը այն է, որ առաջին երկու տարիների ընթացքում ընկերությունները վճարում են ընդամենը 15 տոկոս եկամտային հարկ: 2017 թ.-ին

---

[1] **Ա. Հովակիմյան** «Միջազգային տնտեսական հարաբերություններ», Երևան, 2007 թ. , էջ 151

[2] **Ա. Հովակիմյան** «Համաշխարհային էկոնոմիկա և միջազգային տնտեսական հարաբերություններ», Երևան, 2013, էջ 230

156 տեխնոպարկերը ապահովել են ՀՆԱ-ի 11.5 տոկոսը՝ այսինքն մոտավոր 1.42 տրիլիոն դոլար[1]:

Ըստ ԵՄ-ի կողմից 2019 թ.-ին իրականացված «Համաշխարհային ներդրումների հաշվետվության»՝ 147 երկրներում գործում են 5 383 ազատ տնտեսական գոտիներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ԱՏԳ-ների բաշխումը ըստ տարածաշրջանների [2]

| | Ազատ տնտեսական գոտիների ընդհանուր քանակը | Նախատեսված ԱՏԳ-ներ |
|---|---|---|
| Ամբողջ աշխարհում | 5383 | 507 |
| Զարգացած երկրներ | 374 | .. |
| Եվրոպա | 105 | .. |
| Հյուսիսային Ամերիկա | 262 | .. |
| Զարգացող երկրներ | 4772 | 502 |
| Ասիա | 4046 | 419 |
| Արևելյան Ասիա | 2645 | .. |
| Չինաստան | 2543 | .. |
| Հարավարևելյան Ասիա | 737 | 235 |
| Հարավային Ասիա | 456 | 184 |
| Հնդկաստան | 373 | 61 |
| Արևմտյան Ասիա | 208 | .. |
| Աֆրիկա | 237 | 53 |
| Լատինական Ամերիկա | 486 | 4 |
| Անցումային երկրներ | 237 | 5 |
| Թույլ զարգացած երկրներ (Least Developed Countries) | 173 | 140 |
| Փակ զարգացող երկրներ (Landlocked developing countries) | 146 | 37 |

[1] United Nations conference on trade and development (UNCTAD), «World Investment Report 2019 - Special Economic Zones», page 133-134:
[2] UNCTAD, «World Investment Report 2019 - Special Economic Zones », page 138

| | | |
|---|---|---|
| **Զարգացող փոքր կղզիներ (Small Island Developing States)** | 33 | 10 |

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, ԱՏԳ-ների ամենամեծ քանակությունը տեղակայված է հենց Ասիայում:

Ասիական երկրներում գործող ազատ տնտեսական գոտիների ընդհանուր քանակով գերիշխող դերում է Չինաստանը՝ 2 543 ԱՏԳ-ներով, հետո գալիս է Ֆիլիպինները՝ 528, և եռյակը եզրափակում է Հնդկաստանը՝ 373 ԱՏԳ-ներով (գրաֆիկ 1):




**Գրաֆիկ 1.** ԱՏԳ-ները ասիական երկրներում [1]

Որպես ազատ տնտեսական գոտիների քանակով գերակշիռ երկիր, ուսումնասիրությունների առիթ է դառնում հենց Չինաստանի օրինակը: Չինաստանի ազատ տնտեսական գոտիների հաջողությունը գրավում է ամբողջ աշխարհի ուշադրությունը, քանի որ դրանք Չինաստանի տնտեսական բարեփոխումների փորձարկման հիմքն էին և գտնվում են սոցիալիստական համակարգի ու շուկայական տնտեսության ներդաշնակ համադրման առաջնագծում [2]:

Չինաստանի արտաքին հարաբերությունների համակարգի բարեփոխումը ենթադրում էր՝

- կառավարման բոլոր մակարդակների կատարելագործում,
- արտահանման արտադրանքի կառուցվածքի օպտիմալացում,
- օտարերկրյա ներդրումների ներգրավում, ներառյալ արտաքին վարկեր,

-տնտեսական, մասնավոր գործընկերության և գիտատեխնիկական համագործակցության ձևերի մշակում:

[1] UNCTAD, «World Investment Report 2019 - Special Economic Zones», page 142

[2] **A. Herlevi,** «What's So Special about Special Economic Zones? China's National and Provincial-Level Development Zones», 2016

Չինաստանի արտաքին տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնական սկզբունքը բաց քաղաքականությունն է: Եվ նորանոր ներդրումներ գրավելու ու ներդրումային միջավայրը խթանելու լավագույն տարբերակը հենց ԱՏԳ-ներն են [1]:

Ներկայումս Չինաստանում գործում են վեց խոշորագույն ազատ տնտեսական գոտիներ.

- Շենժեն
- Ժուհայ
- Շանտո
- Հյամեն
- Հայնան
- Քաշգար [2]

Չնայած այն հանգամանքին, որ Չինաստանի ազատ տնտեսական գոտիները ստեղծվել են 32 տարի առաջ, դրանց ի հայտ գալը ծառայեց որպես խթան տնտեսության արագ զարգացման, քաղաքների ու գյուղերի արտաքին տեսքի արագ փոփոխության և Չինաստանի պատմության մեջ բնակչության բարեկեցության առավել նշանակալի աճի համար: 2016 թ.-ին Չինաստանի վեց խոշորագույն ԱԳՏ-ների ընդհանուր տարածքը 154 000 կմ$^2$ էր, համախառն ներքին արդյունքը՝ 1.8545 տրիլիոն յուան, բյուջեի ընդհանուր եկամուտը՝ 611 միլիարդ յուան, իսկ ընդհանուր ներմուծումը և արտահանումը ՝ 565.8 միլիարդ յուան: Այսպիսով, զբաղեցնելով ՉԺՀ-ի ընդհանուր տարածքի ընդամենը 0.62 տոկոսը, այս վեց ազատ տնտեսական գոտիները ապահովել են երկրի ՀՆԱ-ի 6.04 տոկոսը, ինչպես նաև բյուջեի եկամուտների 7 տոկոսը և ընդհանուր ներմուծման ու արտահանման 18.57 տոկոսը:

ԱՏԳ-ները ունեն որոշակի առավելություններ՝ կապված հարկային դրույքաչափերի հետ: Ըստ Չինաստանի հարկային օրենսդրության՝ ԱՏԳ շահագործողների գործունեությունը չի հարկվում: Իսկ արդեն երկու տարուց հետո հարկվում են արտոնյալ դրույքաչափերով, որը 2019 թ.-ին կազմել է 15 տոկոս՝ 2012 թվականի համեմատ նվազելով 10 տոկոսով:

Չինաստանում ԱՏԳ-ների ստեղծումը և նրանց մուտքը համաշխարհային շուկա հանգեցրեց տնտեսական բարձր ցուցանիշների: ԱՏԳ-ների հիմնական ձեռքբերումներից են՝

- Չինաստանում տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովում,
- մեծ քանակությամբ արտաքին կապիտալի ներգրավում տնտեսության մեջ,
- աշխատանքի արտադրողականության աճ,

[1] С. Г. Тер-Акопов, «Специальные экономические зоны Китая как важная часть экономического роста», 2013, стр. 38

[2] https://www.tandfonline.com/doi/full/10.1080/21681376.2018.1430612

• բնակչության ընդհանուր բարեկեցության և սոցիալական ապահովության բարձրացում [1]:

Զարգացած տնտեսություն ունեցող երկրներում ԱՏԳ-ների քանակով գերակշիռ դիրք ունի ԱՄՆ-ն՝ շուրջ 262 ԱՏԳ, նրանց հաջորդում են Լեհաստանը և Լիտվիան (գրաֆիկ 2):




**Գրաֆիկ 2.** ԱՏԳ-ները զարգացած երկրներում [2]

Ամերիկյան ազատ տնտեսական գոտիների մասին խոսելիս չի կարելի չանդրադառնալ Սիլիկոնյան հովտին, որտեղ գտնվում են աշխարհի խոշորագույն բարձր տեխնոլոգիական ձեռնարկությունները, ինչպես նաև հազարավոր նորաստեղծ ընկերություններ: Ըստ Ամերիկյան էլեկտրոնային ասոցիացիայի (AeA) կողմից կատարված հետազոտությունների՝ Սիլիկոնյան հովիտը ԱՄՆ-ի բարձր տեխնոլոգիաների երրորդ խոշորագույն կենտրոնն է՝ 225 300 բարձր տեխնոլոգիական աշխատատեղերով: Սիլիկոնյան հովիտն ունի ամենաբարձր միջին աշխատավարձը՝ 144 800 դոլար: Հիմնականում բարձր տեխնոլոգիական սեկտորի շնորհիվ այստեղ ապրում են ԱՄՆ միլիոնատերերի և միլիարդատերերի գերակշիռ մասը: Այն ԱՄՆ-ի խոշորագույն բարձր տեխնոլոգիական արդյունաբերական ձեռնարկությունն է:

2016 թ.-ին Սիլիկոնյան հովիտը ստանում էր ԱՄՆ ողջ վենչուրային ներդրումների 41 տոկոսը, իսկ 2017 թ.-ին՝ 46 տոկոսը: Այստեղ են գտնվում նշանավոր բարձր տեխնոլոգիական հազարավոր ընկերությունների գլխամասային գրասենյակները, ինչպիսիք են Google-ը, Facebook-ը, eBay-ը, Adobe systems-ը, Intel-ը և այլն[3]:

Ինչ վերաբերում է Լատինական Ամերիկայի երկրներին, այստեղ գերակշիռ դեր ունի Դոմինիկյան Հանրապետությունը՝ 73 գործող ԱՏԳ-ներով, հետո գալիս են Նիկարագուան, Կոստա Ռիկան և այլն (գրաֆիկ 3):

[1] С. Г.Тер-Акопов, «Специальные экономические зоны Китая как важная часть экономического роста», 2013, стр. 39, 41:

[2] UNCTAD, «World Investment Report 2019 - Special Economic Zones», page 152 ։

[3] https://en.wikipedia.org/wiki/Silicon_Valley




**Գրաֆիկ 3.** ԱՏԳ-ները Լատինական Ամերիկայում[1]

Դեռևս 2003 թ.-ին Դոմինիկյան Հանրապետությունում ազատ տնտեսական գոտիները ապահովում էին ՀՆԱ-ի 7.5 տոկոսը: Սակայն բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, մասնավորապես բազմաթիվ ճգնաժամերի, նավթի գների բարձացման արդյունքում այս թիվը սկսեց անկում ապրել ու փակվեցին բազմաթիվ ԱՏԳ-ներ: Անկումը շարունակվեց մինչև 2010 թվականը: Արդեն 2010 թ.-ին ազատ տնտեսական գոտիները սկսեցին դանդաղորեն վերականգնել իրենց ունեցած ազդեցությունը տնտեսության վրա, մասնավորապես 2010 թ.-ին ԱՏԳ-ները սկսեցին ապահովել ՀՆԱ-ի 3.2 տոկոսը:

2012 թվականից ի վեր արդյունաբերական պարկերի քանակը աճել է մեկ երրորդով՝ այսօր հասնելով 73-ի: ԱՏԳ-ներում արտադրությունը դիվերսիֆիկացված է. 2018 թ.-ին բժշկական և դեղագործական արտադրանքների արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման ավելի քան քառորդ մասը, էլեկտրական արտադրանքներինը՝ 16 տոկոս:

2017 թ.-ին ԱՏԳ-ները ապահովել են 166 000 ուղղակի աշխատատեղ, ինչպես նաև 250 000 անուղղակի աշխատատեղ, որոնց մեծամասնությունը հիմնականում ցածր որակավորում պահանջող աշխատանքներ էին (մոտ 71 տոկոս): ԱՏԳ-ները նաև համագործակցության պայմանագրեր են կնքում տեղական համալսարանների հետ: Տեխնիկական ուսուցման ազգային ուսուցման և ADOZONA ազատ տնտեսական գոտու կողմից ստեղծած ծրագրի միջոցով ԱՏԳ-ները ընդլայնում են իրենց աշխատակիցների քանակը: Մասնավորապես, կնքված պայմանագրերի միջոցով բարելավվում են կրթական ծրագրերի մակարդակը և դրանք համապատասխանեցվում են ԱՏԳ-ների համար անհրաժեշտ մակարդակի հետ [2]:

Իսկ այժմ անդրադարձ կատարենք Հայաստանին: Որպես զարգացման ուղին բռնած պետություն, Հայաստանի համար մշտապես կարևորվել են օտարերկրյա ներդրումների ներգրավումը և դրա միջոցով տնտեսական աճի ապահո-

[1] UNCTAD, «World Investment Report 2019 - Special Economic Zones», page 146:
[2] UNCTAD, «World Investment Report 2019 - Special Economic Zones», page 148-149

վումը: Ուստի ազատ տնտեսական գոտիների ստեղծումը օտարերկրյա ներդրումների ընձեռած առավելություններից օգտվելու լավագույն տարբերակն է: Սակայն, ոլորտը մի փոքր ուսումնասիրելու դեպքում պարզ է դառնում, որ առկա է խորքային վերլուծությունների և օրենսդրական բազայի կատարելագործման անհրաժեշտություն՝ հանրապետության տարածքում ԱՏԳ գործունեության համար լայն օրենսդրական հնարավորություններ ստեղծելու համար:

Հայաստանում ազատ տնտեսական գոտիների գործունեությունը կարգավորվում է 2011 թ.-ին ուժի մեջ մտած «Ազատ գոտիների մասին» օրենքով, որտեղ տրվում է ԱՏԳ-ների սահմանումը, ներկայացվում է շահագործողին թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ պահանջները, նրանց պարտավորությունները և իրավունքները, լուծարման դեպքում իրականացվող քայլերը և այլն: Համաձայն այդ օրենքի՝ ազատ տնտեսական գոտում շահագործողների թույլտվությունը տրվում է կառավարության որոշմամբ՝ հանձնաժողովի կողմից հայտատուի ներկայացրած գործարար ծրագրի գնահատման արդյունքում տրված եզրակացության հիման վրա: Իսկ դիմումատուի հայտի մերժման հիմք կարող է հանդիսանալ սահմանված գործարար ծրագրին ներկայացվող պահանջների անհամապատասխանությունը [1]:

Ազատ տնտեսական գոտում չեն կարող իրականացվել ռադիոակտիվ նյութերի արտադրություն և առևտուր, զենքի, զինամթերքի և պայթուցիկ նյութերի արտադրություն ու առևտուր, առանց ՀՀ օրեսդրությամբ սահմանված կարգով տրված թույլտվության թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ներմուծում, պահպանում, արտադրություն և առևտուր: Նաև արգելվում է ֆիզիկական անձանց, ինչպես նաև ապրանքների և տրանսպորտային միջոցների մուտքն ու ելքն ազատ տնտեսական գոտի՝ առանց մաքսային հսկողության: Ազատ տնտեսական գոտում գրանցված շահագործողի թույլտվությունը դադարեցվում է կառավարության որոշմամբ՝ լիազոր մարմնի եզրակացության հիման վրա [2]: Ներկայում Հայաստանում գործում են հետևյալ ազատ տնտեսական գոտիները:

Առաջինը 2013թ-ի օգոստոսի 1-ից գործող «Ալյանս» ազատ տնտեսական գոտին է, որը կազմակերպվել է «ՌԱՕ Մարս» և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ների տարածքում: Այստեղ կան 13 շահագործողներ [3]: Շահագործողների կողմից ներկայացված ներդրումային ծրագրերով 2013 թ.-ին նախատեսվել էր իրականացնել 163.7 մլն դոլարի ներդրում և ստեղծել 1540 աշխատատեղ, սակայն փաստացի իրականացվել է նախատեսված ներդրումների 3.46 տոկոսը՝ 5.67 միլիոն դոլարի չափով, և ստեղծվել է 314 աշխատատեղ՝ նախատեսվածի ընդամենը 20 տոկոսը: ԱՏԳ տարածքում կարելի է գործունեություն ծավալել ճշգրիտ ճարտարագիտության, դեղագործության և բիոտեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների,

[1] Ազատ տնտեսական գոտիների մասին օրենք՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=69095
[2] https://hetq.am/hy/article/72600
[3] Գործող ազատ տնտեսական գոտիներ՝ https://mineconomy.am/page/360

այլընտրանքային էներգետիկայի, արդյունաբերական դիզայնի, հեռահաղորդակցության, տեխնոլոգիական սարքավորումների, համակարգերի և նյութերի նախագծման և արտադրության ոլորտներում: Անդրադառնալով առաջին ԱՏԳ գրավչությանն ու առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ ներդրողները ստանում են այնպիսի արտոնություններ, որոնք չկան գործնականում աշխարհի ոչ մի ԱՏԳ-ում: Ծահագործող ընկերությունն ազատվում է ավելացված արժեքի հարկից, ներմուծման և արտահանման մաքսատուրքերից, շահութահարկից, գույքահարկից: Սակայն սոցվճարումները կատարվում են ըստ Հայաստանում գործող կարգի, այդ թվում, հաշվի առնելով, որ 2013 թ. հունվարի 1-ից գործատուն մեկ միասնական եկամտահարկ է մուծում, որտեղ ներառվում են նաև սոցվճարումները: Բացի այդ, չկան արժութային սահմանափակումներ, առկա է կապիտալի շահույթի և դիվիդենտների ազատ տեղափոխում [1]:

Հաջորդը 2015թ-ին բացված «Մերիդիան» ազատ տնտեսական գոտին է, որը 2018 թվականի տվյալներով ուներ 6 շահագործող՝ 56.3 մլն դոլարի հայտարարված ներդրումներով ու 355 աշխատատեղով: 2018 թ.-ին իրականացվել է 525 000 դոլարի ներդրում, ստեղծվել՝ 181աշխատատեղ: Այս գոտում, որպես գործունեության տեսակ, սահմանված են արտադրաարդյունաբերական ոլորտները, ինչպիսիք են ոսկերչությունը, ակնագործությունը ու ժամագործությունը[2]:

Հաջորդը Մեղրիի ազատ տնտեսական գոտին է, որը համարվում է տարածաշրջանային ԱՏԳ: Նրա գործունեությունը սկսվել է 2017 թվականի դեկտեմբերի 15-ից, երբ որ ավարտվեցին բոլոր նախապատրաստական աշխատանքները և ստեղծվեցին անհրաժեշտ ենթակառուցվածքներ՝ գործունեությունը ապահովելու համար: Գոտու կազմակերպիչները նախատեսում էին առաջիկա տարիներին ներգրավել 50-70 շահագործողներ, ովքեր կիրականացնեին շուրջ 100-130 մլն դոլարի ներդրումներ, կստեղծեին 1500 աշխատատեղ և կարտահանեին 250 միլիոն դոլարի ապրանքներ և ծառայություններ: Իրանի հետ սահմանակից տարածքում ստեղծվող ազատ տնտեսական գոտին, հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, առևտրային և լոգիստիկ հնարավորությունները, Հայաստանի բազմավեկտոր առևտրային արտոնյալ ռեժիմները, կարող է կամուրջ դառնալ Իրանի, ԵԱՏՄ և ԵՄ երկրների միջև: Ներկայում Մեղրիի Ազատ տնտեսական գոտում տնտեսական գործունեություն չի ծավալվում[3]:

2018 թ.-ին կառավարությունը հաստատեց ECOS ընկերության կողմից նոր ԱՏԳ-ի ստեղծումը Հրազդան քաղաքում: Ազատ տնտեսական գոտին հիմնականում ուղղված կլինի տեխնոլոգիական ոլորտի զարգացմանը: Կստեղծվեն պայմաններ արհեստական ինտելեկտով զբաղվելու, նոր տեխնոլոգիաներ ստեղծելու և IT ոլորտը զարգացնելու համար: Գոտու ստեղծման համար պահանջվելու է 100

---

[1] «Ալյանս ազատ տնտեսական գոտու պաշտոնական կայք՝ http://www.fez.am/eng/index.php?o=4#metka

[2] «Մերիդիան» ազատ տնտեսական գոտու պաշտոնական կայք՝ http://www.meridianfez.com/

[3] Գործող ազատ տնտեսական գոտիներ՝ https://mineconomy.am/page/360

միլիոն դոլար: ԱՏԳ շահագործողները 25 տարով ազատվելու են ԱԱՀ-ից և եկամտային հարկից [1]:

Ազատ տնտեսական գոտիների շարքում են դիտարկվում նաև Զվարթնոց օդանավակայանի և Գյումրու «Շիրակ» օդանավակայանի duty free-ները: Անմաքս առևտրի խանութները Հայաստանում հիմնադրվել են 2003 թ.-ին և կրում էին «Duty free Armenia» անվանումը: 2011 թ.-ին այն ձեռք է բերվել առաջատար Dufry ընկերության կողմից և վերանվանվել Dufry Armenia: «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի համալիրում գործում է Dufry Armenia-ի երեք անմաքս խանութ, որոնք ապահովում են բարձրակարգ սպասարկում: Dufry Armenia-ն առաջարկում է բարձրորակ ապրանքներ առաջատար արտադրողներից: Խանութներն առաջարկում են տեղական և միջազգային բարձրորակ ալկոհոլային խմիչքների, շոկոլադի, օծանելիքի և կոսմետիկայի լայն տեսականի, նորաձև տեքստիլ և կաշվե իրեր, աքսեսուարներ, խաղալիքներ և այլ ապրանքներ [2]:

Մոտ ապագայում նախատեսվում է ստեղծել ևս մեկ ԱՏԳ Գյումրիում, որը կզբաղվի լոգիստիկ ծառայություններով: Բիզնես նախագիծը հեղինակել է «Եվրասիական լոգիստիկ պարկ ազատ տնտեսական գոտի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ազատ տնտեսական գոտու ստեղծման համար կարևոր նշանակություն ունեն Գյումրիի միջազգային օդանավակայանի առկայությունը, «Հյուսիս-հարավ» ճանապարհին ու երկաթուղին: Նախագծով առաջիկա 10-12 տարիների ընթացքում նախատեսվում է կառուցել 320 հա տարածքով ազատ տնտեսական գոտի: Ընդ որում, շինարարության առաջին փուլը կգործարկվի 30 հա տարածքի վրա: Ազատ տնտեսական գոտու ամբողջական գործարկմամբ աշխատանքով կապահովվի 13 հազար մարդ [3]:

Զարգացած տնտեսություն ունեցող երկրների փորձը գալիս է ապացուցելու ԱՏԳ-ների մասնակցությունը և արդյունավետությունը ցանկացած տնտեսության զարգացման գործում: Բայց, ինչպես տեսանք, հայկական ազատ տնտեսական գոտիները դեռևս չեն կարողանում գործել ամբողջական արդյունավետությամբ: Ոլորտում առկա են բազմաթիվ խնդիրներ, մասնավորապես կապված չարաշահումների և վերահսկողության պակասի հետ: Ուստի առկա խնդիրները բացահայտելու, դրանք վերացնելու և դրական փոփոխություններ արձանագրելու համար առաջին հերթին անհրաժեշտ է իրականացնել խորքային վերլուծություններ, ուսումնասիրել զարգացած երկրների համանման հաջողված փորձը, կազմակերպել միջոցառումներ պետական մակարդակով՝ արդեն իսկ գոյություն ունեցող գոտիների գործունեությունը բարելավելու և նոր ԱՏԳ-ներ ստեղծելու համար, քանի որ ներկայիս ժամանակահատվածում, երբ տնտեսության զարգացումը երկրի կայունության պահպանման կարևորագույն հրամայականն է, ա-

[1]https://medium.com/ecos-am/armenian-government-gives-green-light-to-free-economic-zone-239e45edda87
[2] http://www.zvartnots.aero/Content/Dufry
[3] https://armeniasputnik.am/economy/20190829/20219212/

զատ տնտեսական գոտիները հնարավորություն կտան ստեղծել զարգացման իրական հնարավորություններ ու հեռանկարներ:

**Բանալի բառեր** - Ազատ տնտեսական գոտի, օտարերկրյա ներդրումներ, տեխնոպարկ, տեխնոպոլիս, տնտեսական կայունություն:

**Ерануи Тер-Можсисян, Анализ и оценка экономической эффективности свободных экономических зон** - В данной работе демонстрируется сущность свободных экономических зон, их положительное влияние на экономику, анализ аналогичного опыта стран с развитой и развивающейся экономикой. А также изучается их ключевое значение и влияние на экономику Армении, перспективы развития и необходимые для этого факторы.

**Eranuhi Ter-Movsisyan, Analysis and evaluation of economic efficiency of free economic zones** - In this work is demonstrated the essence of free economic zones, their positive impact on the economy, the analysis of similar experience of countries with developed and developing economies, as well as is studied their impact and key importance for Armenian economy, development prospects and necessary factors.

# ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԿՐՃԱՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

**ԱԼԼԱ ՍԱՐԳՍՅԱՆ**
ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի «ֆինանսներ»
բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի
E-mail: allasargsyan@bk.ru

Պետության տնտեսության կայուն զարգացում ապահովելու համար անհրաժեշտ է ամբողջական և ճշգրիտ պատկերացում ունենալ աղքատություն երևույթի վերաբերյալ: «Աղքատություն» հասկացությունն ինքնին հակասական է, քանի որ տարբեր ժամանակաշրջաններում այն եղել է տնտեսագետների ուշադրության կենտրոնում, և իրականացվել է համակողմանի ու բազմագործոն վերլուծություն, որի արդյունքներում ներկայացվել են տարբեր, երբեմն միմյանց հակառակ բևեռներում գտնվող սահմանումներ: Տնտեսագիտական գրականության մեջ նշվում են աղքատության սահմանման բավականին շատ տարբերակներ, որոնք մեր օրերում ընդհանրացվել և 3 կետերի տեսքով ներկայացվում են Համաշխարհային բանկի կողմից, համաձայն որի աղքատությունը իրենից ներկայացնում է՝

- հնարավորությունների պակաս՝ եկամուտների, սպառման և ծախսերի ցածր մակարդակ, սոցիալական կապիտալի ցածր մակարդակ,
- սոցիալական ծառայությունների ցածր մատչելիություն՝ հասարակության տեսակետից անհրաժեշտ նվազագույն կրթություն ստանալու և առողջության բավարար մակարդակ ապահովելու սահմանափակ հնարավորություններ,
- անվտանգության ցածր մակարդակ՝ տարբեր ռիսկերի նկատմամբ (աշխատանքի կորուստ, հիվանդություն, բնական աղետներ և այլն) պաշտպանվածության ցածր աստիճան[1]:

Կարևորենք հատկապես 3-րդ կետը, քանի որ աղքատությունը ենթադրում է ոչ միայն անվտանգության ցածր մակարդակ, այլև աղքատության մակարդակի կրճատմանն ուղղվող միջոցառումների իրականացման արդյունավետությունից է կախված երկրի ազգային անվտանգությունը, քանի որ աղքատության խորացումը կարող է բերել ազգային անվտանգության թուլացմանը, ժողովրդագրական իրավիճակի վատթարացմանը, տնտեսական զարգացման ու տնտեսական աճի կաշկանդմանը, կյանքի որակի անկմանը, արտագաղթի մեծացմանը, հասարակությունում սոցիալական հակասությունների սրմանը և այլն: Այս առումով, ՀՀ տնտեսության համար աղքատության հիմնախնդրի լուծումն ունի առանձնահա-

[1] Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայք էջ, https://data.worldbank.org/indicator/SL.UEM.TOTL.ZS?locations=AM

տուկ նշանակություն: Բնականաբար, յուրաքանչյուր երկրի դեպքում աղքատության առաջացման պատճառները սուբյեկտիվ բնույթ են կրում: Հայաստանում աղքատությունը արտահայտիչ կերպով դրսևորվեց 1990-ականներից, որին նպաստեցին 1988 թվականի Սպիտակի երկրաշարժը, դրամափոխությունը, որի հետևաքնով հազարավոր մարդկանց տարիների կուտակածը հավասարեցվեց հողին, ԽՍՀՄ կազմալուծումը և այլն:

Եկամուտների անհավասարաչափ բաշխումը առաջ է բերում բնակչության՝ սոցիալական խավերի տարանջատմանը: Միայն երկրաշարժի տարիներին հսկայական ծավալով դրամական օգնություն փոխանցվեց մեր երկրին, որը մեղմ ասված խելամտորեն չօգտագործվեց, որի հետևանքով բնակչության մի մասին հնարավորություն տրվեց հարստանալու, այն դեպքում, երբ բնակչության քանակապես ավելի մեծ մասը հայտնվեց սոցիալապես ոչ բարվոք վիճակում:

Ներկայումս ՀՀ անցումային տնտեսության մեջ արդիական խնդիր է դարձել աղքատության հաղթահարման հարցը, իսկ հարցի դրական լուծման համար խիստ կարևոր է աղքատության հիմնախնդրի համակողմանի և փաստարկված ուսումնասիրությունը:

Աղքատությունը, բնորոշ լինելով աշխարհի բոլոր երկրներին, միաժամանակ հարաբերական երևույթ է, քանի որ որոշ ապրանքների ձեռքբերումը հասարակության ստվար հատվածի համար կարող է շքեղություն թվալ, մյուսի համար՝ առօրյայի մի մասնիկ կազմել, մակրո մակարդակով եթե դիտարկենք նույն իրավիճակն է նաև պետությունների միջև: Այս մասին է վկայում այն փաստը, որ օրինակ ԱՄՆ-ում աղքատ են համարվում այն ընտանիքները, որոնց տարեկան եկամուտը չի հատում 25000 ԱՄՆ դոլարի սահմանը, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում 1 շնչին բաժին ընկնող տարեկան ՀՆԱ-ն 2018 թվականի տվյալներով կազմում է ընդամենը 12430 ԱՄՆ դոլար[1]:

Բնակչության աղքատությունը բնութագրվում է ոչ միայն անվանական եկամտի մեծությամբ, այլև եկամուտների սպառման կամ սպառողական ծախսերի կառուցվածքով: Զարգացած երկրներում ընդունված է աղքատ համարել այն ընտանքիներին, որոնք իրենց դրամական եկամտի 1/3-ից ավելին ծախսում են սննդամթերքի ձեռքբերման համար: Աղքատությունը գնահատվում է նաև իրական աշխատավարձի մակարդակով կամ գնողունակությամբ, սակայն առանձին դեպքերում կարող են կիրառվել նաև աղքատության գնահատման այլ ցուցանիշներ: Օրինակ Գերմանիայում ընդունված է աղքատ համարել այն մարդկանց, ովքեր շաբաթը գոնե մեկ անգամ գարեջրատուն չեն այցելում:

Ինչպես նշեցինք եկամուտների անհավասարություն և բևեռացում նկատվում է գրեթե բոլոր, այդ թվում և զարգացած երկրներում: Աշխարհում եկամուտ-

---

[1] Տե՛ս Համաշխարհային բանկի պաշտոնական կայք էջ, https://data.worldbank.org/indicator/ SL.UEM. TOTL.ZS?locations=AM

ների բաշխման անհավասարությամբ աչքի են ընկնում հատկապես Լատինական Ամերիկայի երկրները, որոնց ցուցանիշները միաժամանակ համադրելի են մեր հանրապետության ցուցանիշների հետ: Օրինակ՝ Բրազիլիայում ամենահարուստ 20% բնակչության տարեկան եկամուտները 32 անգամ գերազանցում են 20% ամենաաղքատ բնակչության եկամուտները: Հարկ է նշել, որ որոշ զարգացած երկրներում, մասնավորապես՝ ԱՄՆ-ում, եկամուտների բևեռացումը հիմնականում պայմանավորված է ոչ թե ծայրահեղ աղքատների, այլ ծայրահեղ հարուստների առկայությամբ[1]:

Փորձենք վերլուծել եկամուտների անհավասարաչափ բաշխման, հետևաբար աղքատության հիմնահարցերը ՀՀ-ում վերջին տարիների դրությամբ: ՀՀ-ում աղքատության հիմնախնդիրը ավելի օրհասական է դարձել 1990-ականներին, ինչը պայմանավորված է եղել էներգետիկ ճգնաժամով, դրամական բարեփոխմամբ, պատերազմական իրավիճակով, տնտեսական շրջափակմամբ և այլն:

Ներկայումս աղքատություն հասկացությունը փոխաբերական իմաստով հոգեհարազատ է դարձել Հայաստանի քաղաքացիների համար, և այն վերածվել է մի խնդրի, որի համապատասխան լուծումների նյութականացումը արդեն անհավանական է թվում ժողովրդի համար և որ ամենավտանգավորն է, հասարակության մեջ գնալով տիրապետող է դառնում վիճակի նկատմամբ խոր հարմարվողականությունն ու հանդուրժողականությունը: ՀՀ-ում եկամուտների անհավասարության մասին պատկերացում կազմելու համար դիտարկենք աղյուսակ 1-ը, որտեղ ներկայացված են 2014-2018 թվականների ընթացքում միջին ամսական աշխատավարձի և կենսաթոշակի չափը Հայաստանի Հանրապետությունում.

**Աղյուսակ 1.** Միջին ամսական աշխատավարձը և կենսաթոշակի չափը Հայաստանի Հանրապետությունում 2014-2018թվականներին, հազար դրամ[2]

| | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|---|---|
| Միջին ամսական աշխատավարձը, դրամ | 158580 | 171615 | 174445 | 17781 | 172727 |
| Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը, դրամ | 35813 | 40441 | 40397 | 40634 | 40478 |

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ում 2014-2018 թվականների ընթացքում միջին ամսական աշխատավարձի ծավալում և ամսական կենսաթոշակի միջին ցուցանիշում փոփոխությունները մոնոտոն բնույթ չեն կրում, այսինքն վերջին-

[1] Տե՛ս **Կիրակոսյան Գ. Ե.,** Տնտեսագիտությանտեսություն, Երևան 2009, էջ 472:
[2] Աղբյուրը ՀՀ Վիճակագրական կոմիտե, 2018 տարեգիրք, Երևան 2019:

ներս անընդհատ տատանվում են տարբեր գործոնների ազդեցության ներքո: Մասնավորապես 2018 թվականին գրանցված ցուցանիշների փոփոխությունը բացատրվում է քաղաքական իրավիճակի փոփոխությամբ: Սակայն, արդյո՞ք վերը թվարկված նյութական միջոցները բավարար են աղքատ չհամարվելու համար: Վերջինս պարզելու համար դիտարկենք նաև ՀՀ սպառողական զամբյուղը 2017 թվականի միջին ընթացիկ գներով.

**Աղյուսակ 2.** ՀՀ սպառողական զամբյուղը 2017թվականին, հազար դրամ[1]

| Պարենային զամբյուղի արժեքը | |
|---|---|
| **1.տարեկան կտրվածքով** | 405372.6 դրամ |
| **2.ամսական կտրվածքով** | 33781.1 դրամ |
| ***Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը*** | |
| **1.տարեկան կտրվածքով** | 717509.5 դրամ |
| **2.ամսական կտրվածքով** | 59792.5 դրամ |

Այսպիսով, երբ ունենք հստակ պատկեր և՛ միջին աշխատավարձի, միջին ամսական կենսաթոշակի, և՛ սպառողական զամբյուղի վերաբերյալ, թվում է, աղքատ համարվող քաղաքացիների տեսակարար կշիռը, ընդհանուր բնակչության կազմում պետք է չնչին լիներ, սակայն եթե հաշվի առնենք, որ ընտանիքներում միջինում բնակվում են 2-4 անդամներ և նրանցից հաճախ միայն մեկն է ապահովված աշխատանքով, այդ դեպքում աղքատության բարձր ցուցանիշը լիովին արդարացված է: 2017 թվականին աղքատության մակարդակը և աղքատության գիծը Հայաստանում ունեցել են հետևյալ պատկերը.




**Գծապատկեր 1.** Աղքատության մակարդակը և աղքատության գծերը 2017 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում[1]

[1] Տե՛ս ՀՀ Վիճակագրական կոմիտե, հետաքրքրաշարժ վիճակագրություն, հավելված 2:

Գծապատկերից պարզ է դառնում, որ 2017 թվականին Հայաստանում աղքատության պարենային գիծը կազմել է 24269դրամ, աղքատության ստորին գիծը՝ 34253դրամ, աղքատության վերին գիծը՝ 41612դրամ:

Այժմ ներկայացնենք բուն աղքատության ցուցանիշի փոփոխության շարժընթացը համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների՝ ըստ 2009 թվականի մեթոդաբանության, 2013-2017թվականների դրությամբ ՝




**Գծապատկեր 2.** Աղքատության մակարդակը ՀՀ-ում 2013-2017 թվականներին[2]

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ում 2013-2017 թվականների ընթացքում նկատվում է աղքատության մակարդակի նվազման դրական միտում: Սակայն միաժամանակ չենք կարող անտեսել արտաքին միգրացիայի հատկապես աշխատանքային միգրացիայի դերակատարումը: Գաղտնիք չէ, որ ՀՀ-ից արտագաղթում են հիմնականում գործազուրկները և սոցիալապես ծանր պայմաններում գտնվող ընտանիքները, ուստի կրճատվում է բնակչության ընդհանուր թիվը ու մնում են համեմատաբար նյութապես ավելի ապահովված ընտանիքները, հետևաբար աղքատության մակարդակը նվազում է, բացի ազքատության մակարդակից նվազում է նաև գործազրկության մակարդակը, քանի որ այս 2 ցուցանիշները սերտորեն փոխկապակցված են: Չնայած այստեղ ևս կա հակասություն, քանի որ դրական միտումը չպետք է լինի արտաքին միգրացիայի արդյունք, այլ

[2] Տե՛ս ՀՀ Վիճակագրական տարեգիրք 2017,Երևան 2018 էջ 290:

պետք է լինի պետության վարած արդյունավետ սոցիալական քաղաքականության վերջնարդյունք: 2017 թվականին աղքատության մակարդակը գրեթե 4 տոկոսով նվազել է 2016 թվականի համեմատ, այս փոփոխությունը կապված է նաև տնտեսական հատվածի աշխուժացման հետ: Այսպիսով, աղքատության մակարդակը 2017թ.-ին առաջին անգամ նվազել է 2008թ.-ի աղքատության մակարդակի համեմատ (27.6%)՝ 1.9 տոկոսային կետով[1]: Այսինքն վերջին 10 տարիների կտրվածքով ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2017 թվականին:

Հայաստանի Հանրապետությունում բնակչությունը բավականին անհավասարաչափ է բաշխված, հետևաբար այս ենթատեքստում կարևորվում է նաև աղքատության պատկերի դիտարկումը Երևան քաղաքում և Հայաստանի մարզերում: 2016 թվականի դրությամբ միջին հանրապետականից բարձր են Շիրակի, Լոռու, Տավուշի և Արմավիրի մարզերի ցուցանիշները: Շիրակի մարզում գրանցվել է հանրապետության կտրվածքով ամենաբարձր աղքատության մակարդակը, որտեղ աղքատության գծից ցածր է բնակչության մոտ 46%-ը[2]:

Նույն ժամանակահատվածում աճել է նաև ծայրահեղ աղքատության մակարդակը, ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ Երևանում և որոշ մարզերում՝ բացի Արարատի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերից: Այդուհանդերձ, ծայրահեղ աղքատության մակարդակն առավել բարձր է Շիրակի (3.7%), Լոռու (2.7%), ինչպես նաև Տավուշի մարզում և Երևանում (1.9%)[3]:

2016 թվականին Գեղարքունիքի մարզում ընդհանուր աղքատությունը կազմել է 28.8 տոկոս:

Այսպիսով, աղքատությունը համարվում է ցանկացած երկրի առանցքային հիմնախնդիրներից մեկը, քանի որ այն բնորոշ է աշխարհի գրեթե բոլոր երկրներին, բացի այդ վերջինս դասվում է այն մակրոտնտեսական ցուցանիշների թվին, որոնց միջոցով հնարավոր է դառնում զուգահեռներ անցկացնել տվյալ պետության և աշխարհի մնացած երկրների միջև: Այս տեսանկյունից բացառություն չի կազմում նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ Կառավարության կողմից իրականացվում է ակտիվ սոցիալական և պետական կարգավորում: Կառավարության 2019 թվականի գործունեության ծրագրում որպես գլխավոր նպատակ դիտարկվում է մինչև 2023 թվականը վերացնել ծայրահեղ աղքատությունը, էապես նվազեցնել աղքատությունը: Այս նպատակի իրագործման համար առանցքային նշանակություն պետք է ունենան բնակչության աղքատ խավի շրջանում

[1] Տե՛ս ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ըստ 2017 թվականի ՏՏԿԱՀ արդյունքների, էջ 45:
[2] Տե՛ս **Ավետիսյան Ս. Ս.,** ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, էջ 17: [3] Տե՛ս ՀՀ Վիճակագրական կոմիտե, Մաս 1 Աղքատության մակարդակը Հայաստանում 2008-2016 թթ., էջ 84
[3] Տե՛ս ՀՀ Վիճակագրական կոմիտե, Մաս 1 Աղքատության մակարդակը Հայաստանում 2008-2016 թթ., էջ 84

կրթության և աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը[1]:

ՀՀ Կառավարության գործունեության ծրագրով նախատեսվում է նաև կենսաթոշակների պարբերաբար բարձրացում ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ՝ գնաճի նկատմամբ: Քանի որ աղքատության և զբաղվածության միջև գոյություն ունի սերտ կապ, նախատեսված է բարելավել «կրթություն-աշխատաշուկա» փոխառնչությունը՝ խթանելով թափուր աշխատատեղերի համալրմանը համապատասխան մասնագետներով: Անշուշտ, մեր հանրապետությունը ունի որակյալ մասնագետների կարիք, և եթե կրթական ոլորտը կարողանա ապահովել արդի պահանջներին բավարարող մասնագետներ թափուր աշխատատեղերը կհամալրվեն հայ մասնագետների կողմից, միաժամանակ կնվազի գործազրկությունը, հետևաբար աղքատության մակարդակը, 2-րդը կկրճատվի օտարազգի մասնագետների քանակը մեր հանրապետությունում:

Մեծ ուշադրություն է դարձվում նաև կանանց տնտեսական հնարավորությունների ընդլայնմանը, այս մասին ևս հիշատակված է ՀՀ Կառավարության ծրագրում, որտեղ մասնավորապես շեշտադրումը դրված է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների իրականացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու վրա: Նոր հնարավորությունների ստեղծման տեսանկյունից կարևոր է նոր ծրագրերի ներդրումը՝ նպատակաուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը: Մեկ բան հստակ է. Հայաստանի Հանրապետությունը ունի աշխատատեղերի ստեղծման խնդիր, որի լուծումը հնարավորություն կտա միանգամից բարելավելու մի շարք ցուցանիշներ, հետևաբար պետք է ուշադրությունը հիմնականում սևեռել կրթություն-զբաղվածության ապահովում փոխառնչությանը:

Մեծ կարևորություն ունի նաև թիրախային ծրագրերի մշակումը հայրենադարձ ընտանիքների համար՝ առաջնահերթ դիտարկելով երիտասարդ ընտանիքներին: Առաջարկվում է ստեղծել տեղեկատվական նոր հարթակ երկրում առկա ներուժի օգտագործման, թափուր աշխատատեղերի ու առկա հնարավորությունները ճշգրիտ ներկայացնելու համար, քանի որ առանց հստակ պատկերացնելու շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը հայրենադարձ ընտանիքները ներգաղթելով կարող են հայտնվել ավելի վատթար վիճակում, քան մինչ ներգաղթը:

Աղքատության մակարդակը հնարավոր կլինի նվազեցնել նաև իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով: Խոսքը մասնավորապես վերաբերում է ծախսերի խելամիտ պլանավորմանը, այսինքն ինչպիսի համամասնությամբ պետք է օգտագործել ունեցած եկամուտները , որ մասը ուղղել դեպի սպառում և որը կուտակել: Տեղեկացվածության մակարդակի բարձրացումը կարող է

[1] Տե՛ս ՀՀ Կառավարության գործունեության ծրագիր 2019, էջ 28:

նպաստել նաև աղքատների կողմից՝ իրենց սոցիալական պայմանները այլևս չթաքցնելու սովորույթին, քանի որ բնակչության աղքատ հատվածը հիմնականում ունենում է վախի և ամոթի զգացում հասարակության արձագանքի ու կարծիքի հանդեպ:

Աղքատության մակարդակի նվազեցման գործում էական ազդեցություն կարող է թողնել գիտական նորույթների տեղայնացումը, ինչպես նաև արդի ոլորտների փորձի ներդրումը, վերջինիս վառ օրինակ է հանդիսանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, քանի որ մարդկային հասարակությունը քայլում է գիտատեխնիկական առաջընթացին զուգընթաց, իսկ տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, առաջիկա բավականին երկարատև շրջանում կրելու են արդիական բնույթ: Գավառ քաղաքում ևս գործում է տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն՝ «Luseen technologies»-ը, որը հնարավորություն է ընձեռում մարզի երիտասարդներին զարգացնելու իրենց մասնագիտական հմտությունները և հետագայում ապահովում է համապատասխան մասնագիտական աշխատանքով: Նկատենք, որ բացի այն հանգամանքից, որ կենտրոնը նպաստում է ոչ միայն գործազրկության, հետևաբար աղքատության մակարդակի նվազեցմանը, այլև երիտասարդներին խրախուսում է իրենց մտավոր ներուժը ի շահ մեր հանրապետության օգտագործելու, ինչպես նաև կանխում է արտաքին միգրացիայի աճը, քանի որ վերջինս վերաբերում է հատկապես երիտասարդներին՝ վերջին մի քանի տարիների կտրվածքով:

Արդի պայմաններում բավականին հեռանկարային է դիտվում նպաստավոր պայմանների ստեղծումը. փոքր և միջին բիզնեսի զարգացման գործընթացի խթանումը: ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվում են համապատասխան միջոցառումներ, բիզնես խորհրդատվություններ, մասնավորապես վերջին 5 տարիների ընթացքում տրամադրվել են 44000 խորհրդատվություններ, որոնցից շատերը հետագայում դարձել են հաջողված բիզնեսներ:

Առաջարկվում է նաև վերանայել պետության կողմից տրամադրվող սոցիալական տրանսֆերտների չափը, քանի որ համաշխարհային փորձը վկայում է, որ զարգացած երկրներում, արագ տեմպերով զարգացող երկրներում սոցիալական տրանսֆերտները կազմում են բնակչության եկամուտների առավելագույնը 5 տոկոսը, այն դեպքում երբ այդ ցուցանիշը մեր հանրապետությունում 2017 թվականինկազմել է 8 տոկոս գումարած 19.5 տոկոս մուտքեր տարադրամի վաճառքից: Տեսաբանները փաստում են, որ թվարկվածների ծավալը ունենում է հոգեբանական ազդեցություն և ինչքան հնարավոր լինի նվազեցնել այդ 2 ցուցանիշները՝ համապատասխանաբար բարձրացնելով աշխատավարձերը, այնքան երկիրը արագ տեմպերով կզարգանա և առավել հեշտությամբ կհաղթահարի ի հայտ եկած հիմնախնդիրները:

**Բանալի բառեր** - աղքատություն, աղքատության մակարդակի նվազեցում, պետական քաղաքականություն, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, եկամուտների անհավասարաչափ բաշխում:

**Алла Саргсян, Политика в отношении сокращения бедности в РА** - Решение проблем социально-экономического развития зависит от эффективности мер по сокращению бедности.

Вопрос сокращения бедности для экономики Армении имеет особое значение. В современной экономической литературе существует много концептуальных подходов к изучению бедности, однако есть много проблем, которые требуют срочного решения.

Поэтому эффективное осуществление политики, направленной на сокращение бедности, является ключом к развитию экономики страны и смягчению социальных проблем.

**Alla Sargsyan, Policy for poverty reduction in the Republic Of Armenia** - The solution of socio-economic development problemsdepends on the effectiveness of measures to reduce poverty.

The issue of poverty reduction for the economyof the RA is of particular importance. In modern economics literature there are many conceptual approaches to poverty studies, however,we notice thatthere are many problems that require urgent resolution.

Consequently, effective implementation of policies aimed at poverty reduction has a pivotal role  to the development of the country's economy and alleviation of social problems.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի զարգացման ռազմավարություն 2025՝ ընդունված է ՀՀ Կառավարության կողմից, 2014թվականի ապրիլին:

2. ՀՀ Կառավարության գործունեության ծրագիր 2019՝ ընդունված է 2019թվականի փետրվարի 19-ին:

3. Ավետիսյան Ս.Ս., ՀՀ տարածքային համաչափ զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, Երևան 2015:

4. Թադևոսյան Աղասի, Աղքատության հիմնախնդիրը և սոցիալական աջակցության քաղաքականությունը Հայաստանում, Երևան 2018:

5. Կիրակոսյան Գ. Ե., Տնտեսագիտության տեսություն, Երևան 2009:

6. www.armstat.am - Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե

7. www.worldbank.org - Համաշխարհային բանկի պաշտոնական կայքէջ

8. www.gov.am - Հայաստանի Հանրապետության Կառավարության կայքէջ

9. www.report.gov.am – ՀՀ կառավարության գործունեության արդյունքների հրապարակման պաշտոնական կայքէջ

# ՔՐԵԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՍԱՐՅԱՆ
Հայ - Ռուսական (Սլավոնական) Համալսարանի մագիստրատուրա
2-րդ կուրսի ուսանող
E-mail: hovhannes022@mail.ru

Խուլիգանությունը հանրորեն առավել վտանգավորություն ներկայացնող արարք է, որն էական վնաս է պատճառում ինչպես պետության և հասարակության շահերին, այնպես էլ քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին: Հետևաբար, խուլիգանության դեմ պայքարը եղել ու մնում է իրավապահ մարմինների առաջնահերթ խնդիրներից մեկը, որի լուծման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ քրեական օրենսդրության կատարելագործմամբ և դրա կիրառման միատեսակ պրակտիկայի ձևավորմամբ:

Խուլիգանությունը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելն է, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով[1]: Խուլիգանության հանցակազմի նման սահմանումը, միաժամանակ, և հանդիսանում է տվյալ հանցակազմի հասարակ տեսակը և սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով: Ընդհանրապես, թեկուզ և նեղ իմաստով, հասարակական կարգը չի կարելի նույնացվել հասարակական վայրի հետ, այն ընդունելի չէ, թե տեսական, թե գործնական առումով: Խուլիգանության համար քրեական պատասխանատվության պարտադիր պայմանը հասարակական կարգն է, ոչ թե հասարակական վայրը[2]: Խուլիգանությունը դասվում է հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործությունների թվին, և այն մեծ վտանգավորություն է ներկայացնում: Իրավակիրառ մարմինների կողմից, գործնականում, հասարակական կարգը երբեմն շփոթվում է հասարակական վայրում կարգ ու կանոնի հետ, որը հանգեցնում է այն սխալ հետևության, որ խուլիգանությունը կարող է կատարվել միայն հասարակական վայրում՝ հրապարակում, փողոցում, ստադիոնում, տրանսպորտում, կինոթատրոնում և այլ մարդաշատ տեղերում, և պարտադիր՝ մարդկանց ներկայությամբ: Սակայն, հասարակական կարգը կարող է խախտվել

---

[1] ՀՀ քրեական օրենսգիրք,<<Խուլիգանություն>> հոդ.258-րդ, Երևան, 2018թվական, էջ 147-148:

[2] Տե՛ս **Ա. Թամազյան,** <<Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը>>:

թե՛ հասարակական վայրում, թե՛ նրանից դուրս՝ ոչ հասարակական վայրում, թե՛ մարդկանց ներկայացմամբ, թե՛ նրանց բացակայության դեպքում:

Խուլիգանությունը համարվում է հասարակական կարգի դեմ ուղղված ամենավտանգավոր հանցագործություններից մեկը: <<Խուլիգան>> բառը առաջացել է ինչ-որ հանցագործ ընտանիքի ազգանունից: Այդ ազգանունով ընտանիքը XVIII դարում ապրելիս է եղել Լոնդոնում և նրա ընտանիքի անդամները աչքի են ընկել զայրացուցիչ և տարօրինակ վարքագծով[1]: 1833թ.-ի Ռուսական կայսրության քրեական օրենսգրքում պարունակվում էին օրենքներ և սահմանվում պատասխանատվություն հարբեցողության, անազնիվության, ինչպես նաև այլ անկարգությունների համար: Այս գործողությունները առաջին հերթին կատարվել են հասարակության առջև, և խախտել են հասարակական կարգը[2]:

Որոշ գիտնականներ նշում են որ խուլիգան բառը ի հայտ է եկել ռուսերեն <<Խուլա>> բառից, որը նշանակում է հայհոյել, դատապարտել: Չնայած այն կարծիքի բացակայությանը, թե ինչպես և որտեղ է առաջացել <<խուլիգանություն>> հասկացությունը, կարող ենք հստակ նշել որ ցանկացած իմաստով այն ունեցել է բացասական հասկացություն: Առաջին պաշտոնական հիշատակումը կապված է Սանկտ-Պետերբուրգի քաղաքապետ Վոլի հրամանով, որը 1892թ.-ին հրամայեց քաղաքի ոստիկաններին քայլեր ձեռնարկել մայրաքաղաքի անկարգություն անողների դեմ, որի տակ թաքնված էին փողոցային բռնավարողների խումբը: Ոստիկանությունը շարժվեց տվյալ հրամանով և վտարեց քաղաքի խուլիգաններին: Այսպես խուլիգան բառը ներխուժեց ոչ միայն քաղաքային, այլ նաև գյուղական բնակչության բառապաշարի մեջ, և այդ ժամանակից խուլիգան սկսեցին անվանել այն մարդկանց ովքեր վիճում էին մարդկանց գյուղական և աշխատանքային կյանքի հետ[3]:

Հայկական ՍՍՀ-ում <<խուլիգան>>, <<խուլիգանություն>> տերմինները առաջին անգամ գործածվեցին 1927թ.-ի քրեական օրենսգրքում: Մինչ այդ եղած օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում այդ տերմինների փոխարեն, որպես կանոն, գործածվում էին <<սրիկա>>, <<սրիկայություն>> անհաջող տերմինները: ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածը խուլիգանությունը որակում էր այսպես. <<Խուլիգանությունը, այսինքն անպատկառ և աննպատակ արարքները, որոնք զուգորդված են քաղաքացիների և հասարակության նկատմամբ բացահայտ

---

[1] Տե՛ս **Ա. Թ. Թովմասյան** <<Խուլիգանությունը և դրա պատժելիությունը>>, Երևան., 1968թ., էջ 8:

[2] Տե՛ս 1833 թ. Ռուսական կայսրության օրենքների ժողովածու, քրեական իրավունքի կանոնագիրք, էջ 141:

[3]**Люблинский П.** Хулиганство и его социально-бытовые корни // Хулиганство и хулиганы. М., 1929. С. 38 (Цит. по: Козаченко И.Я. Воплощение ленинских идей в советском уголовном законодательстве о необходимости эффективной борьбы с хулиганством: (Сравнительно-исторический анализ)//Межвуз. сб. науч. тр./СвЮИ. Свердловск, 1977. Вып. 54. էջ. 37).

անհարգանքով>>: Հայկական ՍՍՀ քրեական օրենսգրքում այն նախատեսված է 222-րդ հոդվածում, ՌՍՖՍՀ-ի քրեական օրենսգրքում՝ 206-րդ հոդվածում:

Նշենք նաև որ 1961 թվականի քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածում բացակայում էր չորրորդ մասը, իսկ զենքի և դրա կիրառման մասին խոսվում էր երրորդ մասում: ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածը ունի չորրորդ մաս, որում միանշանակ ասված է սույն հոդվածի առաջին կամ երկրորդ, կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ[1]: Սովետական գործող քրեական օրենքների և առաջին հերթին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1966թ. հուլիսի 26-ի <<Խուլիգանության համար պատասխանատվությունը ուժեղացնելու մասին>> հրամանագրի ձևակերպմամբ խուլիգանություն է համարվում դիտավորությամբ կատարվող ամեն մի արարք, որով կոպիտ կերպով խախտվում է հասարակական կարգը և բացահայտ անհարգալից վերաբերմունք արտահայտում հասարակության նկատմամբ[2]:

Խուլիգանության հիմնական անմիջական օբյեկտը հասարակական կարգն է, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում անձի անձեռնամխելիությունը, պատիվն ու արժանապատվությունը, առողջությունը, քաղաքացիների ու կազմակերպությունների գույքային շահերը: Խուլիգանության ժամանակ ամենից առաջ հանցագործության օբյեկտ են հանդիսանում պետության մեջ հաստատված հասարակական կարգը: Խուլիգանությունը խախտում է երկրում հաստատված և տիրապետող իրավակարգը և հասարակական անդորրությունը: Այն խախտում է համակեցության սահմանված կանոնները: Խուլիգանության օբյեկտը հասարակական կարգն է, ինչպես նաև օրենքով պահպանվող քաղաքացիների իրավունքներն ու շահերը[3]: ՌԴ նոր քրեական օրենսգրքի մեկնաբանությունների հեղինակները նշում են, որ հասարակական կարգ են համարում ապահով հասարակական հարաբերությունները, ձեռնարկությունների, կազմակերպությունների անվտանգ աշխատանքը, անձի ֆիզիկական և բարոյական անձեռնամխելիությունը, իսկ հասարակական անվտանգությունը որպես ներքին և արտաքին պաշտպանվածություն[4]: Վ. Ի. Ռադչենկոն, որպես հասարակական կարգ նշում էր հասարակական հարաբերություններ մարդկանց միջև, ապահովելով հասարական հանգստություն, անձի և սեփականության անձեռնախելիություն[5]:

---

[1] ՀՀ նախկին քրեական օրենսգիրք, հոդված 222-րդ, մաս 3-րդ:

[2] Տե՛ս **Саркисов Г. С.** Предупреждение нарушений общественного порядка. Ереван, 1972. էջ. 118:

[3] Տե՛ս Փաստաբանների միջազգային միություն (ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Երևան 2004թ.), էջ 534:

[4] Տե՛ս Комментарий к Уголовному кодексу Российской Федерации(постатейный) 2-е изд. испр. И доп./Под пед. А.И.Чучаева. М., 2010. էջ. 7-8.

[5] Տե՛ս Научно-практическое пособие по применению УК РФ / Под ред. В. М. Лебедева. М., 2005. էջ. 739

Խուլիգանության հիմնական հանցակազմն ունի մեկ, իսկ որակյալ հանցակազմը՝ երկու օբյեկտ: Մասնավորապես, հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով, ենթակա է որակման որպես հասարակ խուլիգանություն, մինչդեռ նույն արարքը, որը զուգորդվում է անձի առողջությանը, գույքային իրավունքներին և այլին վնաս պատճառելով, ենթակա է որակման խուլիգանության որակյալ հանցակազմով:

Նշեմ որ, վճռաբեկ դատարանը արձանագրում է, որ հասարակական կարգը ընկալվում է երկու իմաստով՝ լայն և նեղ[1]:

Լայն իմաստով հասարակական կարգը հասարակության մեջ առկա սոցիալական կապերի և հարաբերությունների համակցությունն է, որը ձևավորվում է սոցիալական, իրավական և բարոյական նորմերի գործողության արդյունքում, և յուրաքանչյուր հանցագործություն, զանցանք կամ այլ իրավախախտում այս կամ այն չափով հանգեցնում է դրա խախտման:

Խուլիգանության հիմնական հանցակազմի անմիջական օբյեկտն այն հասարակական հարաբերություններն են, որոնք կազմում են նեղ իմաստով հասարակական կարգի բովանդակությունը:

Հասարակական կարգը իրենից ներկայացնում է որոշակի հասարակական հարաբերությունների այնպիսի դրվածք, նախ և առաջ, կենսագործունեության սոցիալական և մշակութային ոլորտներում, որը հիմնվում է մարդկային համակեցության կանոնների պահպանման վրա:

Նեղ իմաստով հասարակական կարգն ընկալվում է որպես հասարական նշանակության վայրերում, այն է՝

1) տրանսպորտային միջոցների կայանատեղիներում, 2) օդանավակայաններում, 3) շուկաներում, 4) պուրակներում, 5) այգիներում, 6) կինոթատրոններում, 7) ցուցասրահներում, 8) մարզադաշտերում, 9) փողոցներում, 10) հիմնարկձեռնարկություններում, 11) ուսումնական հաստատություններում, 12) հասարական տրանսպորտում, 13) հասարակական սննդի սպասարկման վայրերում, 14) հասարակական նշանակության այլ վայրերում այնպիսի իրադրության առկայություն, որի պայմաններում ապահովված է քաղաքացիների արժանավայել վարքագիծը, կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը, ինչպես նաև այդ վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: Օբյեկտիվ կողմից արարքը բնութագրվում է ակտիվ գործողություններով, որոնք դրսևորվում են՝

1. Բացահայտ անհարգալից վերաբերմունքով հասարակության նկատմամբ,

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ քրեական դատարանի որոշում գործ թիվ ԱՎԴ/ 0014/ 01/11:

2. Անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ բռնության սպառնալիքով

3. Ուրիշի գույքը ոչնչացնելով կամ վնասելով

ՀՀ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից երևում է նաև, որ կոպիտ խախտումը կատարվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորելու նպատակով: Այլ խոսքով՝ խուլիգանության հանցակազմի օբյեկտիվ կողմը բնութագրվում է հետևյալ երկու հատկանիշների միաժամանակյա առկայությամբ՝ հասարակական կարգի կոպիտ խախտում և հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորում: Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորման եղանակները տարբեր են՝ արարք, խոսք, ժեստ, մարմնաշարժում և այլն: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ խախտումը որպես կոպիտ գնահատելիս անհրաժեշտ է ելնել հասարակական կարգի վրա այդ խախտման ունեցած ազդեցությունից: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հասարակական կարգը կոպիտ կերպով կարող է խախտվել ցանկացած արարքի կատարման պարագայում, մինչդեռ խուլիգանության առկայության մասին է վկայում այնպիսի արարքի կատարումը, որը միտված է հասարակական կարգը կոպիտ կերպով խախտելուն և որպես այդպիսին, հանդիսացել է խուլիգանություն կատարող անձի դիտավորության մեջ ընդգրկված նպատակի իրականացման միջոց: Հիմք ընդունելով սույն որոշումը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր դեպքում արարքը խուլիգանություն որակելու համար, ի թիվս սույն որոշման մեջ նշված այլ հանգամանքների, անհրաժեշտ է քննության առնել նաև այն, թե արդյոք այդ արարքի հետևանքով հասարակության անդամներին լուրջ անհանգստություն է պատճառվել: Այս կապակցությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու հանգամանքի առկայությունը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է գնահատել՝ ելնելով նեղ իմաստով հասարակական կարգի նկատմամբ դրա ուղղվածությունից: Այլ խոսքով՝ հասարակության անդամներին լուրջ անհանգստություն պատճառելու հանգամանքն առկա է, եթե հանցավորի արարքի հետևանքով խախտվում է հասարակական նշանակության վայրերում գտնվող անձի (անձանց) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, կամ էականորեն խաթարվում է կազմակերպությունների, հիմնարկների և հասարակական նշանակության այլ օբյեկտների բնականոն աշխատանքը:

Խուլիգանությունը կարող է կատարվել միայն ուղղակի դիտավորությամբ: Դա նշանակում է, որ մեղավոր անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով խախտում է հասարակական կարգն ու բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսևորում հանրության հանդեպ, այլև ցանկանում է կատարել այդ

գործողությունները: Սակայն կան գիտնականներ, որոնք գտնում են, որ խուլիգանությունը կարող է կատարվել նաև անուղղակի դիտավորությամբ, Օրինակ ըստ Ն.Ֆ. Կուզնեցովը նշում է, որ խուլիգանությունը լինում է ուղղակի և անուղղակի դիտավորությամբ: Լ.Վ.Սերդյուկը նշում է, որ խուլիգանությունը կարող է լինել ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ կախված հասարակական վտանգավոր հետևանքներից, եթե սուբյեկտը ցանկանում է ծեծկռտուք[1]: Ինչպես նաև խուլիգանությունը անուղղակի դիտավորությամբ կատարված հանգամանքին անդրադարձել է նաև Ա. Թամազյանը, իր <<Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը>> գրքում[2]:

Քանի որ խուլիգանության սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է բացահայտ անհարգալից վերաբերմունքի դրսևորումը հասարակության նկատմամբ, որը ի դեպ, խուլիգանության իմաստն է: Խուլիգանության համար որպես շարժառիթ կարող են հանդիսանալ վրեժը, խանդը, սեռական կրքերին հագուրդ տալու ձգտումը և այլն: Խուլիգանական արարքը կարող է կատարվել միայն խուլիգանական մղումներից ելնելով: Իսկ արարքը համարվում է խուլիգանական մղումներով կատարված, եթե այն կատարվում է հասարակության և բարոյականության նորմերի նկատմամբ անթաքույց արհամարհանքի հողի վրա, երբ մեղավոր անձի վարքը հանդիսանում է բացահայտ մարտահրավեր՝ ուղղված հասարակական կարգի դեմ և թելադրված է լինում շրջապատին հակադրվելու, վերջինիս հանդեպ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու ցանկությամբ: Հետնաբար, եթե մեղավոր անձի գործողությունները կատարվել են ոչ խուլիգանական մղումներով և չեն զուգորդվել հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, դրանք չեն կարող որակվել որպես խուլիգանություն[3]: Սուբյեկտիվ կողմի բովանդակությունն են կազմում մեղքը, շարժառիթը և նպատակը: Սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են կազմում կամքը և գիտակցությունը: Խուլիգանը ձգտում է իրեն հակադրել հասարակությանը, ցույց տալ, որ ինքը հաշվի չի առնում հասարակության շահերը: Սակայն չի կարելի խուլիգանությունը, որպես հանցագործություն, նույնացնել խուլիգանական շարժառիթների հետ, ինչը առկա է լինում, օրինակ, խուլիգանական դրդումներով կատարված սպանության ժամանակ: Խուլիգանությունը առաջին հերթին դրսևորվում է այնպիսի գործողություններով, որոնցով կոպիտ կերպով խախտվում է հասարակական կարգը:

Սուբյեկտը 14 տարին լրացած, ֆիզիկական, մեղսունակ անձն է:

---

[1] Энциклопедия уголовнохо прва. Т.21. Преступления против общественной безопасности и общественного порядка.- Издание профессора Малинина-СПб ГКА, СПб., 2013.

[2] Տե՛ս **Ա. Թամազյան,** <<Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը>>:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության վճռաբեկ քրեական դատարանի որոշում գործ թիվ ԱՎԴ/0014/01/11:

Քրեական օրենսգրքի հոդված 258-ի երրորդ մասում նախատեսված են հոդվածի երկրորդ մասով նախատեսված խուլիգանության հանցակազմի ծանրացնող հանգամանքները: Դրանք են՝

- Մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարելը,
- Զուգորդվել է իշխանության ներկայացուցչին կամ հասարակական կարգի պահպանության պարտականություն իրականացնող մարմնի կամ հասարակական կարգի խախտումը խափանող անձին դիմադրություն ցույց տալով,
- Զուգորդվել է անձի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով
- Զուգորդվել է բացառիկ զինիզմով[1]:

Հանցանքը համարվում է կազմակերպված խմբի կողմից կատարված, եթե դա կատարվել է այնպիսի անձանց կայուն խմբի կողմից, ովքեր նախապես միավորվել են մեկ կամ մի քանի հանցանքներ կատարելու համար:

Բացառիկ զինիզմ հասկացության տակ մտնում են խուլիգանական այնպիսի գործողությունները, որոնք վկայում են քաղաքացիների նկատմամբ հանցագործի դրսևորած ծաղրուծանակի, հանցագործի անամոթ վարքի մասին, այլ կերպ ասած՝ դրանք այնպիսի գործողություններն են, որոնք խորապես վիրավորում են մարդկանց բարոյական զգացումները և նսեմացնում նրանց մարդկային արժանապատվությունը[2]:

Խուլիգանության առանձնապես որակյալ տեսակը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, այն է, ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ (<<Զենքի մասին>> ՀՀ օրենք):

Սույն աշխատանքում ներկայացված տեղեկությունները ընդհանուր մանրամասնում են խուլիգանության հանցակազմի էությունը, նրա քրեաիրավական բնութագիրը, ինչպես նաև խուլիգանության ծանրացնող հանգամանքները:

Ամփոփելով եզրահանգում ենք, որ՝

1. ՀՀ քր. օր.-ի 11-րդ գլխում հասարակական կարգի և բարոյականության դեմ ուղղված հանցագործություններից խուլիգանությունը ամենավտանգավորներից է, և ընդհանրական է համարվում այն, որ օբյեկտիվ կողմը արտահայտվում է հասարակական կարգի կոպիտ խախտմամբ, որը արտահայտվում է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով:

2. Սուբյեկտիվ կողմից խուլիգանությունը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ, երբ հանցավորը գիտակցում է, որ իր արարքները կոպիտ կերպով խախտում են հասարակական կարգը, և որ դրանք բացահայտ անհարգալից վերաբերմունք են դրսևորում հասարակության նկատմամբ, և ցանկանում է կա-

[1] Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, հատուկ մաս, 258-րդ հոդվածի 3-րդ մաս, ԵՊՀ հրատարակչություն 2012թ.

[2] Տե՛ս **Ա. Թ. Թովմասյան** <<Խուլիգանությունը և դրա պատժելիությունը>>:

տարել այդ արարքները: Իսկ գույքը ոչնչացնելով կամ վնասելով զուգորդված խուլիգանությունը, կատարվում է ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

3. Իսկ հիմնական անմիջական օբյեկտը դա հասարակական կարգն է, իսկ լրացուցիչ օբյեկտ են հանդիսանում անձի անձեռնամխելիությունը, պատիվն ու առողջությունը, քաղաքացիների ու կազմակերպությունների գույքային շահերը:

Առաջարկում ենք կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Առաջարկում եմ ավելացնել որպես ծանրացնող հանգամանք, կրոնական շարժառիթներով կատարված խուլիգանություն:Նախ պետք է անդրադառնալ այն հանգամանքին, որ շարժառիթը հանդիսանում է հանցակազմի սուբյեկտիվ կողմի տարր, որի բացահայտումը օգնում է բացահայտել և հասկանալ ամբողջ հանցագործության սխեման: Այնուհետև պետք է նշենք, պարզելով որ ենթադրյալ հանցագործություն կատարած անձինք ունենալով որոշակի կրոնական հայացքներ, նրանց կողմից տվյալ հանցագործության կատարման դիտավորությունը պարզելը դառնում է ավելի հեշտ: Մասնավորապես վերջին ժամանակներում տարբեր աղանդների լայն տարածումը, և կրոնական կազմակերպությունների միջև հակասությունները ծնում են կրոնական շարժառիթով կատարվող հանցագործություններ:

2) Հաշվի առնելով խուլիգանության առաջին և երկրորդ մասերի ոչ բարձր հանրային վտանգավորությունը, ինչպես նաև մարդասիրության սկզբունքը, ինչպես նաև ՀՀ քաղաքականության ուղվածությունը ՀՀ քրեական պատժատեսակների մեղմացման հետ կապված, առաջարկում ենք խուլիգանության հանցակազմի 1-ին և 2-րդ մասերը դարձնել վարչական, այսինքն ենթարկել վարչական պատասխանատվության, ապաքրեականացնելով ՀՀ քրեական օրենսգրքից,իսկ ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին, դրանք իրենց բովանդակությամբ պետք է դառնան տվյալ հանցակազմի հիմնական մաս: Միևնույն ժամանակ ցանկանում եմ անդրադառնալ նաև ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծին, որտեղ որ բացակայում է տվյալ հանցակազմը: Վերոնշյալ առաջարկներից ելնելով գտնում ենք, որ ոչ թե ամբողջությամբ պետք է հանվի տվյալ հանցակազմը, այլ կատարվի վերոգրյալ, առաջարկված փոփոխությունները: Տվյալ հանցակազմի տարածվածությունը և վտանգավորությունը, որոնց մասին են վկայում մի շարք քրեական գործեր, հիմնավորումն է այն բանի, որ ոչ մի իրավական հիմնավորում չունի տվյալ հանցակազմի ապաքրեականացումը նոր քրեական օրենսգրքի նախագծով:

**Բանալի բառեր** - Խուլիգանություն, հասարակական կարգ, կոպիտ խախտում, բացահայտ անհարգալից վերաբերմունք, ցինիզմ:

**Оганнес Агасарян, Хулиганство и особенности его квалификации** - В данной работе изучен состав преступления хулиганство, а также уголовно-правовая характеристика и отягчающие обстоятельства хулиганства. Особенно изучим элементы состава преступления хулиганства (объект, объективная сторона, субъект и субъективная сторона), четко представляя особенности их квалификации.

**Hovhannes Aghasaryan, Hooliganism and features of its qualification** - In this work, the composition of the crime of hooliganism, as well as the criminal-legal characteristics and aggravating circumstances of hooliganism are studied. Especially study the elements of the crime of hooliganism (object, objective side, subject and subjective side), clearly presenting the features of their qualification.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2003թ.-ի ապրիլի 18-ին:
2. Հայկական ԽՍՀ քրեական օրենսգիրք ,Երևան ընդունված է 1961թ-ին:
3. 1833թ. Ռուսական կայսրության օրենքների ժողովածու, քրեական իրավունքի կանոնագիրք, Իսայևա Թ.Ս., Վլադիվոստոկ:
4. Саркисов Г.С. Предупреждение нарушений общественного порядка. Ереван, 1972.:
5. Ա. Թամազյան, <<Խուլիգանության քրեաիրավական բնութագիրը, որակման հիմնախնդիրները և սահմանազատումը>>:
6. Ա.Թ. Թովմասյան <<Խուլիգանությունը և դրա պատժելիությունը>>.-Երևան., 1968թվական:
7. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ քրեական դատարանի որոշում գործ թիվ ԱՎԴ/0014/01/11
8. Զենքի մասին ՀՀ օրենք, ընդունված է ԱԺ կողմից 1998 թվականի հուլիսի 3-ին
9. Փաստաբանների միջազգային միություն(ՀՀ քրեական օրենսգրքի մեկնաբանություններ, Երևան 2004թ.), էջ 534
10. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации (постатейный) 2-е изд. испр. И доп./Под пед. А.И.Чучаева. М., 2010. С. 7-8
11. Научно-практическое пособие по применению УК РФ / Под ред. В. М. Лебедева. М., 2005. С. 739
12. Люблинский П. Хулиганство и его социально-бытовые корни // Хулиганство и хулиганы. М., 1929. С. 38 (Цит. по: Козаченко И.Я. Воплощение ленинских идей в советском уголовном законодательстве о необходимости эффективной борьбы с хулиганством: (Сравнительно-исторический анализ)//Межвуз. сб. науч. тр./СвЮИ. Свердловск, 1977. Вып. 54. С. 37).

13. Энциклопедия уголовнохо прва. Т.21. Преступления против общественной безопасности и общественного порядка.- Издание профессора Малинина-СПб ГКА, СПб., 2013.

## ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

# «ԱՇԽԱՏԱՆՔ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԼԵԶՎԱՇԽԱՐՀԸ

ԱՆԱՀԻՏ ԱԶԱՐՅԱՆ
ՎՊՀ Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի
4-րդ կուրս ուսանողուհի
E-mail: anna.arturovna9797@gmail.com

Ժողովրդական, տնտեսական, գյուղացիական «Աշխատանք» խորագրով շաբաթաթերթը առաջին անգամ լույս է տեսել 1906 թ. Թիֆլիսում: Շաբաթաթերթի նշանաբանն էր՝ իրավունք, դպրոց, ազատություն: Առաջին համարում հեղինակները, ներկայացնելով պարբերական մամուլի ծրագիրն ու նպատակը, նշում են, որ վճռել են գործել գյուղաշխարհի. «մի կողմից որպես նրա բերան, մյուս կողմից՝ որպես սրտացավ, կարեկից բարեկամ, ընկեր և գործակից»: Թիֆլիսում շաբաթաթերթը տպագրվեց մինչև 1907 թ. հունվարի 12-ը: Այնուհետև թերթը տպագրվել է.

1. Վանում՝ 1910, 1911, 1913, 1919 թթ.՝ որպես գրական, քաղաքական, տնտեսական շաբաթաթերթ:
2. Իգմիրում՝ 1913-14 թթ.՝ որպես հասարակական, տնտեսական, քաղաքական լրագիր:
3. Երևանում՝ 1916-19 թթ.՝ որպես հասարակական, քաղաքական, գրական պաշտոնաթերթ:
4. Թեհրանում՝ 1946-47 թթ.՝ որպես քաղաքական, հասարակական և գրական օրաթերթ:
5. Ամասիայում՝ 1973 թ.՝ որպես ՀԿԿ Ամասիայի շրջանային կոմիտեի և աշխատավորների, դեպուտատների Ամասիայի շրջանային սովետի օրգան:

Ընդհանուր առմամբ թերթը տպագրվել է 11 տարի՝ լինելով գյուղաշխարհի դաշնակցության և վերջապես սովետական միության իրադարձությունների արձագանքողը:

Սույն հոդվածի շրջանակներում ուսումնասիրել ենք 1918 թ. Երևանում տպագրված Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության «Աշխատանք» հասարակական-քաղաքական, գրական պաշտոնաթերթի լեզվաշխարհը:

Բառապաշարային քննությունից պարզ է դառնում, որ այստեղ հաճախադեպ գործածվող բառեր են օտարաբանությունները, որոնց մի մասը դարձավ փոխառություն՝ «որպես ժողովուրդների հետ տնտեսական, քաղաքական, մշակու-

թային կապերի արդյունք»[1], իսկ մյուս մասն էլ դուրս եկավ գործածությունից՝ փոխարինվելով նոր հայեցի բառերով:

«Աշխատանք» պաշտոնաթերթի փոխառությունների հիմնական աղբյուրը ռուսերենն է, որը պայմանավորված է ռուսերենի ազգամիջյան լեզու լինելու հանգամանքով: Ռուսերենից կատարված փոխառությունները, սակայն, միջնորդական են, քանի որ դրանք հիմնականում միջազգային բառեր են, որոնք ռուսերենի համար նույնպես փոխառություններ են՝ կատարված եվրոպական լեզուներից[2]: Ուսումնասիրելով «Աշխատանք» պաշտոնաթերթի բառապաշարը՝ որպես տվյալ ժամանակաշրջանի իրականության արտացոլում, առանձնացրել ենք փոխառությունները՝ ըստ ծագման.

1. ռուսերենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *սուխարի, պօլկ, նաչալնիկ*,

2. անգլերենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *միտինկ, կլուպ, կոմանդիր*,

3. գերմաներենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *օֆիցեր, ֆրօնդ*

4. ֆրանսերենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *էտապ, ռէկլամ, կոնտրոլ, ֆիտերատիւ, պօստ, պալտօ, ֆուրգոն, սուրպրիզ, անկօնդրոլ, դիպլոմատ, կարիեր,*

5. հունարենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *անախրոնիզմ, անարխիա, պօլիտիկոս, սապոն, ֆօնօկրաֆ, պօլիտիկ, սինէմաթօկրաֆ,*

6. լատիներենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *ինտելիգենտ, միլիցիա, մանտատ, տրադիցիա, ինստիտուտ, բէալ, մոմենտ, միսիա, պրօվակատոր* ,

7. թուրքերենից կատարված փոխառություններ, ինչպես՝ *ասքեար:*

Բերված օրինակներից պարզ է դառնում, որ 1918 թ. բառապաշարի մեջ հաճախադեպ էին ռազմական ոլորտի փոխառությունները, որոնք կատարվում էին ռուսերենից, գերմաներենից և թուրքերենից: Ընդ որում թուրքերենից կատարված *ասքեար* փոխառությունը գործածվում է հենց թուրքական բանակի զինվորին ներկայացնելու ժամանակ. «անցյալին մեջ, թուրք ժանդարմն ու փօլիսը, նոյնպէս բռնի՝ ձեզ ասքեար կը դարձնէին, ու մենք հազար ու մէկ միջոցներ կը խորհէինք խոյս տալու համար, որովհետև մահու չափ ատելի ռէժիմի մը և անարգ տիրապետութեան մը յարտատեութեանը՝ պիտի ծառայէր մեր արիւնը»[3]:

Ֆրանսերենից, լատիներենից և հունարենից կատարված փոխառությունները հիմնականում հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական ոլորտի բառեր են:

Օտարաբանությունները հիմնականում իրանիշ կամ անձնանիշ գոյականներ են: Անձնանիշ գոյականները պաշտոնանուններ են, ինպես՝ միլիցիա, պալ-

---

[1] **Սուքիասյան Ա.,** Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 2004, էջ 187:

[2] **Աղայան Է.,** Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 174-175:

[3] Աշխատանք, N 77, Դէպի զօրանոց, էջ 1:

կովնիկ, օֆիցեր, պոլիտիկոս, թելեֆոնիստ, սալդատ, սինէմաթօկրաֆ, դիժուռնի, ասքեար, կոմանդիր, նաչալնիկ, պրապորշչիկ, պրօվակատօր: Իրանից թանձրացական գոյականները հիմնականում հասարակական-քաղաքական, ռազմական ոլորտի բառեր են, ինչպես՝ *միտինկ, մանտատ, բատալիոն, պօլկ, ֆրօնդ, միսիա, ռազվէտկայ, բրիգադ*: Վերացական գոյականները զիտական հասկացություններ են, ինպես՝ *լիկվիդացիա, անախրոնիզմ, անարխիա, լիկվիդացիա, կոնտրոլ, անարխիա, միսիա, կարիեր:* Գոյականներին զուգահեռ գործածական էին նաև ածական օտարաբանությունները, ինչպես՝ *ֆիտերատիւ, աւտօնօմ, միլիտարիստական, դիպլօմատիկ, բէալ, անկօնդրոլ*: Այս ածականներով բնութագրվել են հետևյալ գոյականները, ինչպես՝ *ֆիտերատիւ հասարակապետութիւն, աւտօնօմ իշխանութիւններ, միլիտարիստական պահանջներ, դիպլօմատիկ խաղեր, բէալ շահ, անկօնդրոլ գործունէութիւն:*

Մամուլի միջոցով ցանկանալով բացահայտել Հայաստանի առաջին Հանրապետության տարիների կրթամշակութային կյանքը՝ քննել ենք նաև «Աշխատանք» պաշտոնաթերթում գործածված հատուկ անունները:

Պաշտոնաթերթում վկայված հատուկ աշխարհագրական անուններից պարզ է դառնում, թե որ երկրների և քաղաքների հետ հարաբերություններ ուներ անկախ Հայաստանը, ինչպես՝ Թուրքիա, Անգլիա, Պետրոգրադ, Նախիջևան, Սոչի, Սուխում, Բաթում, Պարսկաստանի մի շարք գյուղեր (Կիլասօր, Միրզախան, Լեշգօ, Կիւնտաբէրի), քրդական մի շարք գյուղեր (Դաւութ, Սօրան, Մայա, Դիբակլու, Ղօրտ, Թանդուրէկ, Բլիկան): Հատուկ տեղանունները հիմնականում գործածվում էին *ի* արտաքին հոլովմամբ, ինչպես՝ Մետեխի, Ալէքսանդրապօլի, Սարիղամիշի, Սիպիրի, Իգդիրի, Օրկօֆի, Էվջիլարի, Բերկրիի, Կարկառի, Մուշի և այլն: Սակայն սրան զուգահեռ գործածական էր նաև *ո* արտաքին հոլովումը, ինչպես՝ Անգլիոյ, Թուրքիոյ: Հատուկ տեղանունների բացառական հոլովաձևերը գործածված էին գրաբարյան *է* հոլովակերտով, ինչպես՝ Պետրոգրատէն, Պարսկաստանէն, Կարսէն, Արճեշէն, Բերկրիէն, Տրապիզոնէն, Կովկասէն, Էրզրումէն, Ղամարլուէն, Իգդիրէն, Ֆարգինէն, Շահթախթէն, Ռոստովէն, Ալէքսանդրապօլէն:

Պաշտոնաթերթում վկայված հատուկ անձնանուններից պարզ է դառնում, թե անձնանվանական ինչ նախասիրություններ ունեին հայերը 1910-ական թթ.: Քննել ենք թե՛ հոդվածներում կիրառված, թե՛ հոդվածների հեղինակների անունները՝ ըստ Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանի»[1]: Անձնանուններն ըստ ծագման դասակարգվում են հետևյալ կերպ.

1. հայկական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Բարունակ, Կայծակ, Աւագ, Անթառամ, Ռստանիկ, Յարութիւն, Նշան, Աւետիք, Թագուհի, Շամամ, Մայրանոյշ, Շուշանիկ,*

[1] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հատոր Ա, Երևան, 1942, հատոր Բ, Երևան, 1944:

2. պահլավական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Արտաշէս, Խոսրով, Աշխէն,*

3. իրանական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Արամ, Տիգրան,*

4. պարսկական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Արշաւիր, Մուշեղ, Շի-րին, Միհրան, Սարհատ, Զարուհի, Փառանձեմ,*

5. հունական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Գրիգոր, Լևոն, Կիրակոս, Գերասիմ, Պողոս, Ղևոնդ, Ղազարոս, Յովհաննէս, Սոփիա, Գէորգ, Անաստասեայ,*

6. ասորական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Սարգիս*,

7.արաբական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Էմին, Մուրատ,*

8. Եբրայական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Միսակ, Յովսէփ, Դա-նիէլ, Աբրահամ, Սողոմոն, Սահակ, Աննա, Մարիամ, Եսայի, Եղիսաբեթ, Թամար*,

9. չինական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ *Մամիկոն,*

10. թուրքական ծագում ունեցող անուններ, ինչպես՝ Ասլան:

Այս դասակարգումից պարզ է դառնում, որ այդ ժամանակի անձնանվա-նադրման համակարգում գերիշխում են պարսկական, հունական, եբրայական և իհարկե հայկական ծագում ունեցող անունները:

Առանձնանում են նաև ժամանակին բնորոշ ազգանունները՝ թե՛ հոդված-ներում կիրառված և թե՛ հոդվածների հեղինակների, ինչպես՝ *Յոխիկեան, Սահա-ռունի, Խշտօեան, Աֆրիկեան, Երեցեան, Կղիկեան, Պանիրեան, Բարխուդարեան, Շաղօեան, Ազնաւուրեան, Էսապեան, Քրաջեան, Հացագործեան, Փարսադանեան, Մառանեան, Թորոսեան, Հիւսեան, Աւետեան, Մուրատեանց, Փիլիպոսեանց, Թարվերդեանց, Գիւլբաշեան* և այլն:

Հիմնականում անդրադառնալով արևմտահայ գաղթականների ամենօրյա հոգսերին ու նրանց վիճակի բարելավման համար տարվող աշխատանքներին՝ արտահայտել է դաշնակցականների տեսակետները Հայաստանին ու հայ ժո-ղովրդին վերաբերող հրատապ հարցերում: «Աշխատանք» թերթի բառապաշարն արտահայտում է ՀՀ ներքին քաղաքական ու տնտեսական անցուդարձը, 1915 թ. Վանի ինքնապաշտպանության անցուդարձը:

Քերականական իրողությունները հիմնականում բնորոշ են արևմտահայե-րենին: Հոլովական համակարգը արտահայտվում է ***ու*** հիմնական հոլովմամբ և զուգահեռաբար կիրառվում են գրաբարյան և արևելահայերենյան ձևեր, ինչպես՝ *աշխատանքներու, տարիներու, խաւերու, չափու, ազդեցութիւններու, կարգերու, դաշնակիցներու, գացողներու, զոհերու, լեռներու, միլիցիոներներու, մեկնողնե-րու, շրջանակներու, զինուորցուներու, գումարներու, թալաններու, հոսանքներու, ֆուռկուններու, յանձնախումբերու, ճերմակներու, պրօվակատօրներու, մարմին-ներու*: Բայական համակարգում նույնպես ներկայի կազմության զուգաձևութ-յուններ կան՝ ***կը***-ով և ***ում*** դերբայական մասնիկով, ինչպես՝ *կը գրեն, կը խօսին, կը դժկամակին, կը ցուցնեն, կը պակսի, կը բնակէին, կը ցանկան, կը բնակին, կը*

*ցանկան, կը հետևին, կը համարիմ, կը յարձակին, կը շրջէ, կը հաւասարեցնէր, կը յաջորդէ, կը խաղցուի, կը թողու, կը ձիւնէ, կը զիջանի* և այլն:

Համախաղեպ կիրառություն ունեն նաև ***ի*** լծորդության բայերը, ինչպես՝ *խօսիլ, ապրիլ, տատանվիլ, նախապատրաստվիլ, հասնիլ, պակսիլ, բնակիլ, անցնիլ, զբաղիլ, բանակցիլ, աշխատիլ, փակուիլ, խորհիլ, փախադրուիլ, վստահիլ, օգտուիլ:*

**Բանալի բառեր** - 1918 թ., քերականական համակարգ, բառապաշար, օտաբաբանություններ, հնչյունափոխություն, հոլովում, խոնարհում:

**Резюме**

В рамках данной статьи мы изучаем напечатанное в 1918 в Ереване партией АРС “Ашхатанк” языковая картина мираобщественно-политических, литературных официальных газет.

В ходе анализа словарного состава становится ясно, что здесь часто употребляемыми словами являются заимствованные слова в основном собственные и нарицательные существительные, заимствования, основным источником которых является русский язык, что связано с международным характером русского языка. Заимствования из французского, латинского и греческого языка в основном из общественно-политических и научно-техническиеобластей.

Пытаясь раскрыть с помощью прессы образовательно-культурную жизнь времен первого Армянского Государства, проанализировали еще и имена которые используются в газете, в результате чего выяснилось какие предпочтения собственных имен были у армян в 1910-х годах.

Из языковой картины мира официальной газеты, выяснилось, что грамматические реалии свойственны были восточным армянам.

**Summary**

Within the scope of this article, we have studied the language world of the public-political, literary official newspaper “Ashxatanq” of ARF party published in Yerevan, in 1918.

From the lexicon, it becomes clear that the most frequently used words here are the barbarisms, mainly common and proper nouns, and the borrowings, the main source of which is Russian, which is conditioned by the fact that Russian is an inter-ethnic language.

Borrowings from French, Latin, and Greek are mostly words relating to the social, political, and scientific fields.

Wanting to discover the educational and cultural life of the First Republic of Armenia through the press, we have also examined the names used in the periodical, and it has become clear what anthroponomic preferences Armenians had in the 1910s.

It has become clear from the language world of the official newspaper that grammatical realities are mainly characteristic of Western Armenian.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ


1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:
2. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, 1942:
3. Աշխատանք հասարակական-գրական պարբերական, Երևան, 1918:
4. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Երևան, 1969-1980:
5. Հայրապետյան Ա., Օտար բառերի բառարան, Երևան, 2011:
6. Մալխասեանց Ստ., Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:
7. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967:
8. Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, երևան, 1967:

# ՀԱՅՐ, ՄԱՅՐ, ԵՂԲԱՅՐ, ՔՈՒՅՐ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐՈՒՄ


**ՆԵՐՍԵՍՅԱՆ ՇՈՒՇԱՆ**

ՎՊՀ Բանասիրության ֆակուլտետ «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, 4-րդ կուրսի ուսանողուհի

E-mail: armenia.armenia.2012@mail.ru


Լեզվաբանության մեջ դարձվածքների տարբերակման հիմնական եղանակը նրանց կազմությունն է: Հայերենի դարձվածքները նույնպես առանձնանում են իրենց յուրօրինակ կազմությամբ: «Դարձվածքները կազմվում են ոչ ամեն բառով. կան բառեր, որոնք շատ են մասնակցում դարձվածքնեի կազմությանը: Դարձվածքի բաղադրիչ դառնում են առաջին հերթին բառային հիմնական ֆոնդին պատկանող և հաճախակի օգտագործվող մի շարք բառեր» [1, 500]: Այս երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ խոսքն ավելի պատկերավոր, արտահայտիչ դարձնելու համար մարդն օգտագործում է առավել մատչելի բառեր, որոնք էլ կազմում են լեզվի բառապաշարի բնիկ շերտը:

Հայերենի դարձվածքների բառապաշարում առանձնանում են ընտանիք, ազգակցություն ցույց տվող բառերը, որոնցից սույն աշխատանքում անդրադառնալու ենք *հայր, մայր, եղբայր, քույր* հասկացույթներով ձևավորված արտահայտություններին՝ իրենց արտահայտած իմաստների բազմազանությամբ, ինչն էլ վկայում է այդ բառերի հաճախադեպությունը նաև առօրյա խոսակցական ոճում: Օգտվելով հայերենի դարձվածաբանական բառարաններից՝ սույն աշխատանքը կատարելու համար առանձնացրել ենք շուրջ 140 դարձվածային միավոր, որոնցում նշված հասկացույթները հիմնականում գործածվում են հնչյունափոխված տարբերակներով՝ ***հայր*** - ***հէր***, ***մայր*** - **մէր**, ***եղբայր*** - ***ախպէր,*** օրինակ՝ *հերդ օրհնվի, հերդ լույս դառնա, մերը մեռնի, մերը մանկանը մոռացել է, ախպերն ախպորը չի տա, ախպորս ասեմ* և այլն:

***Հայր, մայր, եղբայր, քույր*** բառերով ձևավորված դարձվածքները, **ըստ գերադաս անդամի խոսքիմասային պատկանելության** լինում են.

1. <u>*Գոյականական*</u>, որոնք հիմնականում ստորադասական հարաբերությամբ երկբաղադրիչ կազմություններ են՝ կազմված «հատկացուցիչ + հատկացյալ», հազվադեպ «որոշիչ + որոշյալ», ներշարահյուսական կաղապարներով, որոնցում ***հայր, մայր, եղբայր*** բառերը գործածվում են իբրև ստորադաս անդամներ, օրինակ՝ ***հորս տղեն, հորս ցավը***, ***մոր արգանդից, մամայի բալա, մոր տղա, ախպոր տղա***, ***ախպեր տղերք***. Սրանց զուգահեռ կան նաև համադասական հարաբերությամբ դարձվածքներ, ինչպես՝ ***հայրեր ու որդիներ, մայր ու մանուկ, հորմե ու մորմե***, որոնց բաղադրիչները արտահայտում են հավաքականության իմաստ, ինչպես՝

Կարծում ես միայն նա՞ է եղել, քի՞չ այդպիսի ***հայրեր ու որդիներ*** է խժռել ժամանակը (ԹԾ): Եվ երկուսով՝ ***մայր ու մանուկ***, հաղթեցին մահին (ԲՁ) և այլն:

Հազվադեպ ***հայր, մայր, եղբայր*** բառերը գոյական-դարձվածքներում գործածվում են իբրև գերադաս բառեր՝ կապակցվելով որոշիչ անդամի, օրինակ՝ ***խորթ մայր, սնուցող մայր*** և այլն:

2. *Բայական,* որոնք, ըստ ներշարահյուսական արտահայտության, բազմաձև են և ենթադասակարգվում են հետևյալ ենթախմբերով.

2.1. «Ենթակա + ստորոգյալ», օրինակ՝ ***մերը մեռնի, մայրդ չմեռնի, հերդ օրհնվի*** և այլն:

2.2. «Ստորոգելի + հանգույց», որտեղ ստորոգելին արտահայտված է լինում համադասական հարաբերությամբ կապակցված բազմակի անդամներով, օրինակ՝ ***մայր ու մայր լինել, քույր ու եղբայր լինել*** և այլն:

2.3. «Ուղիղ խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***հերդ անիծեմ, մերը լացացնել*** և այլն:

2.4. «Հանգման անուղղակի խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***ախպորս ասեմ*** և այլն:

2.5. «Ենթակա + ստորոգելի + հանգույց», օրինակ՝ ***հերդ լույս դառնա, հերդ /հերը/ գյոռբագյոռ ըլի*** և այլն:

2.6. «Ենթակա + ուղիղ խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***հայրը զավակ չի ճանչնար, որդին հորը չի ճանաչում, մերը մանկանը մոռացել է, մայրը տղա է բերել, եկողը մորս կհարցնի*** և այլն:

2.7. «Ենթակա + հանգման խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***ախպերն ախպորը չի տա*** և այլն:

2.8. «Անջատման խնդիր + ստորոգելի + հանգույց», օրինակ՝ ***մորից ծնված չլինեմ, մորից մեկ լինել*** և այլն:

2.9. «Անջատման խնդիր + չափի պարագա + լրացյալ», օրինակ՝ ***մորից նորից չեմ ծնվելու*** և այլն:

2.10. «Հատկացուցիչ + ենթակա + ստորոգելի», օրինակ՝ ***հորս արևը վկա*** և այլն:

2.11. «Հատկացուցիչ + ստորոգելի + լրացյալ», օրինակ՝ ***հոր որդին լինել*** և այլն:

2.12. «Հատկացուցիչ + ուղիղ խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***հոր ծուխը ծխեցնել, մոր կոճակ կտրող, մոր ծիծ կտրող, հորդ տունը կտեսնես, հոր անունը մոռանալ, հոր խաչը չճանաչել, հորդ տունը կտեսնես***, ***մոր մանածը ծախած, մոր արգանդը բանալ, մոր ծիծ կտրող, մոր մանածը ծախող, մոր եփածն ուտել, մոր*** (***հոր***) ***հարսանիքը հիշել*** և այլն: Այս շարքում առանձնանում են հարադիր բայերով կազմությունները, որոնք քառաբաղադրիչ դարձվածքի տպավորություն են թողնում, օրինակ՝ ***մորդ կաթը հարամ կանեմ*** և այլն:

2.13. «Հատկացուցիչ + հանգման խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***հոր խերի թողալ, հորս ցավին զաս*** և այլն:

2.14. «Հատկացուցիչ + տեղի պարագա + լրացյալ», օրինակ՝ ***հոր թախտին չնստել, հոր օջախում նստել, հոր ծոցն ուղարկել, հոր տանը մնալ, հորդ տանից ես բերել, հորս կուշտ գնաս, հորս տուն հո չե՞մ տանելու, մոր ջեբ մտնող, մոր փորն ընկնել, մոր փորում հո չի աբել*** և այլն:

2.15. «Հատկացուցիչ + հիմունքի պարագա + լրացյալ», օրինակ՝ ***հոր գերեզմանով երդվել*** և այլն:

2.16. «Հատկացուցիչ + ձևի պարագա + լրացյալ», օրինակ՝ ***մորդ կաթի պես հալալ լինի*** և այլն:

2.17. «Որոշիչ + ուղիղ խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***հարյուր մայր ծծել*** և այլն:

2.18. «Ենթակա + ուղիղ խնդիր + չափի պարագա + լրացյալ», օրինակ՝ ***մայրս զիս անգամ մըն ալ բերավ*** և այլն:

2.19. «Ենթակա + ուղիղ խնդիր + տեղի պարագա + լրացյալ», օրինակ՝ ***հերս էլ պատանն ուսին զա*** և այլն:

2.20. «Հատկացուցիչ + ենթակա + ստորոգելի + հանգույց», օրինակ՝ ***հորդ օջախը բոստանատեղ դառնա*** և այլն:

2.21. «Հատկացուցիչ + ենթակա + ուղիղ խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***ո՞ւմ մերը աղջիկ կբերի*** և այլն:

2.22. «Հատկացուցիչ + անջատման խնդիր + հատկացուցիչ + ուղիղ խնդիր + լրացյալ», օրինակ՝ ***հոր ոսկորեն նարդու զառ կշինի*** և այլն:

2.23. «Ենթակա + ժամանակի պարագա + տեղի պարագա + ստորոգելի + տեղի պարագա + ստորոգելի + հանգույց», օրինակ՝ ***հերդ էդ գիշեր ջաղաց գնացած՝ ջաղացում քնած լիներ*** և այլն:

2.24. «Ուղիղ խնդիր + լրացյալ + ուղիղ խնդիր + լրացյալ» ներշարահյուսական կաղապարով ձևավորվել է կազմությամբ բարդ նախադասություն-դարձվածք, օրինակ՝ ***մորը տես աղջկան առ*** և այլն:

2.25. «Ենթակա + ստորոգյալ + հանգման խնդիր + լրացյալ» ներշարահյուսական կաղապարով նույնպես կերտվել է բարդ նախադասություն-դարձվածք, օրինակ՝ ***մայրը եփել, տղային չի տվել*** և այլն:

3. <u>*Կապական կառույց-դարձվածքներ*</u>, օրինակ՝ ***եղբոր նման*** /***պես***/, ***հոր պես, առ հարբս*** /***հայրերի մոտ***/ և այլն:

4. <u>*Ածականական և թվականական բառակապակցություն-դարձվածքներ*</u>, որոնք եզակի օրինակներ են, օրինակ՝ ***մորե մեկ, մորե մերկ***:

Ներշարահյուսական վերլուծությունից պարզ է դառնում, որ ***հայր, մայր, եղբայր*** հասկացույթները դարձվածքներում կապացվում են.

ա. անձնանիշ գոյականներին, օրինակ՝ ***հորս տղեն, մամայի բալա, մոր տղա, ախպոր տղա***, ***ախպեր տղերք*** և այլն:

բ. վերացական հասկացությունների, օրինակ՝ ***հորս ցավը, հոր խերի թողալ*** և այլն:

գ. մարմնի մաս նշանակող իրանիշ գոյականների, օրինակ՝ ***մոր արգանդից, հոր ոսկորէն նարդու զառ կշինի, մոր ծիծ կտրող*** և այլն:

գ. անձնանիշ ածականների, օրինակ՝ ***խորթ մայր, մորե մերկ*** և այլն:

դ. անձնանիշ գոյական-ենթակա ենթադրող բայերի, օրինակ՝ ***սնուցող մայր մերը մեռնի, մայրդ չմեռնի, հերդ օրհնվի, հերդ անիծեմ, մերը լացացնել, ախպորս ասեմ*** և այլն:

***Հայր, մայր, եղբայր*** հասկացույթներով ձևավորված դարձվածքները, ըստ խոսքիմասային պատկանելության լինում են.

1. Գոյականներ.

1.1. անձնանիշ, օրինակ՝ *Միամիտ կացե՛ք, ձեզ այնպիսի ընկեր տամ, որ* ***մոր ծիծ կտրող*** *լինի* (ՊՊ, ՀԽ):

1.2. իրանիշ, օրինակ՝ Կարինի բարբառում *էլ ինչ հորս ցավը ասես* դարձվածքը անարգական մտքով կիրառվելիս խորհրդանշում է կենդանի, օրինակ՝ *Շուն, կատու, գայլ,* ***էլ ինչ հորս ցավը ասես*** *ներս կը մտնեն*: Նոր Նախիջևանի բարբառում դարձվածքը «դյուրին՝ հեշտ կամ ոչինչ բան է» նշանակությամբ գործածվում է որպես իրանիշ գոյական, օրինակ՝ *Դա* ***էլ ինչ հորս ցավն*** *է, ամեն օր կառնես կը բերես* և այլն:

2. Բայեր՝ հիմնականում անձնանիշ ենթականերին կապացվող, օրինակ՝ *Մայրն անկողին է ընկել, ինքը, հարևան բարեկամների հնամաշ շորերում կոլոլված, տուն է պահում,* ***հոր ծուխը ծխեցնում*** (ՄԼ):

Ազգակցական հարաբերություններ արտահայտող հասկացույթներով ձևավորված դարձվածքները խոսքում հիմնականում հանդես են գալիս առանց լրացումառության, սակայն դրանց շարքում կան դարձվածքներ, որոնք պարտադիր լրացումառու են, ինչպես՝ *հոր տղան չէ, հոր վրա քար դնել, հերը մատներն էր կրծում մերը մեռնի, մերը տղա բերի, մերը լաց կլի* և այլն: Բերենք մի քանի օրնակներ՝ ***մերը մեռնի*** դարձվածքի համար պարտադիր է հատկացուցչառնությունը: Հատկացուցիչները լինում են և դերանուններ և գոյականներ, ընդ որում ինչպես անձնանիշ և իրանիշ, այնպես էլ վերացական գոյականներ, ինչպես՝ Անահիտ քեռակինն ուզում էր անիծել, մեկ էլ ծիծաղում էր, հետո լաց էր լինում «Թահո՛ւ, մե՛ռնի ***Հունոյի*** մերը, որ նա իր ընկերին չար աչքով մտիկ տա» (ՊՊ, Հ), «Է՛, մերը մեռնի ***ֆուրգոնի***, որ մաշինեն նրա տեղը պիտի բռնի» (ՁՄ, Ու), «***Ծերության*** մերը մեռնի... ես էլ եմ էդ ասում, ահա, էդ դարդն եմ լաց լինում» (ԽՄ), «Վանի ջան՝ մեր տունը քանդեցիր, մեր անունը բեդնամ արի՛ր, էդ ի՞նչ հալի ես՝ ***քո*** մերը մեռնի,-ասաց ողորմելի կինը» (ԱԽ), «Ա՛յ տաքի կարոտ ***նրա*** մերը մեռնի, տեսնես կուշտ կերել է՞» (ՀՄ, Պ): ***Հոր տղան չէ*** դարձվածքը նույնպես օժտված է պարտադիր հատկացուցչառությամբ, ինչպես՝ «Հազկերտը ***իմ ու քո*** հոր տղան չէ» (ԴԴ), «Ձորս

փութ կորեկ տվեք, թե յոթ շաբաթում էղքան չքանդեմ, ***իմ*** հոր տղան չեմ» (ԲԱ), հազվադեպ նաև որոշչառնություն, ինչպես՝ «Գլո՛ւխդ հողեմ, լաո, դու պիտի լինես էն հոր տղան Պատանքդ կարեմ, գրողը քեզ տանի Սասնա ծուռ շաղգամակեր» (ՁՆ) և այլն: ***Մերը տղա բերի*** դարձվածքը ենթադրում է *ինչ անողի* հարցին պատասխան հատկացուցիչ, ինչպես՝ «-Այ, մարդիկ, վկա կացեք, դարձավ վիրավորը դեպի խանութի առաջին ժողոված հասարակությունը, Մելիք-Բաղալն օր ծերության ոսկի մեդալը դոշին՝ հարամկերի աման լպստող Խուդոյի ձեռքով ծեծ կերավ փոշմանողի ***մերը տղա բերի***» (ՊՊ, Յ) և այլն:

**Ըստ գերադաս անդամի արտահայտության եղանակի** դարձվածքները բաժանվում երկու խմբի.

1.1. *բառակապակցություն-դարձվածքներ*, օրինակ՝ *մամայի բալա, մոր արգանդից, մոր պահած, մերը լացացնել, հորե ու մորմե, հերն անիծել, հորս տղեն, ախպեր տղերք, հարյուր մայր ծծել, մոր ծծվածքը վեր թափել, հոր խերի թողալ, հոր տանը մնալ, եղբոր նման /պես/, եղբորը եղբոր դեմ հանել* և այլն:

1.2. *նախադասություն-դարձվածքներ*, որոնց բնորոշ են միայն դիմավոր բայով արտահայտություններ: Ընդ որում նախադասություն-դարձվածքները սովորաբար պարզ նախադասություններ են, ինչպես՝ *ախպորս ասեմ, հերդ գյոռբագյոռ ըլի, ախպերն ախպորը չի տա, ո՞ւմ մերը աղջիկ կբերի, մորդ կաթը հարամ կանեմ, հորդ օջախը բոստանատեղ դառնա, մորդ կաթի պես հալալ լինի, հերս էլ պատանն ուսին գա, հոր ոսկորեն նարդու զառ կշինի, մայրս զիս անգամ մըն ալ բերավ, մոր փորում հո չի արել այսինչ բանը, այսինչ բանն անողի հերը շուն դառնա՞*: Հազվադեպ են բարդ նախադասություն-դարձվածքները, ինչպես՝ *հերդ էղ գիշեր ջաղաց գնացած՝ ջաղացում քնած լիներ, մորը տես աղջկան առ* և այլն:

«Հայերենում երկու-երեք բաղադրիչով դարձվածքները ճնշող մեծամասնություն են կազմում: Չորս և ավելի բաղադրիչով դարձվածքները սովորաբար նախադասություն դարձվածք են և հիմնականում առած-ասացվածքների ձևափոխության արդյունք են» [1, 506]: Մեր քննած օրինակներից պարզ է դառնում, որ **ըստ բաղադրիչների քանակի**՝ ազգակցական հարաբերություններ արտահայտող հասկացույթներով ձևավորված դարձվածքները լինում են *երկբաղադրիչ, եռաբաղադրիչ* և *բազմաբաղադրիչ* (ամենաերկարը ութ բաղադրիչից կազմված հերդ/հերն/ էղ գիշեր ջաղաց գնացած՝ ջաղացում քնած լիներ դարձվածքն է):

«Հասկացություն արտահայտող դարձվաշքները նախադասության մեջ հանդես են գալիս որևէ անդամի պաշտոնով: Դարձվածքի՝ նախադասության այս կամ այն անդամ դառնալը պայմանավորված է այն բանով, թե ինչ խոսքի մասի արժեքով է այն հանդես գալիս» [1, 507]: Սրանից ելնելով՝ ներքին քերականական հարաբերությունների քննությունից հետո կատարել ենք դարձվածքների շարահյուսական կիրառությունների վերլուծություն, որից պարզ է դառնում, որ դարձվածքները նախադասության մեջ զբաղեցնում են տարբեր պաշտոններ, ինչպես

1. Ենթակա դարձվածքներ, օրինակ՝

2. Ստորոգյալ դարձվածքներ, օրինակ՝ «*Մայրն անկողին է ընկել, ինքը, հարևան բարեկամների հնամաշ շորերում կոլոլված, տուն է պահում,* ***հոր ծուխը ծխեցնում****, ու ոչ մեկի սիրտը տեղից չի շարժվում*» (ՄԼ), «*Մի սրածայր մահակով բզում է իշին, զարկում զայրացած, իշատիրոջ* ***հերն անիծում***» (ԲԱ) և այլն:

3. Ստորոգելի դարձվածքներ, օրինակ՝ «*Ասում են, որ ոչ մի զինեվաճառ չի կարողացել երկու-երեք ամսից ավելի պահել Սաքոյին, մեր զալում լակոտը մոր կոճակ կտրող է եղել,* ***աչքի սուրմա թոցնող****, ոչ միայն հաճախորդների գրպաններից անհայտացել են նրա օրովը զանազան մանր-մունր առարկաներ, զինեվաճառի ծոցից կամ գլխատակից էլ գիշերը՝ քնած ժամանակը թռել, վերցրել է նրա քսակը*» (ԴԴ, ՀԽ), «*Էս տղեն* ***մոր ծիծ կտրող*** *է. շատ առաջ կերթա*» (ՋՍ), «*Երեկ կաթն ու կորեկ* ***ախպեր տղերք*** *էին, էսօր, թուր ու թվանք*» (ՋՍ), «*Նախ, տղաք, որ* ***մամայի բալա*** *է, աշխատել է սովորում, և երկրորդ՝ էնպես թե էնպես մի արհեստ է, որ, ո՞վ գիտե, մի նեղ օր պետք կգա, մի կտոր հաց կդառնա նրա համար*» (ԹՇ) և այլն:

4. Որոշիչ, օրինակ՝ «***Մոր պահած*** *տղան լացկան է լինում*» (ԱԷ) և այլն:

5. Ուղիղ խնդիր, օրինակ՝ «*Կարծում ես միայն նա՞ է եղել, քի՞չ այդպիսի* ***հայրեր ու որդիներ*** *է խժռել ժամանակը*» (ԹՇ), «*Քո դաստիարակությունն է,* ***մամայի բալա*** *ես մեծացնում, վախեցե՜լ է ես ի՞նչ գիտեմ՝ ինչից*» (ԹՇ):

6. Ժամանակի պարագա «*Մոր արգանդից, իր ծնունդից, իր առաջին ճիչից, իր առաջին ինքնուրույն քայլից, երբ բոլորին թվում է, թե նա այլևս չի կառչում շրջապատի իրերից*» (ՋԴ) և այլն:

**Բանալի բառեր** - հայր, մայր, քույր, եղբայր, դարձվածք, կազմություն

**Нерсесян Шушан, Концепты "Отец, мать, брат, сестра" в фразеологизмах -** Среди концептов, выражающих родственные отношения в лексическом составе фразеологизмов армянского языка, наиболее частотными являются структуры с компонентами «отец» и «мать»; со словом «брат» сформировано около 10 фразеологизмов, а с лексемой «сестра» – 5. Концепты, указывающие на родственные отношения, в идиоматических выражениях, в целом, сохранили свой первичный смысл и сформировали группу фразеологических номинаций, обозначающих лицо. Однако в результате семантической трансформации ряд фразеологических единиц стал применяться в качестве номинаций, обозначающих животных или предметы. Фразеологизмы, образованные с помощью компонента ***отец***, в армянских диалектах характеризуются «общим» определением, то есть это выражения, которые употребляются почти во всех фразеологических оборотах. Компонент ***мать*** в диалектных фразеологических единицах встречается редко, в основном, без чередования звуков. Компонент ***брат*** выражается фонетическим

чередованием. Фразеологизмы с компонентом ***сестра*** как в художественной литературе, так и в диалектах имеют ограниченное употребление.

**Nersesyan Shushan , The conception of "Father, mother, brother, sister" in phraseological units -** In Armenian, phraseological units with the words "father" and "mother" are more frequent than the ones with a brother (about 10 units) and sister (5 units).

Concepts, showing a relationship, mainly maintain their primary meaning by forming personality characterized phraseological units. Though, a number of phraseological units are used as nouns describing people and things with the help of meaning change. In Armenian dialects, the phraseological units with the word **father** are described with the "common" attribute which means they are expressions used in almost all phraseological units. The word **mother** is rarely used in dialectal phraseological units; it mainly appears with no sound interchange. The word **brother** is mainly expressed with sound interchange. Phraseological units with the word **sister** have limited usage in both literature and dialects.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գ. Ջահուկյան, Է. Աղայան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, Ա պրակ, Երևան, «Լույս» հրատարակչություն, 1980, 528 էջ:

2. Գեղարվեստական օրինակները ներկայացված են՝ ըստ Արևելահայերենի ազգային կորպուսի http://eanc.net/EANC/search/?interface_language=am Հասանելի է 28.04.2019:

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԷ - Ավագյան Էդուարդ, Կռնդի մարմանդ վերջալույսը
ԱԽ - Աբովյան Խաչատուր, Առաջին Սեր
ԲԱ - Բակունց Ակսել, պատմվածքներ
ԲԶ - Բալայան Զորի, Օջախ
ԳԳ - Գալստյան Գալուստ, Կյանքը խաչմերուկներում
ԴԴ - Դեմիրճյան Դերենիկ, Վարդանանք
Զ Ն - Զարյան Նաիրիր, Սասունցի Դավիթ
ԶՊ - Զեյթունցյան Պերճ, պիեսներ
ԶՍ - Զորյան Ստեփան, պատմվածքներ
ԶՍ Ու - Զորյան Ստեփան, Ուրվագծեր
ԹՇ - Թաթիկյան Շահեն, Նրա ճանապարհը
ԻԱ - Իսահակյան Ավետիք, պատմվածքներ, արձակ պոեմներ, լեգենդներ և զրույցներ, հեքիաթներ և առակներ
ԽՄ - Խերանյան Մկրտիչ, Ձայն տուր ով ծովակ

ՀՄ - Մաթևոսյան Հրաչյա, Տուն մոր համար
ՀՄ Պ- Մաթևոսյան Հրանտ, պատմվածքներ
Մ - Մուրացան, Նոյի ագռավը
ՄԼ - Մեհրաբյան Լուսյա, Գնում է հաղթելու
ՊՊ Հ - Պռոշյան Պերճ, Հունո
ՊՊ ՀԽ - Պռոշյան Պերճ, Հացի խնդիր
ՊՊ Ց - Պռոշյան Պերճ, Ցեցեր
ՍՄ - Սարգսյան Մկրտիչ, Քաջ Նազար

# ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ. ՋՈՆ ՌՈԼՍԻ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀԱՄԼԵՏ ՍԻՄՈՆՅԱՆ
ԵՊՀ ուսանող, Սոցիալական փիլիսոփայության, բարոյագիտության և գեղագիտության ամբիոն
E-mail: hamlet.simonyan.99@gmail.com

Արդարության հիմնահարցը բազմիցս քննարկվել ու դեռ շարունակում է քննարկվել փիլիսոփայության, քաղաքագիտության, ինչպես նաև իրավագիտության տեսանկյունից: Մարդկության պատմության տարբեր էտապներում զանազան քաղաքակրթությունների մոտ այս կամ այն կերպ նկատվող այս ֆենոմենը կամ գուցե վերջինիս դրսևորման որոշ նշույլներ իրենց յուրովի դրսևորումներն ունեն մինչ օրս:

Տարբեր դարաշրջաններում ուշադրության արժանացած այս երևույթը ունի բազում բնորոշումներ՝ բնականաբար իր վրա կրելով տվյալ դարաշրջանում գերիշխող բնութագրական գծերը, ինչպես նաև մտածողների աշխարհայացքային առանձնահատկությունները:

***Արդարություն (justice)*** բառը ծագում է լատիներեն «jus» բառից և նշանակում է «ճիշտ» կամ «օրենք»: «Oxford English Dictionary»-ն սահմանում է արդար մարդուն՝ որպես բարոյապես ճիշտ քայլեր կատարող, բոլորին իրենց հասանելիքը տվող էակի, ինչպես նաև որպես հոմանիշ առաջարկում է «fair» (անաչառ) բառը: Սակայն փիլիսոփաները դուրս են գալիս ստուգաբանական և բառարանային սահմանումներից՝ արդարության բնույթը համարելով և՛ բարոյական առաքինություն, և՛ քաղաքական հասարակության ցանկալի որակ, ինչպես նաև ուշադրություն դարձնելով այն հարցին, թե ինչպես է արդարությունը կապվում էթիկական և սոցիալական որոշումների կայացմանը:[1]

Ինչպես բազում այլ երևույթներ, այնպես էլ արդարությունը իր նախասաղմնային բնորոշումները ստացել է Հին Հունաստանում: Այստեղ, այն կապելով հասարակական ինստիտուտների աշխատանքի հետ, կարծում էին, որ զար-

---

[1] Տե՛ս **Wayne P. Pomerleau,** Western Theories of Justice, Internet Encyclopedia of Philosophy, Introduction: https://www.iep.utm.edu/justwest/, այց՝ 20.04.19:

ցացնելով արդարությունը՝ կարելի է զարգացնել նաև հասարակական ինստիտուտները:

Այս համատեքստում հատկանշական են հին հույն մտածողների՝ մասնավորապես Պլատոնի և Արիստոտելի անդրադարձը արդարություն հասկացությանը իրենց աշխատություններում:

Պլատոնը գտնում էր, որ մարդու հոգին կազմված է երեք հիմնական մասերից՝ ցանկական, ցասմական և բանական: Հենց այս երեք հավասարակշիռ սկզբունքների ներդաշնակությունն էլ հույն մտածողը անվանում է արդարություն:[1] Ըստ Պլատոնի՝ քաղաքական համայնքը հիերարխիկ հասարակություն է՝ բաղկացած երեք դասակարգից՝ փիլիսոփա կառավարիչներից, մարտիկներից և աշխատող դասակարգից: Նշված դասակարգերի միջև պատշաճ համագործակցությունն ու փոխհարաբերություններն էլ նա անվանում է քաղաքական արդարություն:[2]

Արդարության մասին խոսվում է բոլոր այն իրավիճակներում, որտեղ առկա են բաշխման, փոխհատուցման և փոխանակման հետ կապված հարաբերություններ: Ցանկացած հասարակություն մի մեխանիզմ է, որն ապահովում է շահույթի ու վնասի բաշխում, փոխհատուցում և փոխանակում:Վերոնշյալ հարաբերությունների մեջ գտնվող անձինք կարող են լինել և՛ հավասար, և՛ անհավասար: Քննարկելով արդարության հիմնահարցը՝ Արիստոտելը նախ ներկայացնում է երևույթի ընդհանուր և մասնավոր բնույթը: Ընդհանուր արդարության տակ պետք է հասկանալ հասարակական կառուցվածքի բարոյական արժեհամակարգը, սոցիալական կառուցվածքի սահմանված սկզբունքները և հասարակական ինստիտուտների լեգիտիմացումը: Ընդհանուր արդարությունը կարող է հանդես գալ համընդհանուր օրենքների, նպատակների և արժեքների տեսքով: Ինչ վերաբերում է մասնավոր արդարությանը, Արիստոտելը գտնում է, որ այն մասնավոր արժեք է՝ առանձին անհատների մասնավոր իրավունքների ու պարտականությունների արդար բաշխման և արժանիքների, կարիքների և լիազորությունների արդար բաժանման:[3]

Արիստոտելը առանձնացնում էր արդարության ***բաշխիչ և շտկիչ*** տեսակները՝ որպես մասնավոր արդարության տարատեսակներ: Բաշխիչ արդարությունը ներառում է հասարակության անդամների միջև օգուտների ու բեռների անաչառ բաժանումը, իսկ շտկիչ արդարությունը այս կամ այն հանգամանքներում փորձ է անում վերականգնելու անաչառ հավասարակշռություն միջանձնային հարաբերություններում: Եթե համայնքի անդամը անարդարացիորեն բեռնվել

---

[1] Տե՛ս **Հայկ Թադևոսյան,** Արդարության վերաբերյալ հայեցակարգերի պատմահամեմատական վերլուծության փորձ, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, № 2-3, 15 ապրիլի, 2016, էջ 231:

[2] Տե՛ս **Wayne P. Pomerleau,** Western Theories of Justice, Internet Encyclopedia of Philosophy, 1. Ancient Greece, a. Plato: https://www.iep.utm.edu/justwest/, այց՝ 20.04.19:

[3] Տե՛ս **Հայկ Թադևոսյան,** Արդարության վերաբերյալ հայեցակարգերի պատմահամեմատական վերլուծության փորձ, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, № 2-3, 15 ապրիլի, 2016, էջ 233:

կամ օգուտ է ստացել ավելի շատ/քիչ, քան արժանի է սոցիալական բաշխման շրջանակներում, ապա գործ ունենք շտկիչ արդարության հետ, որն այս դեպքում կարող է դրսևորվել անգամ դատական կարգով:[1]

Իր աշխատություններում Արիստոտելը գրում է նաև, որ օրենքի գերակայությունն անհրաժեշտ է լավ կառավարման և անհատների շահերը պաշտպանելու համար: Մտածողը հավաստիացնում է, որ արդարության և օրենքի միջև սերտ կապ գոյություն ունի: Նա նաև խոսում է բնական օրենքի տեսությունից՝ հավելելով, որ բնական արդարությունը և բնական իրավունքը առաջանում են հենց բնական օրենքից: Կարևոր է նշել նաև, որ ստոիկները, զարգացնելով բնական օրենքի տեսությունը, փորձում էին դրա շնորհիվ բացատրել մարդու իրավունքների բնությունը: Ըստ ստոիկների՝ մարդու բնական իրավունքները մարմնավորումն են արդարության այնպիսի բարձրագույն սկզբունքների, որոնք կարող են բացահայտվելմարդկային բանականության միջոցով, և որպես այդպիսին՝ առավել են դրական օրենքի նկատմամբ:[2]

Միջնադարում ևս, չնայած թեմատիկ վայրիվերումների, արդարության խնդիրը չի դադարում քննարկվել. այս շրջանում արդարությունը, դիտարկվելով կրոնաաստվածաբանական համատեքստում, ստանում է համապատասխան թեմատիկ շեշտադրում:

Օգոստինոս Երանելին իր «Աստծո քաղաքը» (De civitate Dei) աշխատության մեջ, հետևելով Ցիցերոնի օրինակին, գրում է այն մասին, որ հռոմեացիները երբեք չեն ունեցել հանրապետություն: «Ես ջանում եմ ցույց տալ, որ նման հանրապետություն երբևէ գոյություն չի ունեցել, քանի որ այդ հասարակության մեջ բացակայում էր իրական, ճշմարիտ արդարությունը. հռոմեացիները չէին ենթարկվում ճշմարիտ Աստծուն»[3],- գրում է Երանելին: Այսպիսով, Երանելին արդարությունը կապում էր աստվածայինի հետ՝ կարծելով, որ միայն ճշմարիտ Աստծուն հետևելով է հնարավոր ունենալ արդար հասարակություն:

Նույն դարում հայտնի աստվածաբան և փիլիսոփա Թովմա Աքվինացին գրում է «Հավաքումն աստվածաբանության» մագիստրալային աշխատությունը, որտեղ անդրադառնում է բնական իրավունքին՝ նշելով, որ վերջինս, ստեղծված լինելով Աստծո կողմից, արդար է, ինչպես նաև միտված է օգնելու անհատներին հասկանալ իրենց արժանապատվությունն ու հասնել զարգացման բարձր աստիճանի:[4] Ի դեպ, հարկ է նշել, որ միջնադարում բնական իրավունքի գաղափարը

---

[1] Տե՛ս **Wayne P. Pomerleau,** Western Theories of Justice, Internet Encyclopedia of Philosophy, 1. Ancient Greece, b. Aristotle: https://www.iep.utm.edu/justwest/, այց՝ 20.04.19:

[2] Տե՛ս **Paul Gorgon Lauren,** The Foundati..ons of Justice and Human Rights in Early Legal Texts and Thought, The Oxford Handbook of International Human Rights Law, Oxford University Press, Oxford, UK, 2013, էջ 173-174:

[3] **St. Augustin**, City of God and Christian Doctrine by Philip Schaff, Grand Rapids, New York, US, 1890, p. 80.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 177:

կապվում էր Աստծո հետ, ըստ այդմ՝ յուրաքանչյուր իրավունք, համաձայն ժամանակի մտածողների, մարդուն տրվում էր Աստծո կամեցողությամբ և նրա կողմից։

Աքվինացին կարծում էր, որ արդարությունը, լինելով մարդկանց բարոյական արժանիքներից ամենաառաջնայինը, նաև սովորություն է, ինչի միջոցով մարդը տալիս է յուրաքանչյուրին իր հասանելիքը հաստատուն և հավերժ կամքով:[1]

Նոր ժամանակներում ևս արդարության հիմնահարցը շարունակվել է քննարկվել մի շարք մտածողների կողմից: Այն իր ուրույն բնորոշումերն է ստացել կոնտրակտարիանիստների՝ մասնավորապես Թոմաս Հոբսի և Ջոն Լոկի փիլիսոփայական մտածողություններում՝ կապվելով սոցիալական պայմանագրի(Social contract) տեսության հետ: Ըստ այս տեսության՝ մարդկանց բարոյական և/կամ քաղաքական պարտականությունները կախված են վերջիններիս միջև կնքված պայմանագրից/համաձայնագրից՝ ձևավորելով այն հասարակությունը, որում նրանք ապրում են:Ըստ այս տեսության՝ մարդիկ միասին ապրում են հասարակության մեջ՝ համաձայն մի պայմանագրի, որը սահմանում է վարքագծի բարոյական և քաղաքական կանոնները:[2]

Հոբսը, իր «Լևիաթան» հայտնի աշխատության մեջ անդրադառնալով սոցիալական պայմանագրի էությանը և տարբերակելով մարդկային կեցության երկու վիճակ՝ բնական և քաղաքացիական, գրում է, որ սրանցից առաջինը վախի և թշվառության վիճակ է: «Բնական վիճակում մենք գտնում ենք մարդկանց միջև տեղի ունեցող վեճերի երեք հիմնական պատճառ:Առաջինը մրցակցությունն է, երկրորդը՝ խտրականությունը, երրորդը՝ փառքը»,- գրում է Հոբսը[3]: Եվ քանի որ սա անընդհատ պայքարի, եսասիրական մղումների, թշվառության ու վախի վիճակ է, այստեղ չեն կարող լինելարդարության և անարդարության միջև որևէ բարոյական տարբերություններ:[4] Բայց երբ մարդը մտնում է հասարակական դաշինքի մեջ, խախտել վերջինիս շրջանակներում ամրագրված կանոնները ***արդարացի չէ:***Հետնաբար արդար է համարվում այն գործողությունը, որը իր բնույթով համապատասխանում է դաշինքի ներսում գործող նորմերին ու կանոններին: Հոբսը պնդում էր, որ մարդիկ բարոյապես հավասար են, քանի որ սկզբից ևեթ ունեցել են հավասար մտավոր ունակություններ: Ի դեպ, Հոբսը առաջինն էր քաղաքական պատմության մեջ, ով բարիք հասկացությունը փոխարինեց իրավունք հասկացությամբ:

---

[1] Տե՛ս **Kilcullen, John and Robinson, Jonathan,** Medieval Political Philosophy, The Stanford Encyclopedia of Philosophy (Summer 2018 Edition), Edward N. Zalta (ed.), 4. Augustine, 4.1 The City of God: https://plato.stanford.edu/entries/medieval-political/, այց՝ 21.04.19:

[2] Տե՛ս **Jean Hampton,** Contract and Consent, In: A Companion To Contemporary Political Philosophy, 2nd Edition, ed. by Robert E. Gooden, Philip Pettit and Thomas Pogge, vol. 1, Chapter 21, Blacwell Publishing Ltd, London, 2007, էջ 478-481:

[3] **Thomas Hobbes,** Leviathan or the Matter, Forme & Power of a Common-wealth Ecclesiasticall and Civil, London, 1651, Chapter 13, p. 77.

[4] Տե՛ս **Wayne P. Pomerleau**, Western Theories of Justice, Internet Encyclopedia of Philosophy, 3. Early Modernity, a. Hobbes: https://www.iep.utm.edu/justwest/, այց՝ 20.04.19:

Անգլիացի մտածող Ջոն Լոկը հավասարությունը համարում էր արդարության հիմնական սկզբունքը: Եվ իզուր չէ, որ մտածողը գրում է. «Բնական վիճակը հավասարության վիճակ է, որտեղ բոլոր ուժերն ու իրավասությունները երկկողմանի են. ոչ ոք չունի ավելին, քան մյուսը, ավելի ակնհայտ ոչինչ չկա, քան այն, որ միևնույն տեսակն ու կոչումն ունեցող արարածները, ունենալով բնությունից տրված միևնույն առավելությունները, պետք է լինեն հավասար առանց որևէ հպատակեցման կամ ստորադասման»[1]: Իր «Ակնարկներ բնության օրենքի մասին» աշխատության մեջ Լոկը գրում է.***«Արդարությունը բնության գլխավոր օրենքն է և ցանկացած հասարակության կապող հիմքը».***[2]

Ներկայացնելով բնական վիճակը որպես «Բոլորը պատերազմում են բոլորի դեմ» վիճակ՝ Հոբսը կարծում էր, որ արդարությունը բնորոշ է միայն քաղաքացիական վիճակին: Այս պնդումով մտածողը բացառում էր բարոյական տարրի գոյությունը բնական վիճակում: Ի տարբերություն Հոբսի՝ Լոկն այն կարծիքին էր, որ բնական վիճակում, այնուամենայնիվ, կարող է լինել արդարություն՝ սրանով իսկ ենթադրելով, որ բարոյականություն կա նաև բնական վիճակում: Լոկյան մեկնաբանության դեպքում, փաստորեն, բնական վիճակին արդեն իսկ բնորոշ են քաղաքացիական հասարակության տարրեր, որոնք ապահովում են ավելի հեշտ անցումը բնական վիճակից քաղաքացիականին:

Խոսելով արդարության մասին՝ չենք կարող չանդրադառնալ երևույթի այն բնորոշմանը, որը մեզ տալիս են 19-րդ դարում ձևավորված բավականին հայտնի ու մասսայական հարգանք վայելող օգտապաշտական ուղղության ներկայացուցիչները՝ մասնավորապես Ջերեմի Բենթամը և Ջոն Ստյուարտ Միլը:

Ուտիլիտարիզմը (օգտապաշտություն)՝ որպես արդարության հայեցակարգ, ռացիոնալ արարածի գործողությունները որակում է արդար, երբ դրանք բերում են ընդհանուր բավարարվածության: Ավելի մանրամասնելով՝ այս հոսանքի հետևորդները գտնում են, որ անհատի կամ պետության գործողությունները կարող են համարվել արդար և բարոյական միայն ու միայն այն դեպքում, եթե վերջիններս հանգեցնում են համընդհանուր բարիքի կամ հաճույքի բարձրացմանը և տառապանքի նվազմանը: Սա թերևս միայն օգտապաշտների դիրքորոշումն է, որն ունի ինչպես իր ուժեղ, այնպես էլ խոցելի կողմերը, սակայն հիմա դրա վրա չէ, որ պետք է սևեռենք մեր ուշադրությունը:

Ավելի կարևոր է նշել, որ ուտիլիտարիզմի՝ որպես փիլիսոփայական հոսանքի նախակարապետ Ջերեմի Բենթամը չի ճանաչում անհատի իրավունքները որպես այդպիսին, ուստի և արդարության գաղափարը պարզապես ***օգտակա-***

---

[1] **John Locke,** Two Treatises of Government and A Letter Concerning Toleration, Yale University Press, New Haven and London, 2003, p. 101-102.

[2] **John Locke**, Essays on the Law of Nature, edited by Mark Goldie, Cambridge University Press, Cambridge, UK, 2002, p. 110.

***րության(utility)***(սա առանցքային հասկացություն էր օգտապաշտների համար) ենթակա ասպեկտ է: Բենթամի արդարության սկզբունքը օգտակարության անբաժան մասն է՝ միավորված օրենսդրության մեջ: Այսինքն՝ նրա արդարության սկզբունքը արդարություն է՝ համաձայն օրենքի, որն էլ իր հերթին գործում է օրենսդրության մեջ:[1]

Ջ. Ս. Միլը չնայած կարծում էր, որ արդարության սկզբունքը պետք է հիմնվի օգտակարության վրա, այնուամենայնիվ հավատում էր, որ արդարության զգացման ծագումը պետք է փնտրվի երկու սենտիմենտներում՝ համակրանքի զգացման մեջ նինքնապաշտպանության իմպուլսում: «Արդարության զգացումը ներառում է այն բոլոր բարոյական պահանջները, որոնք ամենակարևորն են մարդու բարեկեցության համար»[2],- նշում է Միլը:

Իր ձևավորման օրից սկսած՝ ամերիկյան քաղաքական միտքը տևական կենտրոնացում է ունեցել արդարության հարցի վրա: Այս համատեքստում հատկանշական է ամերիկացի մտածող Ջոն Ռոլսիդերն ու ազդեցությունը թեմայի ըմբռնման և յուրովի մեկնաբանման համար: Մտածողի հայացքները առանցքային տեղ են զբաղեցնում բարոյական և քաղաքական փիլիսոփայության մեջ: Ռոլսի՝ սոցիալական արդարության մասին գաղափարները ներկայացված են ***«Արդարության տեսություն» (A Theory of Justice)***աշխատության մեջ: Այստեղ ամերիկացի փիլիսոփան ուշադրությունը կենտրոնացնում է արդարության գլխավոր առարկայի՝ հասարակության հիմնական կառուցվածքի վրա, որի տակ նա հասկանում է առավել կարևոր սոցիալական, իրավական, քաղաքական և տնտեսական ինստիտուտների ամբողջ համակարգը: Այդ ինստիտուտները թույլ են տալիս կառուցել կարգաբերված հասարակություն:[3]

Աշխատանքի առաջին գլխում հեղինակը սահմանում է այն հայեցակարգային հիմքը, որի շուրջը պետք է կառուցի իր ***արդարության տեսությունը որպես անաչառություն (justice as fairness)*** և տալիս է ակնարկ այս հայեցակարգի հիմնական գծերի մասին:

«Արդարությունը սոցիալական ինստիտուտների առաջնային առաքինությունն է, ինչպես որ ճշմարտությունը մտքի համակարգերից է», - գրում է Ռոլսը և այստեղից էլ հանգում այն բանին, որ ոչ իրավական հաստատություններն ու օրենքները պետք է բարեփոխվեն[4]: Արդարությունը նշանակում է, որ յուրաքանչյուր անհատ ունի հավասար իրավունքներ և ազատություններ, որոնք չեն կարող նվազեցվել կամ մերժվել՝ փոխարենը ծառայելով որևէ այլ անձի կամ նույնիսկ

---

[1] Տե՛սM. K. Vyas, Concept of Justice, Utilitarianism and other Modern Approaches, 17 հունվար, 2014: https://archive.org/details/concept_of_justice/page/n3, այց՝ 20.04.19:

[2] **John, S. Mill,** Utilitarianism, Batoche Books, Kitchener, Ontario, Canada, 2001, p. 61.

[3] Տե՛ս **Թադևոսյան Հ. Դ.,** ՋոնՌոուլսի«Արդարությանտեսությունը», Լրաբեր հասարակական գիտությունների, № 1, 2015, էջ 253:

[4] **John Rawls,** A Theory of Justice, Harvard University Press, Cambridge, Massachusetts, US, 1971, p. 3.

ամբողջ հասարակության օգտին: Ռոլսը սա անվանում է ***անձեռնմխելիություն՝ հիմնված արդարության վրա (an inviolability founded on justice):***

Սահմանելով հասարակությունը որպես փոխադարձ օգուտի համար համագործակցային համարձակ ձեռնարկում՝ հեղինակը նշում է, որ չնայած մարդիկ հասարակության մեջ համագործակցաբար աշխատում են շահավետ նպատակների համար, այնուամենայնիվ նրանց մոտ առկա է շահերի ինքնություն: «Թեևորևէ հասարակություն փոխադարձ օգուտի համար համագործակցային համարձակ ձեռնարկում է, այնուամենայնիվ սովորաբար այն բնութագրվում է ինչպես շահերի բախումով, այնպես էլ համընկմամբ: Շահերի համընկնում կա, քանի որ սոցիալական համագործակցությունը բոլորի համար հնարավոր է դարձնում ավելի լավ կյանք, քան կլիներ, եթե յուրաքանչյուրը պարտադրված լիներ ապրելու իր սեփական ջանքերով: Շահերի բախում կա, քանի որ անձինք անտարբեր չեն, թե ինչպես են իրենց համագործակցությամբ ստեղծված ավելի մեծ օգուտները բաշխվում, քանի որ իրենց նպատակներին հետամուտ լինելու համար նրանցից յուրաքանչյուրը նախընտրում է ավելի մեծ, քան ավելի քիչ մասնաբաժին: Հարկավոր է սկզբունքների հավաքակազմ օգուտների այս բաժանումը որոշադրող զանազան սոցիալական կարգադրումների միջև ընտրելու և պատշաճ բաշխիչ մասնաբաժինների շուրջ համաձայնություն երաշխավորելու համար: Այս սկզբունքները սոցիալական արդարության սկզբունքներն են. հասարակության հիմնական հաստատություններում դրանք տրամադրում են իրավունքների ու պարտականությունների հատկացման եղանակ ու սահմանում սոցիալական համագործակցության օգուտների ու բեռների համապատասխանբաշխումը»:[1]

Ռոլսը անդրադառնում է նաև արդարության համընդհանուր ըմբռնմանը՝ նշելով, որ. «Եթե հասարակության մեջ կա արդարության հանրային ըմբռնում, ապա այդ հասարակությունը համարվում է լավ կարգաբերված»[2]: Սակայն մարդկանց միջև անհավասարությունը յուրաքանչյուր հասարակության բաղադրատարր է: Ծանրաբեռնվածության և առավելությունների բաշխումը ստեղծում է հասարակության կառուցվածք՝ ձևավորելով դրա քաղաքական, տնտեսական և սոցիալական ինստիտուտները: Ըստ Ռոլսի՝ սոցիալական արդարության սկզբունքները պետք է անդրադառնան այս անհավասարություններին, կարգավորեն մարդկանց առավելություններն ու ծանրաբեռնվածությունները՝ ըստ այդմ ստեղծելով ***բաշխիչ արդարություն (distributive justice).***[3]

Այսպիսով, առաջանում է «արդարությունն իբրևանաչառություն» գաղափարը, որի հիմքում ընկած է հավասարության նախնական դիրքում անաչառության հայեցակարգը, որն էլ վերածվում է արդարության սկզբունքների: Հասարակական ինստիտուտներում սրանց կիրառումը պետք է անաչառ գործարքի հետ-

---

[1] Նույն տեղում, էջ 4-5:

[2] Նույն տեղում, էջ 5:

[3] Նույն տեղում, էջ 7:

նանք լինի և հանգեցնի արդար արդյունքների։[1] Հարց է առաջանում. հասարակության կազմակերպման ինչպիսի՞ ձև կընտրեին բանական մարդիկ, եթե նրանք լինեին անկախության և հավասարության նախնական դիրքում և սկսեին համագործակցության սիստեմ մշակել:Այս ամենն էլ ավելի մանրամասն բացատրելու համար Ռոլսը դիմում է հասարակական դաշինքի գաղափարին: «Արդարությունըորպես անաչառություն գաղափարը օրինակն է այն բանի, ինչը ես անվանում եմ սոցիալական պայմանագիր (socialcontract)»:[2] Մտածողի համոզմամբ՝ սոցիալական պայմանագիրը համարժեք մոդել է արդարության սկզբունքների դրսևորման համար, քանի որ համաձայնության անաչառությունն ապահովվում է նրանով, որ մասնակիցները համաձայն են այն սկզբունքներին, որոնց պետք է հետագայում ենթարկվեն: «Արդարությունըորպես անաչառություն» տեսության գաղափարն այն է, որ արդարությունն այստեղ ներկայանում է որպես համաձայնության օբյեկտ: Սոցիալական համագործակցության շրջանակներում մարդիկ հավասարության նախնական դիրքում ընտրում են այն սկզբունքները, որոնք էլ ծառայում են հասարակության կառուցվածքի ստեղծմանն ու զարգացմանը:

Սակայն Ռոլսի մոտ սոցիալական պայմանագիրը այլ բնույթ է կրում: «Իմ նպատակն է ներկայացնել այնպիսի արդարության հայեցակարգ, որը ընդհանրացնում և վերացականության բարձր մակարդակի է հասցնում սոցիալական պայմանագրի հայտնի հայեցակարգերը, որոնք առկա են Լոկի, Ռուսոյի և Կանտի մոտ»:[3] Պայմանագրի նպատակը արդարության սկզբունքների որոշումն է ***հավասարության վիճակից:*** Ռոլսի տեսության մեջ ինչ-որ ձև նույնացվում են մեզ հայտնի բնական վիճակը և նախնական դիրքը, սակայն նախնական դիրքը Ռոլսի մոտ հանդես չի գալիս որպես պատմականորեն գոյություն ունեցած ժամանակաշրջան. այն կրում է բացառապես հիպոթետիկ բնույթ, որը տանում է դեպի արդարության հայեցակարգի ձևավորմանը[4]:

Ինչ վերաբերում է բնական վիճակին, Ռոլսը կարծում է, որ սա ամենևին էլ հավասարության վիճակ չէ, որովհետև որոշ մարդիկ ունեն ավելի շատ բանական տաղանդներ, նախնական ռեսուրսներ, ավելի մեծ ուժ կամ վաճառքի գերիշխանություն: Այսպիսինները, բնականաբար, ի վիճակի են ավելի մեծ արտոնություններ ունենալ՝ հետևապես ստիպելով մնացածին զնալ զիջումների: Բնության այսպիսի անորոշությունները ազդում են բոլորի վրա, բայց կան մարդիկ, ովքեր ավելի լավ են կարողանում ելք գտնել դժվար իրավիճակից, ուստի վերջիններս չեն համաձայնի դիմել սոցիալական պայմանագրի, մինչև բնությունը չամրագրի նրանց

[1] Տե՛ս **John Rawls,** Justice as Fairness, The Philosophical Review, vol. 67, no. 2, Cornell University Press, 1958, էջ 164–194:

[2] **John Rawls,** A Theory of Justice, Harvard University Press, Cambridge, Massachusetts, US, 1971, p.14.

[3] Նույն տեղում, էջ 16-17:

[4] Տե՛ս **Will Kymilcka,** Contemporary Political Philosophy. An Introduction, Second Edition, Oxford University Press, US, 2002, էջ 62:

բնական առավելությունները: Այսպիսի փաստը, անխոս, անարդար է՝ ըստ Ռոլսի: Եվ քանի որ նմանատիպ բնական (նախնական) առավելությունները անցանկալի են, դրանք չպետք է ոչ մի կերպ արտոնություն տան մարդուն կամ էլ թեքացնեն նրան արդարության սկզբունքները որոշելու համար: Ուստի հարկավոր էր մի նոր բան, որը կկանխեր մարդկանց՝ իրենց կամայական առավելություններից օգտվելը: Ռոլսը տալիս է սրա բանալին՝ ի հայտ բերելով իր հայտնի ***«անտեղյակության քող»-ի (veil of ignorance)*** գաղափարը:

Այս առիթով Ռոլսը ներկայացնում է մի մտային էքսպերիմենտ, ըստ որի՝ արդարության սկզբունքները ձևակերպող անհատները չունեն կարևոր և բազմակողմանի տեղեկություն իրենց մասին: Վերոնշյալ անտեղյակության քողը բացառում է մարդկանց տեղեկացվածությունն իրենց պաշտոնի, մասնագիտության, տաղանդի, առողջության, ֆիզիկական ուժի, խավային պատկանելության, արժանիքների ու կարողությունների, բարիքի անհատական հայեցակարգի վերաբերյալ: Այս ամենն իր հերթին կբացառի, ըստ Ռոլսի, որևէ հատուկ շահերի պաշտպանություն կամ ներքին պայմանավորվածություն՝ ի վնաս փոքրամասնության: Ռոլսը անդրադառնում է նաև քաղաքական կուսակցություններին՝ գրելով. «Քաղաքական կուսակցությունները չգիտեն իրենց հասարակության մասնավոր հանգամանքները, այն է՝ չիմանալ հասարակության տնտեսական, քաղաքական իրավիճակը, մշակույթի և քաղաքակրթության զարգացման մակարդակը: Միակ բանը, որ տեսնում են կուսակցությունները, այն է, որ իրենց հասարակությունը ենթակա է արդարությանը և այն ամենին, ինչ այն ենթադրում է: Կասկած չկա նաև, որ նրանք գիտեն, թե ինչ են հասարակությունը, քաղաքական և տնտեսական հարաբերությունները»:[1] Այնուամենայնիվ, նախնական դիրքում պայմանագիր կնքողներն ունեն երկու հիմնական հատկություն՝ արդարության զգացում և բարիքի հայեցակարգի ձևավորման կարողություն: Այսպիսով՝ ռոլսյան «անտեղյակության քող»-ի գաղափարը ապահովում է անաչառության և անանունության պայմաններ կոնսենսուսի հասնելու համար:

Պետք է նշել, որ անտեղյակության քողը ընկած է արդարացի ինստիտուտների առաջացման գործընթացի չորս փուլերի հիմքում: Այս փուլերից յուրաքանչյուրի ընթացքում անտեղյակության քողը աստիճանաբար չքանում է՝ ենթադրյալ պայմանագրի մասնակիցներին տալով ավելի լիարժեք գիտելիքներ հասարակության և սեփական անձի վերաբերյալ, իսկ վերջին՝ չորրորդ փուլում քողը ամբողջությամբ վերանում է:

Առաջին փուլում մտածողը ներկայացնում է նախնական դիրքի հասկացությունը: Հենց այդ փուլում են հասարակության ներկայացուցիչների կողմից ընտրվում արդարության սկզբունքները: Խոսքը արդարության երկու սկզբունքների մասին է, որոնց մանրամասն անդրադարձ է կատարված աշխատանքի եր-

[1] **John Rawls,** A Theory of Justice, Harvard University Press, Cambridge, Massachusetts, US, 1971, p. 118-119.

րորդ գլխում: Արդարության սկզբունքներն ընտրելուց հետո սկսվում է երկրորդ փուլը՝ արդար քաղաքական սահմանադրության ստեղծումը, որը իր հերթին էլ ավելի պիտի ամրապնդի մարդկանց հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Քողազերծման երրորդ փուլում հիմնադրվում են տնտեսական և սոցիալական քաղաքականության մեխանիզմները: Այս փուլում սահմանադրությունը հաստատում է հավասար քաղաքացիության և քաղաքական արդարության ապահով ընդհանուր կարգավիճակ: «Այստեղ և՛ սոցիալական, և՛ տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված է ամենաքիչ առավելություն ունեցողի երկարաժամկետ ակնկալիքների ավելացմանը հնարավորության անաչառ հավասարության պայմաններում»:[1] Վերջին՝ չորրորդ փուլում դիտարկվում են ֆորմալ արդարության խնդիրները՝ դատավորների ու պաշտոնյաների կողմից արդարացի օրենքների ու կանոնների անաչառ կիրառման վերաբերյալ: Այս փուլում բոլորը ունեն ամբողջական հասանելիություն բոլոր փաստերին: «Այստեղ, պարզ է, չկա ոչ մի պատճառ անտեղյակության քողի որևէ ձևի համար. բոլոր սահմանափակումները վերացվել են»,- գրում է Ռոլսը[2]:

«Արդարության տեսություն» աշխատության երկրորդ գլխում Ռոլսը ներկայացնում է արդարության երկու սկզբունքները, որոնք, ըստ նրա պնդման, կընտրվեն բնական վիճակում, և դրանք սկզբունքներ են, որոնք վերաբերում են հաստատություններին: Առաջին սկզբունքն ասում է, որ յուրաքանչյուր անհատ պիտի ունենա մյուսների համանման ազատության հետ համատեղելի առավելագույն ընդգրկման հիմնական ազատության հավասար իրավունք: Համաձայն երկրորդ սկզբունքի՝ սոցիալական և տնտեսական անհավասարությունները պիտի այնպես կազմակերպված լինեն, որ դրանք լինեն և՛ պակաս հաջողակների մեծագույն օգտին, և՛ կցված լինեն բոլորի համար բաց դիրքերին ու պաշտոններին հնարավորության անաչառ հավասարության պայմաններում:[3] Պետք է նկատել, որ երկրորդ սկզբունքի երկրորդ մասը նշանակում է, որ հանրային բոլոր գրասենյակները և մյուս բոլոր իշխանական դիրքերը պետք է բաց ու հասանելի լինեն բոլոր քաղաքացիների համար: Կարելի է ասել, որ երկրորդ սկզբունքը պահանջում է, որ սոցիալական և տնտեսական անհավասարությունները կարգավորվեն այնպես, որ ավելի քիչ հաջողակները կարողանան ակնկալել առավելագույն օգուտները, ինչպես նաև պաշտոնները և հասարակական դիրքերը բաց լինեն բոլորի համար, այսինքն՝ ազնվորեն պահպանվի հավասար հնարավորությունների սկզբունքը:

Այս սկզբունքների ձևակերպումը ենթադրում է, որ արդարության հայեցակարգի համար սոցիալական կառուցվածքը կարող է դիտարկվել որպես երկու տարբեր մասերից կազմված մի ամբողջություն, և նշված մասերը վերաբերում են մեկը մյուսին: Ռոլսը պաշտպանում է ենթադրյալ երկու սկզբունքները՝ պնդելով,

---

[1] Նույն տեղում, էջ 175:

[2] Նույն տեղում, էջ 176:

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 53:

որ վերջիններս սոցիալական համագործակցության անաչառ պայմանների կենտրոնական մասերն են, որոնք նպաստում են ազատ ու հավասար անհատների բարեկեցությանը:Արդարության երկու սկզբունքներին կցված են որոշ առաջնային կանոններ, որոնցից ամենակարևորն այն է, որ ազատությունը արտոնյալ դիրք ունի բոլոր մնացած առավելությունների շարքում, ուստի այն կարող է սահմանափակվել կամ անհավասար բաշխվել ***միայն ու միայն հանուն ազատության*** և ոչ հանուն սոցիալական կամ տնտեսական այլ առավելության:[1]

**Բանալի բառեր** – Ջոն Ռոլս, արդարության սկզբունքներ, անտեղյակության քող, հասարակություն, բնական վիճակ:

**Гамлет Симонян, Идея справедливости в философском контексте: Общая характеристика концепции справедливости Джона Роллса** -В статье представлены различные восприятия справедливости как философская проблема - от античногодо новейшего периода. Важно затронуть общую характеристику концепции справедливости Джона Роллса.В частности, касаясь фундаментального труда автора "Теория справедливости", была предпринята попытка выявить те концептуальные основы, на которых мыслитель строит идею "справедливость как беспристрастность", а также выводит два основных принципа справедливости.

**Hamlet Simonyan, The Idea of Justice in Philosophical Context: General Description of John Rawls's Conception of Justice** - The article presents different perceptions of justice as a philosophical problem - from ancient to modern period. It is important to address the general characteristics of Rawls's conception of justice. Particularly, referring to author's fundamental work, "A Theory of justice", an attempt is made to identify the conceptual foundations on which Rawls builds the idea of "justice as fairness", and also deduces two basic principles of justice.

[1] Տե՛ս **Herbert Lionel Adolphus Hart,** Rawls on Liberty and Its Priority, University of Chicago Law Review: Vol 40, Iss. 3, Article 5, US, 1973, էջ 536:

# ՈՉ ՎԵՐԲԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԷՄԻԼԻԱ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

ԵՊՀ ուսանող, ընդհանուր հոգեբանության ամբիոն

E-mail: atanesyan.emilia@gmail.com

Հաղորդակցությունը (Լատիներեն commūnicāre թարգմանաբար՝ կիսվել) երկու և ավելի մարդկանց համագործակցությունն է, որն ուղղված է փոխադարձ ըմբռնմանը, փոխհարաբերությունների հաստատմանը և զարգացմանը, միմյանց վիճակների, հայացքների և վարքի վրա փոխադարձաբար ազդելուն, ինչպես նաև նրանց համատեղ գործունեության կարգավորմանը: Այն կարող է լինել ինչպես վերբալ (խոսքային), այնպես էլ ոչ վերբալ (ոչ խոսքային)[1]:

Ոչ վերբալ հաղորդակցությունը մարդկանց միջև շփումն է՝ առանց բառերի: Այն ներառում է տեսողական ազդանշանների օգտագործում, ինչպիսիք են՝ մարմնի լեզուն, մարդկանց միջև հեռավորությունը, դեմքի արտահայտությունը և այլն: Ոչ վերբալ հաղորդակցության և վարքի վերաբերյալ գիտական հետազոտությունները սկսվել են 1872թ.-ից, և դրանց համար հիմք է հանդիսացել Չարլզ Դարվինի՝ «Հույզերի արտահայտումը կենդանիների և մարդու մոտ» գիրքը: Գրքում Դարվինը պնդում է, որ բոլոր կաթնասուններն իրենց զգացմունքներն արտացոլում են դեմքի արտահայտությունների միջոցով: Հիմնվելով հենց այս աշխատանքի վրա՝ իրենց ուսումնասիրություններն են սկսել մի շարք գիտնականներ[2]:

Այս ոլորտի «առաջնեկներից» մեկն է եղել հայազգի գիտնական Ալբերտ Մեհրաբյանը, ով, ուսումնասիրելով հաղորդակցությունը, 1950թ.-ին առաջ է քաշել «7-38-55» սկզբունքը: Նա պնդում էր, որ հաղորդակցության մեջ 7 %-ն այն է, ինչ է ասվում, 38 %-ը՝ ինչպես է այն ասվում, և 55 %-ը մարմնի ոչ վերբալ ազդակներն են՝ «մարմնի լեզուն»[3]:

Հիմնվելով Գ. Կրեյդլինի կատարած ուսումնասիրությունների վրա՝ կարող ենք ասել, որ ոչ վերբալ հաղորդակցումը կատարում է մի շարք ֆունկցիաներ.

- Ոչ վերբալ հաղորդակցությունը լրացնում է վերբալ հաղորդակցությանը. Երբ ձեր ընկերոջը հանդիպելիս և բարևելիս նրան ժպտում եք, դա խոսում է այն մասին, որ դուք ուրախ եք նրան տեսնելու համար: Այս կոնտեքստում ոչ վերբալ տարրը՝ ժպիտը, լրացրեց ձեր խոսքը և դարձրեց այն ավելի համոզիչ:
- Ոչ վերբալ հաղորդակցությունը կարող է հակասել վերբալ հաղորդակցությանը. Երբ ասում եք. «Ձեզ հետ շատ հաճելի է զրուցելը», սակայն դա ասելիս

[1] Տե՛ս **Андреева Г.М.,** Социальная психология, М., Аспект Пресс, 2001

[2] Տե՛ս **Биркенбил В.,** Язык интонации, мимики, жестов, Питер; СПБ, 1997

[3] Տե՛ս **Леонтьев А.А.,** Психология общения, Тарту, 1974

չեք նայում զրուցակցի աչքերին՝ հերքում եք Ձեր ասածներն ու թուլացնում եք արտաբերված դրական խոսքերի ուժը: Նման գործողությունները հիմնականում կատարվում են ենթագիտակցորեն, սակայն փչացնում են Ձեր խոսքերը, կասկածի տեղիք են տալիս և ստիպում են զրուցակցին լինել ավելի ուշադիր:

• Ոչ վերբալ գործողությունները կարող են փոխարինել վերբալին. Երեխան կարող է պարզապես մատով ցույց տալ խաղալիքը և մենք կհասկանանք, որ նա ցանկանում է դա, և ամենևին պարտադիր չի լինի, որ նա ասի. «Տուր ինձ այդ խաղալիքը»:

• Ոչ վերբալ հաղորդակցությունը կարող է կատարել կարգավորիչ գործառույթ. Սա նշանակում է, որ ոչ վերբալ նշանները կարող են կոորդինացնել մարդկանց գործողությունները: Այդ նշաններից են՝ գլխի շարժումները, մարմնի շարժումները, դիրքը, ձայնի տոնայնություն և այլն: Օրինակ՝ մենք կարող ենք հասկանալ, որ եկել է խոսելու մեր հերթը, երբ զրուցակիցը նայում է մեզ և գլխով է անում:

• Ոչ վերբալ հաղորդակցությունը կարող է կրկնել վերբալ տարրերը. Մենք կարող ենք ասել որևէ մեկին, որ նա լռի և դրա հետ մեկտեղ մեր մատը մոտեցնենք շուրթերին, որն, ըստ երևույթին, նույն բանն է նշանակում[1]:

Ուսումնասիրելով և հիմնվելով մի շարք գիտնականների աշխատությունների վրա՝ կարող ենք առանձնացնել ոչ վերբալ հաղորդակցման 6 հիմնական տարրեր.

1. Ժեստեր. Դիմացինին որևէ արտահայտություն փոխանցելու համար արվող մարմնի կամ մարմնի որևէ մասի կատարած համապատասխան շարժումն է: Ժեստեր անելու համար առավելապես օգտագործվում են ձեռքերը, ձեռքի մատները, գլուխը, ոտքերը: Ժեստերի օգտագործումը մարդկանց համար դարձել է անհրաժեշտ գործոն, մանավանդ այն ժամանակ, երբ այլ միջոցներ չկան կամ դրանք ոչ այնքան օգտակար են տվյալ պահին:

2. Դիմախաղ. Դիմախաղը մարդկանց՝ միմյանց հետ հաղորդակցվելու օժանդակ միջոցներից է: Այն ուղեկցում է խոսքին, ուժեղացնում, ընդգծում է նրա արտահայտչականությունը: Կարող է լինել սպոնտան կամ կեղծված:[2]

3. Տակտիլ հաղորդակցում. Տակտիլ հաղորդակցումը մեծ դեր է խաղում մարդկանց կյանքում: Է. Հոլլի կարծիքով՝ հաղորդակցման այս տեսակը հանդիսանում է ամենաանձնավորվածը, և նրա ճիշտ օգտագործումը սոցիալական ճիշտ ադապտացիայի հիմքն է հանդիսանում: Միջանձնային տակտիլ արտահայտությունները համարվում են մարդկային հաղորդակցման հնագույն և բազային տեսակներից մեկը և պատահական չէ, որ նորածինների մասին ուսումնասի-

---

[1] Տե՛ս **Крейдлин Г. Е.,** Невербальная семиотика, Москва, 2002.
[2] Տե՛ս **Экман П.,** Психология эмоции, Питер;СПБ, 2010

բություններում նշվում է, որ հպումը համարվում է երեխայի նորմալ զարգացման և լավ ինքնազգացողության նշան:[1]

4. Պրոքսեմիկա. Մարդու տարածական վարքն ուսումնասիրող ճյուղը կոչվում է պրոքսեմիկա: Տերմինը գործածության մեջ է մտցրել Է. Հոլլը և տվել է հետևյալ բացատրությունը. «Պրոքսեմիկան գիտության ճյուղ է, որը հետազոտում է անձնական և համընդհանուր տարածքը, և մարդու՝ դրա ընկալումը, ինչպես նաև այն, թե ինչպես է մարդն անգիտակցաբար կառուցում իր վարքը տարածության մեջ, երբ հաղորդակցվում է մարդկանց հետ»[2]:

5. Կինեսիկա/մարմնի լեզու. Հիմնականում արտահայտվում է մարմնի տարբեր մասերի միջոցով՝ դիրք, ժեստեր, դիմախաղ, գլխի շարժումներ, ոտքի շարժումներ և այլն: Տարբեր երկրներում միևնույն ժեստը կամ դիրքը տարբեր հաղորդագրություններ փոխանցելու համար են օգտագործում:

6. Վոկալիկա/պարալինգվիստիկա. Ձայնային էֆեկտներն ուղեկցում են մեր բառերը: Ձայնի տոն, արագություն, բարձրություն, ձայնի տեսակ, դադարներ, հնչյունների ինտենսիվություն. սրանցից յուրաքանչյուրն ունի իր իմաստը: Դրանք խոսում են մարդկանց հույզերի մասին և վոկալիկան ուսումնասիրում է հենց այդ առանձնահատկությունները[3]:

Կարելի է կարծել, թե ոչ վերբալ տարրերի նշանակությունը համընդհանուր է բոլորի համար, սակայն տարբեր մշակույթներում միևնույն ժեստը կամ արտահայտությունը կարող է ունենալ տարբեր նշանակություն, որի մասին տեղեկություն չունենալը կարող է հանգեցնել միջմշակութային կոնֆլիկտների: Հատկապես բազմազան է ողջույնի ժեստը, որը տարբեր մշակույթներում ունի ամենատարբեր արտահայտման ձևերը, ինչպես օրինակ՝ գլխի շարժումները, ձեռքը թափահարելը, հոնքերը բարձրացնելը, համբույրը, գրկախառնվելը, լաց լինելը և այլն:

Մի շարք երկրներում ընդունված է բարևելիս թափահարել կամ սեղմել դիմացինի ձեռքը, իսկ օրինակ Բալիում մարդիկ միմյանց բարևում են խորը շունչ քաշելով: Մոնղոլիայի, Բիրմայի և Լապլանդիայի ժողովուրդները՝ որպես ողջույնի ժեստ, իրարից հոտ են քաշում: Ամազոնի բնակիչները միմյանց բարևելիս թեթև հարվածում են դիմացինի մեջքին: Ֆրանսիացիները ջերմ բարևելիս 3 անգամ համբուրում են դիմացինի այտերը, իսկ տիբեթցիները՝ լեզու են ցույց տալիս միմյանց[4]:

Միջմշակութային առանձնահատկության վառ օրինակ է հանդիսանում 2005թ.-ի հունվարին տեղի ունեցած դեպքը, երբ համացանցում հայտնվել էր մի հայտարարություն, որտեղ ասվում էր, որ նորվեգացիները շոկահարված և բարկացած են, քանի որ իր ելույթներից մեկի ժամանակ Ջորջ Բուշ կրտսերը ցույց է տվել ցցված ցուցամատ և ճկույթ, որն իրենց երկրում հանդիսանում է սատանիս-

---

[1] Տե՛ս **Бутовская М.Л.,** Язык тела:Природа и культура, М., 2004

[2] Տե՛ս նույն տեղում, էջ 223

[3] Տե՛ս **Лабунская В. А.,** Невербальное поведение(социально-перцептивный подход), Р., Из-во Ростов, 1986

[4] Տե՛ս **Pogosyan M.,** Non-verbal communication across cultures, Psychology Today, 2017.

տական նշան: Այնուհետև պարզ դարձավ, որ ոչ միայն Նորվեգիայում, այլև բոլոր սկանդինավյան երկրներում, այդ ժեստը նշանակում է «սատանի պոզեր»: Իսկ օրինակ Ամերիկայում, այդ ժեստը օգտագործում են ռոք երաժիշտները և նրանց երկրպագուները:

Լայն տարածում գտած «V» ժեստը նույնպես ունի մի քանի նշանակություն. Եվրոպական մի շարք մշակույթներում այս ժեստն ունի կրկնակի նշանակություն՝ «Հաղթանակ» կամ «Երկու»: Սակայն տարբեր երկրներում այս ժեստն ընկալվում է տարբեր ձևերով: Ավելին, այս ժեստի նույնիսկ փոքրիկ փոփոխությունը կարող է արմատապես փոխել նրա իմաստը: Անգլիայում, Նոր Զելանդիայում և Ավստրալիայում, V-ն հաղթանակի խորհրդանիշն է միայն այն դեպքում, երբ ափը ուղղված է դեպի դուրս, իսկ եթե ափն ուղղված է դեպի ներս, ապա այն ստանում է վիրավորական բնույթ և նշանակում է «լռի՛ր» կամ «դո՛ւրս կորիր»:

Դժվար է պատկերացնել, բայց տարբեր երկրներում նույնիսկ ծափահարություններն ունեն իրենց առանձնահատկությունները: Մենք ծափահարում ենք, որպեսզի հայտնենք մեր գոհունակությունը: Ծափահարությունը կարող է լինել երկար և  ակտիվ, բայց կարող է լինել նաև կարճ և հանգիստ: Ի վերջո, ամեն ինչ կախված է իրադարձության տեսակից և մեր բավարարվածության աստիճանից:

Հետաքրքիր է ամերիկացիների և գերմանացիների գոհունակության արտահայտումը. Նրանք դա արտահայտում են բռունցքով կամ ոտքերով որևէ ամուր մակերեսին հարվածելով: Հաճախ հանդիսատեսի կողմից պարզապես բռունցքով սեղանին ուժեղ հարվածել տեսնելը՝ բանախոսի համար լավագույն գնահատականը կարող է լինել:

Արաբները, ովքեր գոհ են բանախոսի խոսքերից, մատներով հարվածում են բանախոսի ափին: Այդպես նրանք արտահայտում են կատարվածի մասին իրենց գոհունակությունն ու համաձայնությունը: Իսկ օրինակ ֆրանսիացիներն իրենց գոհունակությունն արտահայտում են մի շատ էլեգանտ քայլով. նրանք 3 մատների ծայրերը մոտեցնում են շուրթերին, այնուհետև պարզում են դրանք դեպի զրուցակիցը[1]:

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրելով մի շարք հոգեբանների հետազոտություններ, կարող ենք անել եզրակացություն, որ ոչ վերբալ հաղորդակցման տարրերն այդքան կարևոր են համարվում, որովհետև ոչ վերբալ հաղորդակցությունը կատարվում է ենթագիտակցորեն և սպոնտան, և, ի տարբերություն խոսքերի, մարմնի լեզուն գրեթե անհնար է կեղծելը: Հաճախ մենք մարդկանց մասին կարծիք ենք ձևավորում առաջին հայացքից ունեցած տպավորության հիման վրա, որն էլ իր հերթին պայմանավորվում է ոչ վերբալ տարրերով, օրինակ՝ ժեստեր, քայլվածք, դեմքի արտահայտություն, շարժումներ և այլն: Ինչպես նաև ոչ

[1] Տե՛ս **Adetunji R.R.,** Understanding Non-verbal communication across cultures, Researchgate, 2012

վերբալ հաղորդակցման տարրերի ճանաչումն օգնում է խուսափել միջմշակութային հակամարտություններից:

Այսպիսով, որպեսզի մտերիմների, գործընկերների կամ պարզապես զրուցակցի հետ հարաբերություններում հնարավոր լինի հասնել որոշակի դրական արդյունքի, ինչպես նաև խուսափել միջմշակութային կոնֆլիկտներից, պետք է ճանաչել ոչ վերբալ հաղորդակցման առնվազն բազային մակարդակի գիտելիքները, որոնց մի մասը ներկայացված է տվյալ հոդվածում:

**Բանալի բառեր** - ոչ վերբալ հաղորդակցություն, ժեստեր, դիմախաղ, մարմնի լեզու, մշակույթ

**Эмилия Атанесян, Суть и культурные особенности невербальной коммуникации** - В статье описывается сущность, значение и виды коммуникации. Основной упор сделан на невербальной общение. Представлены его функции, основные виды, элементы и некоторые факторы важности. Здесь также представлены основные межкультурные различия в невербальной коммуникации, некоторые примеры и роль этих различий в процессе коммуникации. Статья основана на трудах и статьях П. Экмана, М. Лабунской, г. Андреевой и ряда других авторов.

**Emilia Atanesyan, The essence and cultural features of non-verbal communication** - The article describes the essence, importance and types of communication. The main emphasis is on non-verbal communication. Its functions, main types, elements and some factors of importance are presented here. It also presents the main cross-cultural differences in non-verbal communication, some examples and the role of these differences in the process of communication. The article is based on writings and articles by P. Ekman, M., Labunska, G. Andreeva and several other authors.

# ԽԱՆԴԻ ԵՎ ԻՆՏԵԼԵԿՏԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ՎՊՀ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող
E-mail: gayush.kirakosyan.95@mail.ru

Խանդը գոյություն ունի, քանի դեռ շփվում և հարաբերակցում ենք միմյանց հետ: Ժամանակակից աշխարհում, մարդկային փոխհարաբերությունների ուսումնասիրությունը փաստում է, որ խանդի դրսևորման աստիճանը կարող է փոխվել, ելնելով անհատի ինտելեկտուալ զարգացման մակարդակից:

Ներկա ժամանակներում պատանիներին բնորոշ են խանդի որոշակի դրսևորումներ, ինչն էլ կապված է մարդու ինտելեկտուալ զարգացման մակարդակի հետ: Խանդի էությանն անդրադարձել են այնպիսի հեղինակներ, ինչպիսիքեն՝ Ե. Պ. Իլինը, Լոպե Դե Վեգան, Յ. Ն. Մոշկինան, Մ. Միդը և այլք[1]:

Խանդը հոգեվիճակ է, որն առաջացնում է մի շարք հույզեր և վարքային խանզարումներ: Խանդը մարդու կյանքի անբաժան մասն է կազմում և յուրաքանչյուր անձ իր կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ առնչվում է խանդի հետ:

Մեր կողմից կատարած տեսական ուսումնասիրության և փորձարարական հետազոտության արդյունքները հնարավորություն տվեցին եզրակացնելու, որ խանդը դիտվում է որպես հոգեվիճակ, որն առաջացնում է մի շարք հույզեր:

Ըստ Ե. Պ. Իլինի խանդի դրսևորումներից են՝ նեգատիվ զգացմունք, տանջող կասկածներ, կասկածներ կապված՝ սիրո, հավատարմության, կապվածության հետ և այլն: Խանդի տարածված տեսակներից են՝ բռնատիրական խանդ, պրոյեկտված խանդ, պաթոլոգիական խանդ որոնք կարող են ունենալ դրսևորման տարբեր պատճառներ: Խանդի առաջացման պատճառներ կարող են լինել, ինչպես՝ մրցակցությունը, ինքնավստահության ձգտումն, այնպես էլ մի շարք ենթադրյալ կասկածներ[2]:

Ինտելեկտը դրսևորվում է բոլոր իմացական պրոցեսներում և չի հանգեցվում դրանցից որևէ մեկին[3]:

Ըստ Քեթթելի, մեզնից յուրաքանչյուրն ի ծնե ունի պոտենցիալ ինտելեկտ, որն ընկած է մեր մտածողության, դատողության և վերացարկման ընդունակությունների հիմքում: Ինտելեկտը դիտվում է նաև, որպես մարդու կողմից շրջապատող միջավայրի պայմաններին արագ և հեշտ հարմարվելու ընդունակություն: Այս տեսակետը արտահայտել է Վ. Շտեռնը, ով նշում էր, որ ինտելեկտը նոր

[1] http://ladyfromrussia.com/karnaval/spor/kachuk.shtml?fbclid=IwAR1sB7SEyqyjGt7S4jgySlYRU6xGZbXa_Tx82HxSJ0AqqtV8re2dcQ3yoJs , 10.04.2019թ

[2] **Ильин Е.П.** " Психология любви". - СПб; 2013, стр. 121-123

[3] **Նալչաջյան Ա. Ա.,** Հոգեբանական բառարան, Երևան-1984թ. , էջ 29

պայմաններին, գործունեության տեսակներին հարմարվելու որոշակի ընդհանուր ընդունակություն է[1]:

Ցանկացած ինտելեկտուալ գործողություն ենթադրում է սուբյեկտի ակտիվություն և գործողության կատարման ժամանակ ինքնակառավարման առկայություն:

Լ. Լ. Թերսթոունն առաջիններից մեկն էր, ով ձևակերպում է ենթադրությունն այն մասին, որ ինտելեկտը համարվում է ոչ միայն ինֆորմացիայի վերամշակման, այլև նաև հոգեկան և վարքային ակտիվության կարգավորման մեխանիզմ[2]: Հուզական ինտելեկտի ընկալմանը շատ մոտ էր՝ Հ. Գարդները, ով անձնային ինտելեկտի շրջանակներում տարբերակում էր միջանձնային և ներանձնային ինտելեկտը: Նրա կողմից հակասությունների մեջ ընդգրկված ընդունակություններն ունեն անմիջական կապ հուզական ինտելեկտի հետ: Այսպիսով, ներանձնային ինտելեկտը նրա կողմից մեկնաբանվում է, որպես հասանելիություն՝ հուզական կյանքին, աֆեկտներին և հույզերին, ընդունակություն՝ անմիջապես հույզերը տարբերակելու, դրանք անվանելու, սիմվոլիկ կոդերը վերափոխելու և որպես ընկալման միջոցներ օգտագործելու, սեփական վարքը կառավարելու համար[3]:

Խանդի հոգեբանական առանձնահատկությունների և նրա տեսակների փորձարարական հետազոտությունն անց ենք կացրել Վանաձորի Հովհաննես Թումանյանի անվան պետական համալսարանում: Հետազոտության ընտրանքը կազմել է 30 ուսանող՝ 15 տղա, 15 աղջիկ. 2-րդ և 4-րդ կուրսերի: ՈՒսումնասիրության նպատակն է բացահայտել պատանիների շրջանում խանդի և ինտելեկտի փոխհարաբերակցության դրսևորումները: Որպես հետազոտության մեթոդներ ընտրել ենք՝ Ե. Պ. Իլինի «Խանդոտ ե՞ք արդյոք խանդի աստիճանի ախտորոշման մեթոդիկան», Ջ. Ռավենի «Պրոգրեսիվ մատրիցաներ» ինտելեկտի ախտորոշման մեթոդիկան: Ե. Պ. Իլինի «Խանդոտ ե՞ք արդյոք» ախտորոշման մեթոդիկան թույլ է տալիս բացահայտել խանդի դրսևորման աստիճանները, տարբեր իրավիճակներում[4]:

Ուսումնասիրելով հետազոտության մեթոդիկաները, պարզ է դառնում, որ վերը նշվածները, կարող են ճշգրիտ կերպով բացահայտել խանդի դրսևորման աստիճանը և ինտելեկտի զարգացման աստիճանը:

Խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտի զարգազման մակարդակի բացահայտման մեթոդիկաների արդյունքում պարզվեց, որ հետազոտվող պա-

---

[1] **Столяренко Л. Д.,** Основаы психологии: Практикум,-Ростов н/Д.: Феникс, 2006, стр. 88

[2] **Холодная М. А.,** Психология интеллекта,- СПб.; Питер, 2002, стр. 68-69

[3] **Люсин, Д. В.** Современные представления об эмоциональном интеллекте // Социальный интеллект: Теория, измерение, исследования / Под ред. Д. В. Люсина, Д. В. Ушакова. – М.: Изд-во "Институт психологии РАН", 2004. С. 29–36

[4] https://psy.wikireading.ru/61120 , 15.04.2019

տանիների մոտ առկա է խանդի դրսևորման բարձր աստիճան՝ 55 %, մինչ դեռ ինտելեկտը գտնվում է զարգացման միջին մակարդակում՝ 45 % :

Կիրառել ենք Սպիրմենի համահարաբերակցական վերլուծությունը[1]: Համահարաբերակցության գործակիցը ըստ Սպիրմենի հաշվում են հետևյալ բանաձևով.

$$\rho = 1 - \frac{6 \times \sum (D^2)}{n \times (n^2 - 1)},$$

որտեղ - ը

ուսումնասիրվող փոփոխականների զույգերի թիվն է, իսկ կարգերով տարբերությունների քառակուսիների գումարը:

Վերջին փուլում վերլուծելով և մեկնաբանելով կիրառված մեթոդիկաների, ինչպես նաև արդյունքների համահարաբերակցական վերլուծության օգնությամբ պարզեցինք, մեր կողմից ուսումնասիրվող երկու երևույթների՝ խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտուալ զարգացման մակարդակի միջև գոյություն ունեցող փոխադաձ կապը:

Ամփոփելով ընտրանքի մեջ ընդգրկված պատանիների հետազոտության արդյունքները՝ կարող ենք հավաստել, որ խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտի զարգացման մակարդակի միջև առկա է հակադարձ համեմատական կախվածություն: Որքան ցածր է ինտելեկտուալ զարգացման մակարդակը, այնքան բարձր է խանդի դրսևորման աստիճանը և հակառակը. որքան բարձր է ինտելեկտուալ զարգացման մակարդակը, այնքան ցածր է խանդի դրսևորման աստիճանը: (տես՝ գրաֆիկ 1-ում)




**Գրաֆիկ 1.** Խանդի և ինտելեկտի համահարաբերակցությունը պատանեկության տարիքում

Արդյունքներից պարզ է դառնում նաև, որ իգական սեռի ներկայացուցիչների մոտ խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտուալ զարգացվածության մա-

[1] http://www.infamed.com/stat/s05.htm/ 22.04.2019

կարդակի միջև առկա համահարաբերակցության արդյունքներն ավելի բարձր են տղաների մոտ: (տես՝ գրաֆիկ 2-ում)




**Գրաֆիկ 1.** Խանդի և ինտելեկտի համահարաբերակցության արդյունքները աղջիկների և տղաների մոտ պատանեկության տարիքում

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեսական ուսումնասիրությունների և փորձարարական հետազոտության արդյունքները հնարավորություն տվեցին կազմել հետևյալ եզրակացություննե-րը.

1. Ամփոփելով, կարող ենք ասել, որ խանդը հոգեվիճակ է, որն առաջաց-նում է մի շարք հույզեր: Խանդի հետևանքով կարող են առաջանալ նաև վարքա-յին խանգարումներ: Ինչպես հայտնի է հնագույն մշակույթներում խանդի զգա-ցումը բացակայում է: Խանդի հիմնական դրսևորումներից են՝ նեգատիվ զգաց-մունք, տանջող կասկածներ, կասկածներ կապված դիմացինի հավատարմության հետ, կասկածներ սիրո հանդեպ և այլն: Ներկայիս ժամանակաշրջանում, խանդը կրում է մասսայական բնույթ, որպես հոգեբանական ֆենոմեն:

2. Այսպիսով, ըստ իրականացված ուսումնասիրությունների, խանդն ունի դրսևորման տարբեր ձևեր և առաջացման զանազան պատճառներ: Նշվածն են փաստում՝ պրոյեկտված խանդ՝ հավատարմության մեջ սեփական տենդենցիա-ների, պրոյեկցիայի արդյունք, վիրավորված ինքնասիրություն՝ առաջանում է ցածր ինքնագնահատական ունեցող, անհաջողությունը և վտանգը ճափազանցող մարդկանց մոտ, սուբյեկտային սենզիտիվ խանդ՝ խանդի սուբյեկտը վախենում է կորցնել կողակցի ուշադրությունը և այլն: Նշվածների համար հիմք կարող են հանդիսանալ նաև՝ ենթադրյալ կասկածները և անվստահության զգացումը դի-մացինի նկատմամբ: Խանդի ցանկաած տեսակ հետագայում դառնում է զույգերի բաժանման պատճառ:

3. Ընդհանրացնելով՝ կարող ենք նշել, որ ինտելեկտը մարդու մտածողութ-յան պրեցեսի բաղկացուցիչն է, որը խիստ անհատական է: Ինչպես նաև կարող ենք հավաստել, որ յուրաքանչյուր անհատ ի ծնե ունի պոտենցիալ ինտելեկտ,

որն ընկած է նրա դատողության, մտածողության և վերացարկման ընդունակությունների հիմքում:

Մարդու ինտելեկտի զարգացման վրա ազդում են ոչ միայն ժառանգականությունը, այլև արտաքին սոցիալական միջավայրը՝ դաստիարակությունը, կրթությունը, մշակույթը, անհատի սոցիալական կարգավիճակը: Ինտելեկտը բազմակողմանի է և գործունեության տարբեր ոլորտներում դրսևորվում է առանձնահատուկ ձևով:

4. ՌԻսումնասիրելով հետազոտության մեթոդիկաները՝ պարզեցինք, որ դրանք կարող են ճշգրիտ կերպով բացահայտել խանդի դրսևորման աստիճանը և ինտելեկտուալ զարգացման մակարդակը:

5. Վերլուծելով և մեկնաբանելով կիրառված մեթոդիկաների, ինչպես նաև արդյունքների համահարաբերակցական վերլուծության օգնությամբ պարզեցինք մեր կողմից ուսումնասիրվող երկու երևույթների՝ խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտուալ զարգացվման մակարդակի միջև գոյություն ունեցող փոխադաձ կապը: Այսպիսով, փորձարարական հետազոտությունը հնարավորություն տվեց գալ այն եզրակացության, որ՝ պատանիների շրջանում անց կացված հետազոտության արդյունքները, հավաստում են, որ խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտի զարգացման մակարդակի միջև առկա է հակադարձ համեմատական կախվածություն: Որքան ցածր է ինտելեկտուալ զարգացման մակարդակը, այնքան բարձր է խանդի դրսևորման աստիճանը և հակառակը. որքան բարձր է ինտելեկտուալ զարգացման մակարդակը, այնքան ցածր է խանդի դրսևորման աստիճանը: Արդյունքներից պարզ է դառնում նաև, որ իգական սեռի ներկայացուցիչների մոտ խանդի դրսևորման աստիճանի և ինտելեկտուալ զարգավածության մակարդակի միջև առկա համահարաբերակցության արդյունքներն ավելի բարձր են, քան տղաների մոտ:

Ուսումնասիրության սկզբում առաջ քաշված վարկածը հաստատված է:

**Բանալի բառեր** - խանդ, հույզ, զգացմունք, ինտելեկտ, հուզական ինտելեկտ, սեր, հավատարմություն, կասկած:

**Гаяне Киракосян, Есперимeнтальное исследование взаимоотношении ревности и интелекта -** Анализируя и трактуя используемые методики и с помощю интерпритации сровнительных результатов мы выяснили проявление уровня ревностьи и уровня интеллектуального развития. В юношеском возросте между ними существует обратная сравнительность. Чем низок уровень интеллектуального развития, тем выше уровень проявлениия ревностьи и наоборот.

У представителей женского рода результаты сровнительности между уровнем проявления ревности и уровнем интеллектуального развития более высоки, чем у представителей муржкого рода.

**Gayane Kirakosyan, The Manifestations of Intercorrelation of Jealousy and Intellect in Adolescence -** Thus the experimental research has given the opportunity to conclude that the results of the study among teenagers confirm the existence of the revers comparative dependency between two phenomena. The lower the level of intellectual development, the higher the degree of jealousy and the opposite. The level of jealousy and the level of intellectual development are higher among female representatives than among boys.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նալչաջյան Ա.Ա., Հոգեբանկան բառարան, Երևան-1984թ.

2. Ильин Е.П. " Психология любви". - СПб; 2013

3. Люсин, Д.В. Современные представления об эмоциональном интеллекте // Социальный интеллект: Теория, измерение, исследования / Под ред. Д. В. Люсина, Д. В. Ушакова. – М.: Изд-во "Институт психологии РАН", 2004. С. 29–36.

4. Столяренко Л. Д., Основаы психологии: Практикум, - Ростов н/Д.: Феникс, 2006

5. Холодная М.А., Психология интеллекта,- СПб.; Питер, 2002

6.http://ladyfromrussia.com/karnaval/spor/kachuk.shtml?fbclid=IwAR1sB7SEyqyjGt7S4jgySlYRU6xGZbXa_Tx82HxSJ0AqqtV8re2dcQ3yoJs , 10.04.2019թ

7. https://psy.wikireading.ru/61120 , 15.04.2019

8. http://www.infamed.com/stat/s05.htm/ 22.04.2019

# ОБОЗРЕВАЯ УПРАВЛЕНИЕ МОЛОХА

**АРАМ МЕЛКОНЯН**
Магистрант кафедры психологии личности ЕГУ
E-mail: aram.melqonyan4@ysumail.am

Данная статья является обзором с точки зрения научности статьи «Под управлением Молоха»[1]Г. М. Шавердян, опубликованной в двадцать седьмом выпуске Вестника ЕГУ.

Молодые специалисты, которые делают свои первые шаги в науке и хотят вступить в научную среду, нуждаются в, некоторых, ориентирах, которые могут создать наиболее полное впечатление об актуальных проблемах в их области исследований. Такими ориентирами могут стать современные научные публикации и создаваемый ими научный дискурс. Тем не менее, в огромном массиве публикаций, можно встретить и такие, которые дискредитируют науку и могут напрочь отбить мотивацию студента или молодого ученного вести свои собственные исследования. В связи с этим возникает необходимость не только быть осведомленным о новых публикациях в своей области, но и, при ознакомлении с ними проявлять некоторую долю критичности, и помнить, что, даже нобелевским лауреатам, иногда свойственно ошибаться (таких примеров история знает не мало). Важно, чтобы молодые специалисты составили свое представление о науке основываясь на ее методологии и областей изучения, а не на авторитете конкретных людей. В последнем случае возникает опасность, а в некоторых случаях, еще и соблазн, зайти в области псевдонауки следуя за харизматичным лидером. В данной статье мы поставили цели предупредить молодых ученных, об опасностях такого рода, и разобрать один из примеров, мягко говоря,“манипуляций” в науке. Для выполнения данных целей, мы в нескольких предложениях опишем действующую парадигму науки, принятую большинством в научном сообществе.

Современная наука представляет собой сложный динамический конструкт, в социальной среде которой, ученые постоянно выдвигают новые гипотезы, постоянно собирают новые данные и пытаются создавать логические связи между выдвинутыми объяснительными моделями и набранными данными. С получением признания работы Карла Поппера научным сообществом, ученные еще и обязуются создавать логические связи и объяснительные модели таким образом, чтобы их можно было не только проверить полученными данными, но и

---

[1] **Шавердян Г. М.,** 2018. “Под управлением Молоха”, Вестник Ереванского государственного университета, общественные науки, философия и психология No 3 (27), 43-57

опровергнуть их другими данными, которые не будут совпадать с исходными. В таких случаях ученый вынуждается изменить свою исходную гипотезу, в пользу той, которая наиболее эффективно объясняет вновь полученные данные и свидетельства. Причем не всегда и не всякий человек может быть в состоянии отказаться от своих исходных представлений, что было показано экспериментально, и получило название склонность к подтверждению[1]. Тем не менее К. Поппер утверждает, что, для сохранения научности своих взглядов, ученный должен оставаться на стороне фактов, и не должен интерпретировать реальность в соответствии со своими фантазиями: "Всякий раз, когда «классическая» система сегодняшнего дня сталкивается с результатами новых экспериментов, которые, согласно моей точке зрения, можно интерпретировать как фальсификации, конвенционалист не будет считать эту систему поколебленной"[2] и далее, Поппер, обращаясь прямым текстом, говорит: "Исследователям, особенно в области социологии и психологии, следует постоянно выступать против попыток использовать новые конвенциональные уловки – попыток, к которым часто прибегают, например, специалисты по психоанализу"[3]. Таким образом, Карл Поппер, в своей книге "Логика научных исследований" обосновывает, что не всякое суждение следует считать научным, или научно обоснованным, и что гипотезы и теории, которые претендуют на научность, должны пройти проверку как минимум на достоверность и фальсифицируемось.

В дальнейшем, опираясь, в том числе, и на работу Поппера, Томас Кун предлагает ввести в науку систему парадигм, которые он описывает как "признанные всеми научные достижения, которые в течение определенного времени дают научному сообществу модель постановки проблем и их решений"[4] и далее как"общность установок и видимая согласованность, которые, представляют собой предпосылки для нормальной науки. (…..) В каком-то смысле общепризнанная парадигма является основной единицей измерения для всех изучающих процесс развития науки"[5]. Парадигмы могут изменятся в течении времени, путем, накопления массива новых данных, в том случае, если данные не согласуются с общепринятыми на тот момент объяснительными моделями.

В виду постоянно увеличивающих свои объемы научных публикаций, возникает необходимость как можно точнее и ясно определять понятия о которых

1 **Wason P. C.**,"On the failure to eliminate hypothesis in a conceptual task" Quarterly Journal of Experimental Psychology, (1960). 12:3, 129-140

[2] **Поппер, К. Р.** Логика научного исследования. Республика. (2005) С. 107

[3] Там же, Стр. 110

[4] **Кун, Т.** Структура научных революций. Рипол Классик. (1975) С. 11

[5] Там же, С. 29

